

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ ★ ՓԵՏՐՈՒՄ—ՄԱՐՏ 1900 ★ ԹԻ 4—5

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու հասկանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիկզորքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞մէ հոգիին չմարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած յձին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Վ. ՄԻՇԼԵ

Ա Ձ Դ Ե Ր

Շատերը մեզի կը գիտեն գնելու համար մեր ֆրանսերէն հրատարակութիւնները :
Կը խնդրենք որ զանոնք աւելեալ փափաքողները հաճին ուղղակի գիմել Մե.ֆիւռ սը Թոսանսի
գրավաճառանոցը :

Ահաւասիկ գրքերուն ցանկը եւ գրավաճառանոցին հասցէն .

- L'Arménie**, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. TCHOBANIAN,
avec une introduction par ANATOLE FRANCE 1 fr.
- Les Massacres d'Arménie**, témoignages des victimes, (Traduction de A. TCHOBANIAN)
avec préface de GEORGES CLEMENCEAU. 3 fr. 50
- Zeitoun**, depuis les origines jusqu'à la grande insurrection de 1895, par AGHASSI,
traduction de A. TCHOBANIAN, avec préface de VICTOR BERARD. 3 fr. 50

Librairie du **MERCURE DE FRANCE**

15, RUE DE L'ÉCHAUDÉ-SAINTE-GERMAIN. — PARIS.

Ր Ա Յ Յ Ի

« ԴԱԻԻԹ ԲԵԿ » Ա. Բ. Գ. հատոր վերջաբանով եւ « ԿԱՅՄԵՐ » լրակատար :

Իւրաքանչիւրի բաժանորդագիրն է 5 շիլին : Լոյս կը տեսնեն ներկայ 1900 թւի ընթաց-
քում եւ կ'ուղարկուին բաժանորդներին որպէս « Մամուլ » ը եղաւ : Բաֆֆիի միւս երկերը ու-
նենալու համար ցանկացողները պիտի գիմեն մեզ : Կարելի է ստանալ Խրիմեան Հայրեկի Մե-
րենցի եւն գրքեր :

Ամեն տեսակի գիմում կամ պատուէր պիտի ուղղել հետեւեալ հասցէին՝

M^{ME} RAFFI

47, UXBRIDGE ROAD

SHRIBRIDGE BUSH

LONDON W.

ԱՂԿԱՅԻՆ ԵՐԿՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ՅԱԿՈՒ ՍԻՍԱԿ

Դիմել է 2 ֆր .

Դիմել հետեւեալ հասցէներուն՝

Mme Raffi LONDON

S. Ovardjianian ROUSCHUK (Bulgarie)

ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՐԱՊԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

— 0 0 —

Այս օրերս ընդունեցայ գրքոյի մը որ կը պարունակէ առաջին տեղեկագիրը Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան :

Քիչ հրատարակութիւն: Ինծի այնչափ ուրախութիւնն ու զոհունակութիւնն պատճառած է որչափ այդ համայնագրակիրը Եւրոպայի հայ ուսանողութեան հաւաքական կեանքին : Անկից կրած տպաւորութեանս մասին երկու խօսք ընկը ոչ միայն ինծի համար հաճոյք մը պիտի բլլայ ամենէն սիրուն տեսակէն, այլ եւ առիթ մը մեր նոր սերունդին նկատմամբ կարգ մը նկատողութիւններ յայտնելու :

Հաճոյքը զոր այդ հրատարակութիւնն ինծի պատճառեց, անոր գեղեցկագիտական փայլէն չի ծնիր անշուշտ տեսակը խմբագրուած է պայծառ ու ժուժկալ ոճով մը, բայց լեզուով մը որ, անմաքուր ու խորթ, գեւ կը պահէ «կասսա»ի, «գիւքուսիտ»ի, «պրորլեմ»ի, «չկուլա»ի, «եւոլիւցիա»ի, «րեֆերատ»ի պէս անիմաստ օտարաբանութիւններ եւ «պոլիտիկանիկուսում»ի, «վաւերացնուելուց»ի պէս քերականական ձեւեր որոնք խեղճ Եւրոպական մասն պիտի փնջապահէին սարսափէ : Հաճոյքը զոր այդ տեսակն ինծի ազդեց, բարոյական շատ գեղեցիկ, շատ կազդուրիչ երեւոյթին մէջ կը կայանայ որ երեւան կուգայ այնտեղ եւ զոր ամբողջ հայ ազգը պէտք է հրճուանքով ու հպարտութեամբ ծափահարէ :

Այս աւերումի, տարադիւտումի ու շուարումի օրերուն մէջ ուր մեր ժողովուրդը կը թաւալտի, եղերական ու քստմնելի վայրկեանի մը երբ անհատական վէճերը, կուսակցական գրգռութիւնները, կրքի պառակտումները մեզ կը պատռեն, ահաւասիկ խումբ մը երիտասարդ Հայեր որոնք գեւ ու եւ կուսակցութեան չեն պատկանիր, որոնք միմիայն «Հայ» են տակաւին, որոնք գեւ գործունէութեան մէջ չեն մտած ու իտէալին անշահախնդիր ու խանդոտ ոլորտին մէջ կ'ապրին, եւ որոնք կ'որոշեն քով քովի գալ, նպատակ ունենալով «բարոյական եւ մտաւոր հաղորդակցութեան մէջ պնել հայ ուսանողական խմբերը եւ ուսանողները, ասոնց իրարու հետ անձնական ծանօթութիւններ հաստատելուն նպատակ եւ ընդհանուր իտէալներ արթնցնել ուսանողներուն մէջ», ու կը կազմեն ուսանողական եղբայրակցութիւն մը ամբողջ Եւրոպայի մէջ, կը կազմակերպեն սարեկան գումարումներ ուր կը վիճին մարդկային ու սոցալային ամենաշահական հարցերու մասին, եւ հիմա կը հրատարակեն հաշուետուութիւնը իրենց երեք տարուան ճիգերուն, հաշուետուութիւնն որուն վերեւ կը գրօշեն մեր սքանչելի Պեշիքթաշլեսունին յանկերգը՝

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Հայրցիկի ուսանողական խմբակը որ այս գաղափարը յղացաւ եւ անոր գործադրութեան նախաձեռնութիւնն ունեցաւ, հայ ժողովրդին պատմութեան մէջ իրաւունք ունի իրեն յատուկ էջ մը գրաւելու, էջ մը գորովագին դրուատանքի :

Տեղեկագիրը կը պարունակէ, համառօտ յա-
 ուջարանէ մը յետոյ որ Ուսանողական Մի-
 ութեան ծնունդը կը պատմէ եւ նպատակը կը
 բացատրէ, մանրամասն համարատուութիւնը
 երկու համագումարներուն, որոնց առաջինը
 տեղի ունեցեր է Հայտելպերկ, 1897 ապրիլ
 12էն 15ը, երկրորդը՝ դարձեալ Հայտելպերկ
 1899 մարտ 27էն 31ը, յետոյ Եւրոպայի զա-
 նազան քաղաքներու մասնաւոր ուսանողական
 նընկերութեանց գործունէութեանը վրայ ծա-
 նօթութիւններ, վիճակագրական ցուցակ մը
 Եւրոպայի հայ ուսանողներուն՝ իրենց ծը-
 նընդալլայրին, նախնական դպրոցին եւ ուսած
 մասնաճիւղին նշանակումովը, ու վերջապէս՝
 Հայ Ուսանողական Ընդհանուր Միութեան
 կանոնագիրը:

Ինչ որ առաջին նայուածքով ուշադրութիւն
 կը գրաւէ այս Տեղեկագրին մէջ, Ֆրանսայի
 հայ ուսանողներուն անգոյն, գրեթէ անգոյ,
 մասնակցութեան բաժինն է Գերմանիոյ եւ
 Զուիցերիոյ հայ ուսանողներուն այս ընդ-
 հանուր գործունէութեանը մէջ: Գաղափարը
 յղացողն ու զայն գործադրողը Լայպցիկի ու-
 սանողութիւնը եղած է. առաջին երկու հա-
 մագումարներուն ներկայ գտնուած են 20—30
 Գերմանիոյ եւ Զուիցերիոյ ուսանողի ղէմ՝
 2—3 Ֆրանսայի ուսանող. այդ 2—3էն ոչ
 մէկը բանախօսութիւն չէ արտասանած:
 Աւելին կայ. Բարիզի հայ ուսանողութիւնը
 որուն յանձնուած էր 1898ի համագումարը
 կազմակերպել, իր անխղճամտութեան հասնող
 անհոգութեամբը պատճառ եղած է այդ երկ-
 րորդ համագումարին վիժմանը, եւ Պերլինի ու-
 սանողութիւնն է որ զայն կազմակերպած է 99ին:

Վիճակագրական մասին մէջ Գերմանի-
 ոյ եւ Զուիցերիոյ հայ ուսանողներու մասին
 լիակատար տեղեկութիւններ կը գտնենք. Ֆը-
 րանսայի ուսանողները եւ ոչ իսկ նեղութիւնը
 յանձն առած են իրենցմէ խնդրուած մանրա-
 մասնութիւնները զրկելու, եւ իրենց բաժինը
 անկատար ու խառնակ է: Տեղեկագիրը չորս
 էջ կը նուիրէ Պերլինի, Լայպցիկի, Միւնխի
 եւ Յիւրիխի ուսանողական մասնաւոր ընկե-
 րութիւններուն գործունէութեանը. Պերլինի
 ուսանողները 1897ին փափաք կը յայտնեն
 «ուսանողական սնտուկ» մը հիմնել նպատակ
 ունենալով «փոխառութեամբ օգնել այն
 Հայերուն որոնք եկած են Պերլին ուսանելու»:
 Երկու երեք պարոններ 600 մարք կը նուիրեն
 այդ նպատակին համար, եւ փափաքը իսկոյն

կ'իրագործուի. «ուսանողական սնտուկ»ը
 այժմ գոյութիւն ունի, իր կանոնագրութեամբ
 ու գործադիր մարմնովը: Նմանապէս, Պերլինի
 ուսանողները 1898ին կը հիմնեն «ուսանողա-
 կան գրական միութիւն մը» նպատակ ունե-
 նալով «մտերմական ծանօթութիւններ եւ մը-
 տաւոր շփում յարաջ բերել Պերլինի հայ ու-
 սանողներուն միջեւ»: 1898—99 կիսամեակին
 այդ միութիւնը ունեցած է ինը հաւաքում,
 որոնց մէջ գասախօսութիւններ կարդացուած
 են այլ եւ այլ նիւթերու վրայ (Հայոց աշխար-
 հիկ երգեցողութեան մասին 19րդ դարուն,
 Երկու խօսք ժամանակակից հայրենասիրու-
 թեան մասին, Փր. Նիցչէ եւ իր աշխարհա-
 յեացքը, Տաճկահայ կիներ, Ընտանիքի անտե-
 սական եւ ընկերական նշանակութիւնը, եւն):
 Դարձեալ, Պերլինի ուսանողներէն խումբ մը
 1897ին կը հիմնէ նիւթապաշտական ընկերու-
 թիւն» մը, նպատակ ունենալով «ի մի գու-
 մարել նիւթապաշտական հայեցողութիւն ու-
 նեցող ուսանողները եւ մտքերու փոխադարձ
 շփումով պարզել այդ աշխարհայեցողութեան
 վերաբերեալ կէտեր».
 այդ ընկերութիւնը
 1897—98ի ձմեռնային վեցամսեակին մէջ ու-
 նեցած է տասնվեց, 1898 ամառը երկու եւ 98
 —99ի ձմեռը՝ վեց հաւաքում, որոնց մէջ կար-
 ցացուած են նիւթապաշտական իմաստասօ-
 բութեան վրայ հիմնուած գասախօսութիւն-
 ներ (Մեր սպասելիքները մանրէաբանական
 քրիմագիտութիւնէն, Գաղափարապաշտական
 եւ նիւթապաշտական աշխարհայեցողութիւնը
 պատմութեան մասին, Հասարակութիւն եւ
 մտաւորական զասակարգ, Մարքո եւ Մարք-
 սականութիւնը, եւն):

Լայպցիկի ուսանողները շատոնց ի վեր ու-
 նին «հայ ճեմարանական ընկերութիւն» մը,
 որ 98—99ի ձմեռնային վեցամսեակին տասեր-
 կու գասախօսութիւն սարքած է (Բոյսի եւ
 մարդու յարաբերութիւնը հայ բանաստեղծու-
 թեան մէջ, Հայոց լեզուի ուսումնասիրութիւնը
 Եւրոպայի մէջ ըստ համեմատական լեզուագի-
 տութեան, Վրաց եկեղեցւոյ բաժանումը Հա-
 յոց եկեղեցիէն իր նախորդ եւ յետորդ հան-
 գամանքներով, Քոնֆուցիոս եւ Չինական լա-
 նաստեղծութիւն, եւն):

Յիւրիխի ուսանողութիւնը, սր դեռ սակա-
 ւաթիւ է, ունեցած է միայն երկու գասախօ-
 սութիւն, 97—99ի վեցամսեակին:

Բարիզի հայ ուսանողութիւնը կը փայլի իր
 բացարձակ բացակայութեամբը տեղեկագրին

այս բաժնին մէջ . եւ սակայն առանց Պերլինի ու Լայպցիկի ուսանողներուն ընդարձակ ու կանոնաւոր գործունէութիւնն ունեցած ըլլալու, Բարիզի ուսանողները այս վերջին երկու երեք տարուան մէջ մէկ քանի ճիգեր փորձեցին , մէկ քանի հաւաքում, երեկոյթ, դասախօսութիւն կազմակերպեցին . բայց տեղեկագիրը խմբագրող մասնախմբին ասոնց ցուցակը երկտողով մը զրկելու պարզ քաղաքավարութիւնն անգամ չեն ունեցած :

Չորս տարիէ ի վեր Բարիզ գտնուելով , այստեղի հայ ուսանողութեան բարոյական ու մշտաւորական կացութիւնը շատ մօտէն կը ճանչնամ, ու եւ է նորութիւն չի բերեր ինծի այս Տեղեկագիրը : Բայց հայ ուսանողութեան երկու կէսերուն հանրային կեանքի արմատական տարբերութիւնը , այս զուգահրութեամբ բնութարէն շեշտուած , ուժգին ցաւ մը կը պատճառէ ինծի, — երբ մանաւանդ կը խորհիմ որ Բարիզը հայ ժողովրդին ուսանողական ամենէն մեծ , ամենէն վառ կեդրոնը եղած է ատենով , եւ թէ նոյն իսկ այսօր հոս է որ կը գտնուի Հայոց ամենէն բազմաթիւ , եթէ ոչ ամենէն գործօն , ուսանողութիւնը :

Չորս տարիէ ի վեր , Բարիզի Ուսանողաց Միութիւնը կը ներկայացնէ անկերպարան , անկենդան , անկադակից մասնէն մը ողբալի տեսարանը : Եւ ոչինչ աւելի կ'ընտոս է քան մեկնութիւնն այս երեւոյթին : Բարիզի հայ ուսանողութիւնը այս վերջին չորս տարուան մէջ ունեցաւ մէկ քանի շատ փայլուն անհատականութիւններ , եւ այդ տեսակէտէն նկատելով , Բարիզի հայ ուսանողութիւնը , մտաւորապէս , շատ աւելի բարձր արդիւնք մը տուաւ քան ուրիշ երկրական քաղաքի հայ ուսանողութիւն . կը բաւէ յիշել Մանուէլեանը եւ Շահինը , որոնք Եւրոպայի գիտական ու գեղարուեստական շրջանակներուն մէջ արդէն հանրածանօթ անուններ են , Քօլօլեանը , որ բարիզեան բժշկական ամսաթերթերու կ'աշխատակցի , Մետրոպեանը որ առաջին հանդիսացաւ գիտութեանց « լիսանս » ի մրցման մէջ , Փահթաճեանը որուն ճարտարապետ-արուեստադէտիսիդընաւորութիւնը գեղեցիկ ապագայ մը կը խոստանայ , ու Նարճանեանը , Արսէնեանը , Արտաւազը , Պարթեւեանը , եւն , որ գրական թանկագին յատկութիւններու առաջնորդը տուին : Այս անուններէն դուրս , գիտեմ Բարիզի մէջ բաւական թուով հայ ուսանողներ , շատ ուշիմ ու աշխատասէր , որոնք իրենց մաս-

նագիտութիւնը լրջաբար ուսումնասիրելու վրայ են : Եւ սակայն , այն « ամբողջութիւն » որ այս փայլուն միութիւններէն կը կազմուի , հրէշային քառսի մը շուարնցնող պատկերը կ'ընծայէ : Հաւաքական գործունէութեան տնկարողութիւն , կազմակերպութեան ոչիւր բացարձակ պակաս , մէկ մասին մէջ հանրային գործերու համար գայթակղեցնող անտարբերութիւն , ուրիշ մասի մը մէջ՝ կուսակցական պառակտումներ , եւ ամենուն մէջ՝ անձնական պըզտիկ անխմաստ ջղոտութիւններէ , վէճերէ առաջ եկած գծտութիւններ , անաւասիկ ինչ որ կը դանենք այս տարրին մէջ՝ երբ զայն իր ամբողջութեանը մէջ նկատենք : Ու ոչինչ այնքան տխուր ու միանգամայն այնքան զաւեշտական է որքան տեսարանը այս խումբ մը շատ օժտուած Հայերուն , որոնք անկարող կը հանդիսանան ժողովավայր մը պահելու եւ պարբերական հաւաքումներ կանոնաւորապէս սարքելու ողորմելի գործն ի գլուխ հանելու մէջ : Այս երեք չորս տարուան մէջ երկու երեք մեծ երեկոյթներ տրուեցան եւ ութը-տասը բանախօսութիւններ կատարուեցան Ուսանողական Միութեան անուամբը , բայց ըստ ինքեան միշտ ոչ-ուսանողներ են եղած որ այդ երեկոյթներուն ու բանախօսութիւններուն պաշտօնաբար յղացած եւ գործադրութիւնը մեծագոյն մասամբ զիւրացուցած են . եւ երբեմն , այդ զաղափարներուն իրագործման մէջ՝ նոյն իսկ ուսանողներն են որ արգելքի տարրը բերած են . 1898ի շատ գեղեցիկ մեծ-երեկոյթը որուն մասնակցեցան Մուսէ-Սիւլի , Ռամօ , Անժել , Տիկին Սըկոն-Վեպեա , եւ որուն յայտագիրը կազմակերպած էին ոչ-ուսանողներ , վիժեցաւ եւ 800 ֆրանքի պարտք մը ծանրացուց Միութեան վզին՝ միմիայն մէկ քանի ուսանողներու տգէտ յամստութեանը պատճառով որով պնդեցին գրական ու երաժշտական երեկոյթին կցել մեծածախս պարահանդէս մը : Ու չորս տարիէ ի վեր տարի մը չէ պատահած որ Միութիւնը կանոնաւորապէս պահպանած ըլլայ իր ժողովարանը , հարուստ գաղթականութեան մը եւ բազմաթիւ ուսանողութեան մը մէջ , ժողովարանի մը պահպանման համար հարկաւոր եղած խեղկատակ գումարը Միութիւնը միշտ անկարող եղած է հայթայթել . ու մէկէ աւելի անգամներ վարձքին երկարատեւ անվճարութիւնը Միութեան գոյքերը ծախելու կամ փողոցընտելու սպառնալիքին մղած է ժողովարաններու տանտէրները . . . Չորս

սարիէ ի վեր Միութիւնը տասնուչորս զիւան
 փոխած է, ու կացութիւնը միշտ կը մնայ
 նոյնը. այն վարկեանին ուր կը գրեմ, Միու-
 թիւնը պարաքի տակ է նորէն, ու չի գիտեր ուր
 պատասպարէ իր գոյքերը. իր գոյքե՛րը... Եթէ
 կարելի է այսպէս անուանել հաշմանդամ սե-
 զան մը, քանի մը հիւանդ աթոռներ եւ ցա-
 ւազին մնացորդները ատենով բաւական հա-
 ռուստ եղած գրադարանի մը որ տարիներու
 ընթացքին մէջ, անգոյ հսկողութեան մը շը-
 նորհիւ, իր երկու երրորդէն թեթեւցած է :
 Նորընտիր Դիւանները միշտ սկսած են խան-
 զոտ բարի-կամեցողութիւն մը ցոյց տալով,
 բայց այդ եռանդը մէկ երկու ամիսէն աւելի
 տեւած չէ, ու ձանձրացած՝ Դիւանները հրա-
 ժարած մէկգի քաշուած են, սեղի տալով ու-
 րիշներու որոնք միեւնոյն պատմութիւնը
 կրկնած են : Ոչ մէկ Դիւան պէտք եղած համ-
 բերութիւնը, անձնու իրութիւնը, հաստատումը-
 տութիւնը չէ ունեցած՝ որպէսզի հակառակ ամէն
 դժուարութեան եւ նեղութեան, Միութեան
 կազմակերպութիւնը տեւական հիմերու վրայ
 դնելէ յետոյ միայն պաշտօնէ քաշուելու որո-
 շումը տար : Ուսանողներու ամսավճարներն ու
 դաղթականներու նուիրատուութիւնները կա-
 նոնաւորապէս հաւաքելու գործը, — անհրա-
 ժեշտ պայմանը Միութեան տեւականութեան,
 — երբեք չէ մտածուած լուրջ կերպով միան-
 դամ ընդ միշտ կազմակերպել . երբեք ժողովա-
 սրահը չէ ունեցած իր որոշ ժամերը ուր փա-
 փաքողները գային լրագիրները, հանդէսներն
 ու գրքերը կարգալու, եւ ամէն անգամ որ ոչ-ու-
 սանողներու գրգու մը պակասած է, բանախօսու-
 թեանց եւ երեկոյթներու շարքը դադրած է :
 Ուսանողներու մեծամասնութիւնը իրերու
 այս խայտառակ վիճակին առջեւ պահած է
 միշտ եւ մինչեւ հիմա կը պահէ զիւրազան-
 դական անտարբերութիւն մը, ուսանողնե-
 րէն մաս մը երբեք չի մասնակցիր այդ հաւա-
 քական գործունէութեան, ուրիշ մաս մը ցան-
 ցառ եւ գրեթէ ակամայ ներկայութիւն մը կը
 քաշկոտէ երեկոյթներուն ու բանախօսութիւն-
 ներուն, բայց անմիջապէս կը շոգիանայ եւ
 կը ցնդի՝ երբ խնդիրը դրամ վճարելու գայ :
 Ուսանողական մարմնոյն մէջ պատահած ամե-
 նէն վրդովիչ դայթակղաղէպքերուն հանդէպ,
 նո՛յն անտարբերութիւնը, վեց-եօթ ամիս ա-
 ռաջ՝ սուտ-ուսանող մը, Պ. Թոքաթեան, Պերլի-
 նի մէջ բարեգործական նպատակներու պատըր
 ուակով Հայերէ եւ օտարներէ 700 մարքի չափ

գումար մը շարթած ու օր մը յանկարծ մեկ-
 նած էր. Պերլինի ուսանողութիւնը անմիջապէս
 բոլոր հայ լրագիրներուն յայտարարութիւն մը
 զրկեց, պարտաւելու համար այդ պարոնին
 վարմունքը եւ, ուրիշ քաղաքներու ուսանող-
 ութիւնը զգուշացնելու համար . Բարիզ, Ալ-
 թունեան մը ամիսներով դնաց, առանց Միու-
 թեանէն պաշտօն ստացած ըլլալու, Ֆրանսայի-
 ներէ դրամ հաւաքեց հայ ուսանողութեան ս-
 նունով, ու ոչ մէկուն հաշիւ չտուաւ . Բարիզի
 հայ ուսանողութիւնը չբողոքեց . Քալֆայեան
 մը, որ Թիֆլիսէն զրկուած էր դերասանու-
 թիւն ուսանելու համար, իրբեւ «Պոլսոյ թատ-
 րոնին հոշակաւոր ողբերգու» «Օթելլո» ներկա-
 յացուց եւ մեզ ծիծաղելի դարձուց . Բարիզի
 հայ ուսանողութիւնը անշարժ մնաց . խոմը
 մը երիտասարդներ պարահանդէս մը տուին՝
 յանուն Հայ Ուսանողութեան՝ ընդ նախագա-
 հութեամբ երեւակայական իշխանի մը, յայ-
 տարարելով թէ երեկոյթին արդիւնքը Հայաս-
 տանի կարօտեալներուն պիտի զրկուէր, եւ
 երեկոյթէն յետոյ ոչ մէկուն հաշիւ չներկա-
 յացուցին . Բարիզի հայ ուսանողութիւնը չգրա-
 դեցաւ ատով : Այս բոլորը կ'ապացուցանեն որ
 Բարիզի մէջ կան հայ «ուսանողներ», բայց թէ
 «ուսանողութիւն մը», կազմակերպուած կեն-
 դանի մարմին մը, գոյութիւն չունի սակաւին :
 Այս անկարգութեան եւ անտարբերութեան
 պատճառները կ'նձոտոտ բայց անըմբռնելի չեն :
 Անոնք որ կը կարծեն թէ ատի ֆրանսական
 ազդեցութեան արդիւնքն է, կը սխալին չարա-
 չար . Ֆրանսական ուսանողութիւնը աշխարհիս
 ամենէն սքանչելի կերպով կազմակերպեալ ըն-
 կերութիւններն ունի եւ մշտական, կանոնա-
 ւոր կենսականութեան մը սպացոյցներ տուած
 է միշտ : Անոնք որ կը կարծեն թէ իրերու
 այս վիճակը Տաճկահայոց կրած վերջին դըմ-
 բաղութեանց Բարիզի ուսանողներուն վրայ
 բերած բարոյական ու մանաւանդ նիւթական
 վնասներուն հետեւանքն է, կը սխալին դար-
 ձեալ . անշուշտ՝ Ֆրանսայի հայ ուսանողներէն
 շատերուն կացութիւնը խախտեցաւ վերջին
 դէպքերէն ի վեր, բայց անոնցմէ մեծ մասը
 եթէ սրճարանի մէջ ծախսած դրամին մէկ
 քառորդը յատկացնէր Միութեան, միմիայն
 այդ կը բաւէր Միութեան էական ծախ-
 քերն ապահովելու . իսկ վերջին աղէտներուն
 «բարոյական» ազդեցութիւնը Հայութեան ամէն
 մասերուն վրայ արտայայտուեցաւ կորովի,
 գործունէութեան, խանդի բազմապատկումով

մը, եւ ցաւալի կ'ըլլար եթէ իրօք միայն Ֆրանսայի հայ ուսանողներն ըլլային մեր ազգեւորներէն ջլախտաւոր թուլացման մէջ ինկած: Ըստ իս՝ ճշմարիտ պատճառները երկուք են, նախ՝ այն որ Ֆրանսայի հայ ուսանողներն ամենամեծ մասամբ թրքահայ են, եւ թրքահայերը՝ թրքական խառնակ միջավայրին ազդեցութեամբ՝ հանրային գործունէութեան անկարողութիւնն ունին ընդհանրապէս. երկրորդ՝ այն որ Ֆրանսայի մէջ, ու մանաւանդ Բարիզ, մեր ուսանողները կը կրեն ոչ թէ Ֆրանսայի, կամ Բարիզի ներքին կեանքին, բուն ֆրանսական կեանքին ազդեցութիւնը, այլ «փողոցի կեանքին» ազդեցութիւնը, որ բնաւ միեւնոյն բանը չէ, եւ որ կը մեղկացնէ, պարսպոյ ժամերուն մեծագոյն մասը դէպի հաճոյքը կը տարտղնէ, եւ ազգային շքանակի մէջ հաւաքական ունէ գործունէութիւն ձանձրանալի կը դարձնէ: Ռուսահայ ուսանողները, ուսական բարքերէն ազդուած, ընկերութիւններ կազմելու եւ դասոնք տեւեցնելու ձեւը տղայութենէ սորված են, ատի իրենց նախնական դաստիարակութեան մաս կը կալմէ. երբ կուգան Գերմանիա կամ Զուիցերիա, այնտեղ ալ, այդ երկիրներուն կեանքի ձեւին բերմամբը, սերտ յարաբերութիւն կ'ունենան տեղին եւ բոլորակ ընտանիքներուն եւ ուսանողներուն հետ, եւ այդ «եւրոպական բարքերը իրենց ուսանողական ընկերութեանց մէջ» փոխանցելը բնական աւ գիւրին բան մըն է իրենց համար: Մերինները կուգան, ընկերական կեանքի բոլորովին անվարժ, շատերը արհեստ մը կամ մասնագիտութիւն մը սորվելու եւ ժամ առաջ դրամ վաստկելու անհատական տարածութ նպատակով մը միայն, Բարիզէն կը ձանչնան միմիայն իրենց պանդոկի սրահը, համալսարանը եւ սրճարանները, ունէ յարաբերութիւն չեն հաստատեր ֆրանսացի ընտանիքներու հետ, նոյն իսկ, — եւ այս է ցաւալին — ունէ կապ չեն ունենար ֆրանսացի ուսանողական խումբերու հետ. ֆրանսական կեանքէն ուրիշ բան չեն իւրացներ բայց եթէ համասարանի դասերը եւ սրճարանի բարքերը: Այս կէտին վրայ կ'արժէ մասնաւորապէս կանգ առնել. իրողութիւն մըն է որ Բարիզի ֆրանսական ուսանողական ընկերութիւնները եւ ակումբները, — որոնց անդամներուն մէջ կան ճարտիներ, Չինացիներ, Պուլկարներ, Ռուսներ, Յոյներ, եւ նոյն իսկ Տաճիկներ, եւ ուր, մանաւանդ վերջին դէպքե-

րէն յետոյ, Հայերը կը սպասուէին եւ գրկաւ բաց պիտի ընդունուէին, — ո՛չ մէկ հայ անդամ չեն հաշուեր այս վայրկեանիս: Մեր թրքահայ ուսանողները իցենք իրենց մէջ կ'ապրին, ֆրանսական միջավայրերէն քաշուելու, հետու կենալու, անոնց կանոնաւորութեան, բարեկրթութեան պայմաններուն իրենց կիսավայրենի բարքերը ձկելէ խորշելու հակում մը ունին, զոր անկարելի է չնկատել եւ չողբալ: Ասոր համար է որ թրքահայ ուսանողները կարող չեն կազմակերպութիւն մը սեւական դարձնելու. կարող չեն, որովհետեւ չեն գիտէր «կազմակերպութիւնը» իր գիտութիւնը եւ օրէնքներն ունի, զոր պէտք է սորվիլ: Ատեն մը, Բարիզի հայ ուսանողներուն ժողովները անտանելի կ'ախտերու շարք մըն էին, որովհետեւ ատենապետը բռնաւորի ձեւ կ'առնէր ու ժողովականները վիճելու «քաղաքակիրթ» դրութեան բացարձակապէս անգիտակ էին. պահ մըն ալ ժողովները բոլորովին ասրբեր կերպով խառնափնթոր ընթացք մը ստացան, որովհետեւ խումբ մը ուսանողներ գէշ հասկըցուած անիշխանականութեան մը կամ ազատասիրութեան մը ծիծաղելի կերպով սխալ կիրարկումովը ջնջեցին ատենապետի, քարտուղարի, գանձապահի պաշտօնները, չմտածելով որ ատենք ունէ ընկերութեան կանոնաւոր պաշտօնավար կանոնադրութեան գործիքներն են: Եւ, — կը կրկնեմ, — դեռ ոչ մէկ դիւան չկրցաւ գործնական սխալ մը գտնել գաղթականներէն եւ ուսանողներէն ամսականներու վճարումը կանոնաւորապէս դանձելու, — ինչ որ շատ գիւրաւ կը յաջողի ու վստահաբար այդպէս կը շարունակուի՝ եթէ անգամ մը որոշ դրութիւն մը ընդգրկուի եւ յստակօրէն, յարատեւօրէն գործադրուի. միշտ, եւեք չորս ամսուան անհոգութենէ յետոյ, դիզուած պարտքի մը առջեւ՝ դիւանը կը սթափի, հանգանակութիւն կը բանայ, ձանձրոյթ կը պատճառէ անդամներուն, ինք անոնցմէ աւելի կը ձանձրանայ այդ «պարտք վճարողի» դերէն, ու քայքայումը կը վերսկսի: Անգամ մը, ի յիշատակ Արուսեանի տրուած երեկոյթէն յետոյ, երբ այդ ուրիշով՝ Բարիզի հայ գաղթականութիւնը, երեկոյթէն շատ գոհ մնացած ըլլալով, մէկ քանի հարիւր ֆրանքի նուէր մը ըլլաւ Ռուսանողական Միութեան, վայրկեան մը յուսացի որ Միութիւնը պիտի կարենար, այս բարոյական ու նիւթական յաջողութիւնէն կազդուրուած, վերջնական կանոնաւորութիւն

մը մէջ մտնել , այդ օրերուն, Պ. Էրնէսթ Լավիս
 Ինծի կը խօսէր օտար ուսանողներու ընկե-
 րութիւններուն կանոնաւոր կազմակերպ-
 ման եւ Ֆրանսական ուսանողութեան ընդ-
 հանուր ընկերակցութեան հետ կապակցմանը
 մասին , գաղափար որուն ինքը սրտանց յարած
 է եւ որուն յաջողմանը համար բոլոր ուժովը
 կ'աշխատի . իմ յոյսերուս վերայ միամտօրէն
 կրթնած , վստահացուցի Պ. Լավիսը թէ հայ ու-
 սանողները օտար ուսանողութեանց մէջ առա-
 ջիններէն պիտի ըլլային իր ծրագրին իրակա-
 նացմանը մասնակցող : Յոյսերս յոյսի վիճակին
 մէջ մնացին անկից ի վեր , — եւ եթէ յոյսի
 վիճակին մէջ ալ կրցան մնալ , պատճառը լոկ
 այն է որ ծայրայեղօրէն յամառ եմ իմ տեսակ
 մը յոյսերուս մէջ : Կը բաւէ որ խումբ մը ու-
 սանողներ հարկաւոր ճիգը ընեն՝ նախ գործին
 որոշ գիտակցութիւնը կազմելու , եւ յետոյ
 հարկաւոր հաստատամտութիւնը եւ անձնուի-
 բութիւնը ունենան զայն լրջօրէն ձեռք առ-
 նելու եւ ամէն գծուարութիւն արհամարհե-
 լով զայն մինչեւ վճռական յաջողումն առաջ-
 նորդելու : Ասոր համար , պէտք է որ Բարիպի
 հայ ուսանողներն իրենց հաւաքական արժա-
 նապատութեան զգացումն ունենալ սկսին .
 կը մաղթեմ որ Եւրոպայի Հայ Ուսանողական
 միութեան այս տեղեկագիրը , իրենց աչքին
 առջև գնելով Գերմանիոյ եւ Զուլցերիոյ ու-
 սանողներուն կանոնաւոր գործունէութեան
 պատկերը , ներշնչէր իրենց այն բարերար ա-
 մօթը , որ կրնայ զիբրէնք մղել իրենց թու-
 լութենէն , իրենց երկպառակութիւններէն եւ
 իրենց անկարգութենէն դուրս ելլելու եւ իրա-
 գործելու այդ անհրաժեշտ ուղղակիանօրէն
 զիբրին բանը որուն բացարձակապէս կարող
 են եթէ ուղին :

Այս բոլոր նկատողութիւններէս պէտք չէ եր-
 բեք հետեւցնել թէ ուսանողական կեանքին
 մէջ «ստաջնակա ք» կարեւորութիւն մը կ'ըն-
 ծայիմ հաւաքական գործունէութիւններուն :
 Յայտարարած եմ արդէն , ու միշտ կը մտածեմ
 թէ ուսանողին ուժերուն մեծագոյն մասը պէտք
 է յատկացուի «անհատական» զարգացման , ընտ-
 բուած մասնագիտութեանը բոլորանուէր մշակ-
 ման . եւ այդ տեսակէտով , մեր տաճկահայ ուսա-
 նողները , իրենց մեծամասնութեան մէջ , միշտ
 գովկոտի արժանի են եղած եւ այս միջոցիս են
 առաւել քան երբեք : Միայն կ'ուզեմ շեշտել

որ թէպէտ երկրորդական լայց նոյնքան «ան-
 հրաժեշտ» պէտք մըն է ուսանողներու համար
 ունենալ «հաւաքական կեանք» մը ուր
 իրար ճանչնալու , իրարու հետ հազարակ-
 ցելու եւ գործակցելու , իրարու հետ ընդ-
 հանուր գաղափարներով զբաղելու հաճոյքն ու
 բարիքը վայելին : Ռուսահայ ուսանողութեան
 մէջ շատ աւելի եղբայրական բարքեր , վար-
 մունքի շատ աւելի բարեկրթութիւն , ազնուու-
 թիւն գիտած եմ եւ շատ աւելի «ընդհանուր
 զարգացում» , հանրային խնդիրներու շատ
 աւելի մեծ շահագրգռութիւն քան թրքահայ
 ուսանողներուն մէջ , որովհետեւ ռուսահայ ու-
 սանողները նուազ կ'զգիցայ . ծ կ'ապրին , ընկե-
 րական կազմակերպուած բարքեր ունին , եւ
 քաղաքակրթութեան այն տարրական աստի-
 ճանին արդէն հասած են ուր կարելի է ժողովք
 մը ընել առանց կոռւի , առանց հայհոյանքնե-
 րու փոխանակութեան , առանց աննպատակ
 վիճարանութեանց , եւ եզրակացութեան մը ,
 արդիւնքի մը յանգելու կարելիութեամբ :
 Բարիքի հայ ուսանողութիւնը կը կազմուի
 փոքր փոքր խմբակներէ որոնք իրար գրեթէ
 բնաւ չեն ճանչնար , եւ իրար չճանչնալը իրար
 ատելու կը հասցնեն՝ յաճախ սոսանց որոշ
 պատճառի :

Հանրային խնդիրներով եւ հաւաքական գոր-
 ծունէութեամբ չափազանց զբաղիլը վնասակար
 է հայ ուսանողին անհատական զարգացմանը .
 լայց բոլորովին կ'զգիցեալ ապրիլը նոյնչափ
 վնասակար է իր ընկերական եւ ազգային նկա-
 րագրին կազմութեանը . ամիսը երկու անգամ
 զաստիասութիւն մը , տարին անգամ մը երե-
 կոյթ մը ուր ուսանողութիւնն ու գաղթակա-
 նութիւնը իրարու հանդիպին , եւ ժողովակար-
 մատենադարան մը որ շաբաթը մէկ քանի օր
 որոշ ժամերու բաց ըլլայ՝ հսկիչ ուսանողի
 մը ներկայութեամբը , եւ ուր ուսանողները
 նրթան խօսակցիլ , իրար ճանչնալ , թէյ մը
 առնել , լրագիրները թղթատել , ասի ո եւ է
 քաղաքի հայ ուսանողութեան համար կենսա-
 կան պէտք մըն է , ինչպէս սիրաբ անհրաժեշտ
 օսկան մըն է մարմնոյն կեանքին համար : Արդ
 պէտքին լրացումը թրքահայ ուսանողութեան
 եւ ապագային՝ թրքահայ հասարակութեան,
 բարքերուն մէջ ամենակարեւոր բարեփոխում
 կրնայ յառաջ բերել :

Թրքահայ ուսանողներու մէջ «հաւաքական
 յատկութեանց» այս նշանակելի պակասը ցուցը»

նելէ յետոյ, արդարեւ նկատեմ միեւնոյն ասան դիտել տալ որ ուսանայ ուսանողներն ալ ճիշդ հակասակ պակասութիւնն ունին, կամ ունենալ կը թուին: Ընկերական զարգացումը անոնց մէջ անհատական զարգացում մէն շատ աւելի տիրական տարածում ըստացած է, թերեւս երբեմն անհատական զարգացման արգելք ըլլալու չափ: Ռուսահայ ուսանողութեան ընկերական յատկութիւններն եւ ընդհանուր զարգացման ձգտումները զիտենք եւ կը գնահատենք, իրենց ստեղծած այս Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը եւ իրենց հրատարակած այս Տեղեկագիրը կը գովենք. բայց չենք դիտեր թէ այդ ուսանողները «անհատապէս» մինչեւ որ աստիճան ուժ ու տաղանդ ցոյց տուած են իրենց ընտրած մասնագիտութեանը մէջ: Գիտենք որ իրենցմէ մէկ քանին, — Գէորգ Մելիք-Կարապէտեան, Գ. Վանցեան, Վ. Նալբանդեան, Մ. Յովհաննէսեան, Արամ Չարբը, Ա. Ահարոնեան, եւն, — հայ մամոյ մէջ իրենց հրատարակած գրական կամ իմաստասիրական յօդուածներով իրենց մտաւորական զարգացման վրայ համակրելի գաղափար մը տուած են. բայց թէ ըստ այդ ուսանողներու մէջէն որո՞նք են որ իրենց մասնաճիւղին ուսումնասիրութեանը մէջ փայլուն դիրք մը դաւած են՝ օտարներու հետ մրցումով, որո՞նք են որ իրենց գրական, գիտական կամ գեղարուեստական ձեռքերը եւ ըրողական հասարակութեան գնահատման արժանի հանդիսացուցած են, որո՞նք են որ եւրոպական հանդէսներու կամ լրագիրներու մէջ ուսումնասիրութիւն մը կամ յօդուած մը կրցած են հրատարակել. այս մասին ո եւ է տեղեկութիւն չունինք: Արեւմտեան Հայոց մամուլը սովորութիւն ունի Եւրոպայի համալսարաններուն մէջ նշանակելի դիրք մը գրաւող հայ երիտասարդներուն ջանքերն ու ստացած արդիւնքն արձանագրել. շատ սիրուն սովորութիւն մըն է այդ զոր արեւելեան Հայոց մամուլը չէ ունեցած մինչեւ հիմա. Եւրոպայի հայ Ուսանողական Միութեան Տեղեկագիրն ալ այդ մասին ոչինչ կը պարունակէ, — եւ այդ բացակայութիւնը յատկանշական է եւ կը հաստատէ վերեւ ըրած դիտողութիւնս:

Ես կը կարծեմ թէ յաջորդ տեղեկագիրը կարեւոր պակաս մը լրացուցած կ'ըլլայ եթէ մասնաւոր բաժին մը յատկացնէ Գերմանիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Չեխոսլովակիոյ այն հայ ուսանողներուն որոնք այս վերջերս

իրենց մասնաճիւղերուն մէջ տաղանդի եւալստասիրութեան արտասովոր ապացոյցներ տուած եւ եւրոպական գնահատման արժանացած են:

Արդէն այս Ուսանողական Համագումարներուն մեծագոյն արգիւնքը այն պիտի ըլլայ որ ուսանայ եւ թրքահայ ուսանողութիւնները, իրարու հետ մտերմական շփման մէջ մտնելով, փոխադարձաբար պիտի օգտուին իրարու յատկութիւններէն ու իրարու թերութիւնները պիտի սրբագրեն. եւ ապի պիտի նպաստէ, աւելի հզօրապէս քան ուրիշ ո եւ է ջանք, արմատացի քեցելու միեւնոյն ազգին երկու կէտերուն միջեւ սպրդած կարգ մը անիմաստ թերբնացութիւններ:

Յանձնարար ուելու վերջին կէտ մը, ա' յն է որ մեր ըստ ուսանողութիւններն ընդհանրապէս՝ ուսանայ կամ թրքահայ, եւ Ուսանողական Միութիւնը մասնաւորապէս, միշտ նախանձախընդիր ըլլան իրենց զուստաւորական» գոյնը պահպանելու, եւ պաշտօնական մասնակցութիւն չունենան ո եւ է քաղաքական գործունէութեան: Շատ բնական, նոյն իսկ անհրաժեշտ է որ անձնաւոր ուսանող հետաքրքրուի մեր տոնային հարցերովը, անհատապէս այս կամ այն ուղղութեան, այս կամ այն կուսակցութեան նշանակելի համակրութիւնը. սակայն ատկից անդին անցնելու չեն ուսանողները. «գործնական» մասնակցութիւն ունենալու չեն քաղաքական գործունէութեան, — բաց իարտասովոր պարագաներէն, որոնք արդէն ուսանողը կը մղեն ճամբու մը մէջ ուր այլ եւս ուսանող ըլլալէ կը դադրի — Իսկ մասնաւոր իրենց ուսանողական ընկերութիւններուն համար ծնիւնակաւ պայտակ գնելու են «մտաւորականազգային» գործունէութենէ երբեք դուրս չելլել: Ասի ոչ միայն չի նուազեցնեն ուսանողութեան բաժինը մեր ազգային Զանգին մէջ, այլ ընդհակառակն յատուկ, որոշ, մասնաւոր ուժ մը կուտայ անոր: Ուսանողները խորհելու են որ իրենք ամենքն ալ, ամէն բանէ առաջ, սահմանուած են դառնալ Ռուսաստան կամ Տաճկաստան, ուր ունին կատարելու անհատական կամ ընկերական գեր մը, որ իրենց անկարելի պիտի դառնար եթէ քաղաքական գործունէութեան մը պաշտօնապէս մասնակցած ըլլային: Յետոյ, ու մասնաւոր, քաղաքական գործունէութեան ուղղակի ու գործ-

նապէս չմասնակցելը, կուսակցութեանց դրապէս կապուած ու դործակից չըլլալը, մտաւորական մաքուր եւ բարձր գոյնը անվթար պահելը, գերազանց ուժը պիտի ըլլայ Ուսանողին : Ուսանողը վաղուան Հայն է, որ գեռ պէտք չէ «գործիչ» դառնայ, այլ պէտք է ամէն բանէ առաջ «գործելու» կարող ըլլալու պատրաստուի, որ իրաւունք եւ պարտականութիւն ունի այս կամ այն ուղղութեան համակրելու, բայց պէտք չէ որ այս կամ այն կուսակցութեան դործակից դառնալով անոր կրքերը, կողմնակալութիւնները, ատելութիւններն ու մոլեռանգութիւնները այդչափ կանուխէն իւրացնէ . Ուսանողին անկուսակցականութիւնը մեծագոյն բարիքը պիտի դառնայ իրեն համար, եւ մեզի համար . ատով, ինքը լաւագոյն պայմաններուն մէջ պիտի գտնուի ազատ ու անկախ դատողութիւն մը եւ ստողջ, բարձրահայեաց նկարագիր մը իրեն կազմելու . ու ազգը այդ երիտասարդ, գաղափարապաշտ, կուսակցական ու

ղանդամոլութենէ դեռ դերձ սերունդին պիտի դարձնէ աչքը, լաւագոյն ու ազնուագոյն Հայութեան մը յոյսը ինչ մէջ վառ պահելու համար :

Հայ ուսանողը պէտք է գիտակցութիւնը ունենայ այս ամենուն : Այսօր մանաւանդ, այն դարհուրելի դժբաղդութիւններէն յետոյ որոնց մէջ անցաւ մեր ժողովուրդը եւ որոնց հետեւանքներուն մէջ դեռ կը քաշկրտուի, հայ ուսանողը պէտք է զգայ որ պարտքեր ունի կառարելու շատ աւելի բազմադիմի եւ շատ աւելի ստիպողական ու յուզիչ քան ուրիշ մեծ ու երջանիկ ազգերու ուսանողները : Հայ ուսանողը կոչուած է նորոգումի, զարմանումի, վերականգնումի հսկայ գործ մը կատարելու իր քայքայուած ու կիսամեռ ազգին մէջ . պէտք է որ ասոր պատրաստուի քաջութեամբ ու գիտակցութեամբ :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ՅՈՂՆՈՒԹԻՒՆ



ԱԿՈՒՄԻՏԻՆ ՀԱՄԱՐ

La chair est triste hélas! et j'ai lu tous les livres!
Fuir! là-bas fuir!...

STÉFANE MALLARMÉ

Հողիւս վրայ լուսինը կը ձիւնէ . . .

Օ՛րհէպ ի Խաւարներն ու Մոռացումը քալէ՛ ,
Ո՛վ յոգնած ու դանդաղ ու ծանր ուխտաւոր ,
Աղբիւրներու սա պայծառ տղուն հետ առանձին .
Ան հոնտեղերը մարմարէ մեհեաններ գիտէ
Ուր հինաւուրց աստուածները՝ ազնուօրէն զօրաւոր ,
Քու յոգնութիւնդ կը հասկնան . . .
Ու մարդկօրէն անոր մեծ ցաւը կ'ապրին . . . :
Աւա՛ղ, ա՛լ մինչեւ ե՛րբ մեր մարմինները տարիաւոր
Այսչափ տենդոտօրէն պիտի գալարուին . . .
Դէպ ի փայտէ դադաղները դարաւոր
Յաւիտենական ու ապարգիւն կեանքին ,
Վերջապէս իրիկուն մը մխրձելու համար . . .
— Թէեւ այնչա՛փ չարաշուքօրէն —
Արհաւիրքով լեցուն բայց փրկարար ծոցը հողին :
Գիտեմ՝ սքեմիդ մէջի վանականի իրանդ ոսկիէ ,
Շատ ապրած Աստուածի մը խոնջէնքը ունի .

Բարեմն եկո՛ւր խարանաչ ու խորունկ ու լուռ ու մերկ հարսերէն լեցուած
 Մեր գինիի նուիրական սափորը ա՛լ վար գնենք,
 Թէեւ ան մեր երգերուն խենթութիւնը կ'ըլլար...
 Ու այն բոլոր արշալոյսէ ծագիկները որ քաղեցինք,
 Անկարելի Պաշտամունքին համար...
 Այս բոլորը ձգենք, մեր կուրծքերուն ազամանդէ խաչերուն հետ,
 Ո՛վ բարեկամ ու բազապից ու հոյակապ քրմապետ...
 Այնպէս չէ՛, ես ալ այս բոլորը ճանչցայ,
 Բեզի հետ ա՛յնչափ ապարդիւնօրէն,
 Իմ սիրահար տղու խօլաթեւ իրիկուններու մէջէն,
 Արիւնտած ճակտիս գիմաց, անհունօրէն, առյաւէտ... :
 Ու արդէն աւազներու մոգերը ասողերուն տակ ըսին թէ,
 Հողին բոլոր գինիները ա՛լ մուխինդ պիտի ըլլան...
 Ու բոլոր կապոյտ շուշաններն ալ ձեր Յոյսի ծաղկանոցին,
 Ամէնը մէկ, յանկարծօրէն ազուաներու պիտի փոխուին... :
 Ու յետոյ գիտես որ բոլոր օձերը փեթակներուն տակ,
 Մեզի համար, այն սեւ անձրեւներէն ի վեր, հիմակ,
 Մահազուժօրէն վազուան մեղրը կը պատրաստեն... :
 Ու դեռ կարծեմ թէ գետնափորներուն մէջ է որ,
 Բոլոր բրուտները, մեռելներու հողերէն,
 Ո՞ր ժամանակէն ի վեր, ապրողներուն համար մինչեւ այսօր,
 Զուրի կուժեր կը շինեն... :
 Ու այն լամբարը որով ճնորքը կը հսկենք, մեր կտաւէ վրանին փակ,
 Ահաւասիկ քեզի կ'ըսեմ, Արշալոյսէն դեռ շատ առաջ պիտի մարի... :
 Օ՛, թեւզ թեւիս անցո՛ւր ու խարխափելէն քալէ՛,
 Ո՛վ ծանր ու դանդաղ ու յոգնած ուխտաւոր...
 Որովհետեւ վաղորդայնը անգթօրէն սուտ է...
 Ու մեր զգայախաբի ոտուքներն ալ յոգնած,
 Կեանքի մինչեւ Իրիկունները երթալու համար...
 Դէպ ի Խաւարներն ու Մոռացումը թափանցէ՛,
 Զուրերու երիտասարդ զաւկին հետ առանձին,
 Ու քու տարագիր ճամբորդի տառապանքը բոլոր,
 Ու այն աղջամուղջի դարերը զոր օրերը ուսերուդ վրայ յարկեցին...
 Այդ բոլորը ամէնը մէկ էնձի տուր...
 Ու միտիդ պատանքներն ալ հոգիիս վրայ նետէ...
 Թեւզ թեւիս անցուր ու քալէ, ծաւին հետ, հայրօրէն...
 Անոր վիրաւոր եղնիկի աչուքները իմաստուն,
 Կեանքին բոլոր ճամբաները գիտեն... :
 Հոգիիս վրայ լուսինը կը ձիւնէ... :

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ



ՍՈՒԹ ՏՈՒՆԸ

— 0 —

Չեմ կրնար ըսել թէ ինչպէս գուրս ելայ այդ Գերմանացուց մէջէն : Գարեջրոյ տակաոր պառկած կեցած էր սենեակին մէջտեղ , զալար ճիւղեր կը զարգարէին զայն , լիագեղուն փորը կը կանգնէր գոյնզգոյն ճրագներու լոյսին տակ որ ամէն կողմ կը շողշողէին : Պաշտելի տակաոր կը ծիծաղէր կարծես , կ'ուրախանար ուրախութեամբ բոլոր հրաւիրելոց՝ եւ անընդհատ կը բաշխէր իր գուարթ փրփուրը երբ կուգային բաժակներ կարկանդակ անոր . կանայք շուրջը կը վառնային , զարպաս կ'ընէին : Ահա ծորակը կը շրջէր , ուսուցիկ եւ ոսկեգոյն գարեջուրը գուրս կը վիժէր , ցնծութեան աղաղակներ յափշտակելով : Եւ կ'երգէին , ամենքը կ'երգէին : Պահ մը ձեռքս գլուխս տարի եւ անաճակտիս վրայ պսակ մը գտայ :—Այո՛ , թաւազարդուած էի ոսկեթղթէ փառքով : Միօրինակ յանկերգ մը անվերջանալի կրկնութեամբ ականջս կը չարչարէր : Ամենքն ալ իրարու վրայ կը հակէին եւ իրարու ականջն ի վար կը պոռային միեւնոյն երեք խազերը , մերթ ընդ մերթ ոտուընին գետին կը զարնէին աւելի զրգուելու համար իրենց ետանդը , կը կոփէին զիրար , կը ցատփէին , գիրկ կը տարածէին , խոշոր բերաններ կը բանային , կը խընդային — ի՛նչ երջանկութիւն :

Լոյսերը չուաններու պէս երկնցած էին : զաշնակ մը կը թնդար . ա՛խ այդ ձայնը — անդնդային որոտում մը սպառնալից կատաղութեամբ բաղմամբայն ճշերը կը խափանէր եւ հաղիւ երբեմն թեթեւ ծիծաղի մը թուիչքը կը յաշնդէր վեր բարձրանալ , բոպէ մը թըրթըռալ :

Ամենքը կը ժպտէին . ինչո՞ւ արդեօք : Ես ալ կը ժպտէի , որպէս թէ եզրայրական հրճուանքով ողողուած զաշխարհ սիրէի , բայց Աստուած վկայ՝ այդ պահուն բոլոր մարդիկ կ'ատէի : Ինձի կը թուէր թէ զիս կը յորդորէին կեղծ ուրախութեան մը անձնատուր ըլլալ եւ կը բարկանայի ատոր դէմ : Սակայն զաշնակը կը գոռար , գարեջուրը կը հոսէր , անա կը պարէին , եւ այդ տխմարները իրարու սիրոյ խօսքեր ալ կը մրմռային : Չէ՛ , ալ ծիծաղելի էր աս :

Յանկարծ պատին երկայնքը սկսաւ պատկերներու շարք մը երեւան ելլել . ծաղրանրկաբներ էին եւ ի՛նչ անաւոր ծաղրանկարներ . կնտակ պարոն մը , աթոռակի մը վրայ կանգնած , ձեռքք բռնած ճպտով վանոնք կը ցուցընէր , կը մեկնարանէր , կը ճառախօսէր՝ խեղկատակ ճոռմարանութեամբ . գլուխը բոլորովին անմաղ էր եւ կանթեղներու տակ թափանցիկ կ'երեւար :

— Լուսի՛նը , լուսի՛նը , կ'աղաղակէինք միաբարբառ :

Եւ անա երկայնածեւ սեւագոյն կերպարանք մը դժագրեցաւ նոյն պատին վրայ , բայց ուրուականի մը չափ երկայն մարգարէի ցնորակերպ գիտակ մը ունէր եւ կեռ մատուցըր մաւ մուկներու նման տծեւ էին :

Ընդհանուր ծիծաղ մը . Գուրս ես , ըսին ինձի , գուրս : Եւ ես ապշուածեամբ կը խնդայի : Ամէն կողմէ ծափ զարկին . կանայք խոնարհուած թիւններ կ'ընէին առջեւ , ստուերս կը զրգուէին գովեստներ ուղղելով անոր , եւ իրենցմէ մին քիթը ճմլեց պատին վրայ :

Անձնատիրութիւնս փայտայտուած , ինքզինքս վերին առտիճանի երջանիկ կը դաւանէի . կը լողայի ճաճանչներու եւ բերկրութեան մէջ . գարեջուրը կը հոսէր բերանս ի վար , կոկորդս փայտայտելով շողքորթաբար :

Բայց յանկարծակի ինքզինքս գուրս՝ փողոցը գտայ . ա՛լ խրախճանական զանլծին ճառագայթումը աներեւոյթ եղեր էր , սակայն դեռ եւս ականջիս կուգային բերանալիք քրքիջներ , եւ կ'ըսէի թէ արդեօք կը ծաղրե՞ն զիս : Չէի գիտեր որ կամովե՛ն գուրս ելեր էի ատկէց , թէ շատ մը զօրեղ բազուկներ բունս առօք փառօք գուրս հաներ էին զիս :

Սկսայ քալել : Անտարակոյս , կ'ըսէի , ծաղրեցին զիս : Եւ բուռնք կը ցուցընէի տանը՝ սաստիկ սպառնալով : Պսակս գլուխս չէր ա՛լ , իմ թղթէ պսակս . եւ սաստիկ ցաւ մը խոցոտեց հոգիս . կ'ափոտայի անախարհներ կորուստս . ալ ի՛նչ պատու ունէի . ինչպէ՛ս քարջ գայի այս երկրիս վրայ : Վա՛յ եւ աւ մօ՛թ ինձի :

Եւ քայլերս արագեցի . քաղաքը , մարդուութեան պատասպարանը , լուս ու մութ էր բոլորովին : Կագերը մարեր էին , կառք չկար . պղտոր աղօտ պաղպաղիւն մը միայն , ու բոլոր քաղաքը պղնձի կ'երեւար : Երկիւղ մը պաշարեց զիս , կը կարծէի թէ ամենայն ինչ ա՛լ մեռաւ . անհամար , գորշագոյն շէնքերը , փակ զաները , խոշոր պատուհանները , երկար սիւնները , խորհրդասոյզ՝ կը սպառնէին վերջնական կործանման : Ոտքիս տակ սալաքարերը կը թրնդային , եւ կը թնդային այնպէս ուժգնութեամբ որ ամբողջ ոտանքը կը զօղանչէր : Կարծես պարապ էր տակը :

Ես կամ միայն երկրիս վրայ՝ ըսի . չորս զիս նայեցայ : Ոչինչ կ'երեւար , աղբուրները լուեր էին , ամէն կողմ խորհրդաւոր խորշեր կը նըմարէի . հրապարակ մը առջեւս ելաւ՝ գերեզմանատան մը կը նմանէր , յետոյ ծառուղի մը ելաւ առջեւս . ծառերը սեւ ոսկորներու պէս ցցուած էին . ձիաքարշին երկաթի ճամբաները վեռուներու նման կը շողային :

Փոքրիկ շշուկ մը զարուերեցուց զիս — մարդ մը կը քալէր աներու տակ եւ տանիքներէ վար իջնող անձրեւի խողովակներ կը ծեծէր գաւաղանով մը : Եունս մըն ալ որ քովէն չէր գատուեր երեքք . ոտիւնս մը կ'ընէր յանկարծ , եւ որս մը կը յափշտակէր , մուկ մը՝ որ խողովակէն գուրս ցատքեր էր՝ շուաւ

բած : Ես սաստիկ խնդացի : բայց անծանօթ մարդը բերը խոշոր խոշոր բացաւ , հասակը երկնցաւ եւ սոսկալի հրէշ մը դարձաւ ան :

Ես սկսայ վազել , վազել : Կը ջանայի ժամ առաջ տուն մը մտնել ազատել . մերթ դրան մը զանգակը կը քաշէի , բայց թելը կը փրթէր եւ բացող չէր ըլլար . թշնամիս կը մօտենար , ցուպը ճօճելով , եւ շունն ալ կարմիր երախք մը փետեկած՝ արիւն կը կաթեցընէր , կը հեւար : Պալատան մը զանգակին կոճակը հրեցի , եւ նոյն պահուն , ո՛հ ի՛նչ բախտ , երկու դռնները երկփեղկեցան , եւ հազիւ թէ ոտքս բակը դրեր էի , աներեւոյթ զօրութիւն մը զանոնք կզպից :

Անդաստակը մութ էր , վեցանկիւնի փառաւոր լապտերը անլոյս էր , ոչ ոք կ'երեւար . խարխափելով կը քալէի — տունը անբնակ կը թուէր , եւ մէկէն իմէկ սոսկացի մ'վ բացեր էր գուռը :

Մանգուղ մը փնտռեցի , ապակեղէն դռներ անստոյգ փայլ մը կը թափէին եւ ընդարձակ մուտք մը կը տեսնէի առջեւ : սակայն չէի համարձակիր այդ խորհրդաւոր , վեհաշուք բնակարանը մտնել :

Այն ատեն անտեսանելի թաթ մը շալակս շօշափեց եւ հրամայեց .

— Պէտք է քալել վեր ելիր :

Դող մը թօթվեց զիս . ոչ միայն այդ շօշափումը տհաճելի էր , այլ սանդուղն ալ հիմայ այնչափ դժուարեւանելի դարձաւ՝ որ ծընկուռներս կը կտրտէին . թաւ դորդ մը կը ծածկէր զայն , եւ մշտադաւար առնակներ , գեղեցիկ արկղերով , արդարաւս , աստիճան աստիճան կը բարձրանային : Բռնադատեցի ինքզինքս եւ հեծեծելով վեր ելայ : Ընդարձակ սրահ մը իր խորին մթութիւնը կը բանար առջեւս , ոչ կահ ունէր եւ ոչ բնակիչ : Գետնաստիակը կը հնչէր : Ես կը քալէի զարմացած , կը ջանայի ելք մը գտնալ՝ երբ պատերը սկսան ճարճատիւ , փակ պատուհաններ բարախել , կարծես թէ բուք ու քամի կը փչէր անհամար ձերպերէ ու մոմոց մը կը սուլէր : Անծանօթ ձայներ բարձրացան .

— Ի՛նչչափ արտուր է այստեղը , ի՛նչչափ մութ է . ի՛նչչափ պիտի կարենաս այստեղ բռնակել , ո՛վ զատապարտեալ , վասնզի այստեղ պիտի բնակիս երկար ատեն եւ ձանձրութեան սիրտիանք պիտի չգտնես :

Ես ստամ , սարսափած , հազիւ կը հասկնայի այդ խօսքերը ու կ'ըմբռնէի ատոնց միտքը : Գունքերս կը թնդային եւ ակամայ ձեռուրներս առաջ երկնցուցի կարծելով թէ աներեւոյթ սղիններ երեսս պիտի փայփայեն :

Բայց ձայները լռեցին եւ քիչ ետքը նորէն սկսան .

— Դունք քեզ անծանօթ տեղ մը մտար եւ ասկէ պիտի ելլես երթաս շատ լալէ ու աղաղակելէ ետքը . պիտի անիծես եւ անաւոր բանտարկութիւնդ ոչինչ պիտի ամօքէ :

— Ո՞վ կը խօսի ինձի հետ , աղաղակեցի , աչուռներս խոշոր խոշոր բացած :

Ձայները նուաղեցան . եւ հիմայ ցեց մը միայն տախտակը կը մաշէր :

Խելագարի պէս վազեցի եւ սենեակին խորը զարկի ձեռուրներս . նայիս փետեկեցաւ , եւ ինքզինքս գտայ ուրիշ սրահ մը՝ աւելի մթին , աւելի երկիւղարեր , եւ սպիտակ երեւոյթք մը դէպ ի վեր կանգնեցաւ եւ առջեւէս անցաւ , սահեցաւ , անյայտ եղաւ ինչպէս գոլորշի մը : Կնոջ պատկեր մըն էր ան , բոլորովին սպիտակ , թարթափներն անգամ սպիտակ էին :

Արդեօք կը ձանչայի՞ զանի . կարծեմ թէ այո՛ :

Սակայն ո՞վ էր . այսչափ միայն կը յիշէի , կամ մոնաւանդ ազօտաբար կ'ենթադրէի , թէ ան ատենօք մեծ ցաւ պատճառած էր ինձի :

Ուզեցի փորձել , հրաւիրել զանի որ իմ մօտս գայ , զիս չլքէ . բայց տրտմալից , զանդաղ , խոնջ ձայն մը մրմուսց .

— Այլ եւս ի գուր է , ահա կ'երթամ . ահա թուա :

Ես գլուխս ծեծեցի . եւ սոսկալի արտասուքներ երեսս առչորեցին : Ա՛լ կեանքս վերջացած կը համարէի , ամէն ուրախութիւն ու չընչացած եւ հոգիս ձերացած : Անհուն փափաք մը ունէի վաղամեւ ըլլալու դազալին մէջ քնանալու :

Սակայն անհաճ գօրութիւն մը դարձնալ զիս մշթեց եւ հրամայեց ,

— Պէտք է քալել յառաջ դնա :

Ու նոր սենեակ մը մտայ միւսներուն պէս դատարկ ու խաւարին : Իբրս զօրացեր էին ա՛լ ու կը ջանային բան մը տեսնալ — ոչինչ կ'երեւար :

Մետաղական հնչիւն մը ականջիս զարկաւ . աներեւոյթ ձեռք մը կարծես թէ ոսկիներու դէպ մը կը համրէր , վեր քաշելով զանոնք ու յետոյ վար թափթփելով : Սաստիկ ընչաբաղցուն թեամբ բռնկեցայ , կը ցանկայի ձեռք ձցել այդ հարստութիւնը որ լրբաբար կը փորձէր զիս , կը զայրացնէր զիս :

Սենեակին մէջ կը դառնայի ամէն խորշ ու անկիւն պրպտելով : Պատին մէջ կրակատեղ մը տեսայ եւ սկսայ փնտրուս մոխիրը խառնել քրքրել , կարծելով թէ այդտեղ էր այն գանձը որ զիս այնպէս կը շարժարէր : Չգտայ : Յուսախաբութիւնը կատաղի փափաքս աւելի սասաւկացուց , գետինը կը հարուածէի կրնկով , կը հաւատայի թաքստոցի մը գոյութեան զոր եթէ երեւան հանէի փողփողուն ցուքեր աչուռներս պիտի խոցոտէին :

Ծունկի վրայ ինկած զօղակապ տախտակները կը գննէի . եղունգով կը քերէի անոնց միացած տեղերը եւ կը փչէի որպէսզի փոշին թոխ եւ եւ թէ՛ ձեփ մը կայ երեւան ելլէ : Յետոյ փորաքարչ եկայ : Պատին տակերը ուշի ուշով խուզարկեցի , ոչ ի՛նչ : Բայց սակայն , հնչիւնը շղթայի պէս կը շառայէր , կը զօրանար . կը թնդացնէր տուն տեղը , եւ յիմարացած մէկ կողմէն միւսը կը դառնայի ինքզինքս անիծելով որ կարող չէի միջոց մը գտնելու եւ ձեռ-

նամերձ հարստութենէն բաժին մը առնելու: Բայց ձայներ ծիծաղեցան:

— Փնտռէ՛, փնտռէ՛, եթէ դոնաս՝ լաւ է, եթէ չգտնաս՝ վա՛յ է: Տես ի՛նչչափ վայելքներ կը սպասեն քեզ եթէ յաջողիս այդ դրամը յափշտակել:

Ես խուլ, մոլեգին լարկութեամբ՝ որ զիս կը ծաղրեն՝ անյայտ թշնամիներս կը նախատէի: Ուղեցի այդ տեղէն դուրս ելլելի, բայց դուռը կղպուած էր: Փականքը թօթվեցի ու աշխատեցայ խորտակել զայն. հարուածներուս արտաքուստ կը պատասխանէին խառնաչփոթ ազաղակներ:

— Ո՛րչ, դուրս պիտի չելլես, հոտ պիտի մնաս: Չենք ուզեր աւելի առաջ երթաս, չենք ուզեր մեր մէջը մտնես, կը սպաննենք քեզ:

Ես գոռացի.

— Ո՞վ էք, սինլքորներ: Ո՞վ էք դուք որ կը ջանաք ազատութիւնս խլել: Եթէ մահս անդամ ստոյգ ըլլայ, անփախուստ ըլլայ, դարձեալ սակէ դուրս պիտի ելլեմ:

Եւ բոլոր զօրութեամբս կից մը տուի դրան՝ որ կոտրեցաւ: Կիսաշունչ, քնաթաթախ, յառաջ վազեցի, մտայ երկայն փող մը ուր ամենազոյզն ցոլք մը չէր պլպլար. ոչ թշնամի սուսայ, ոչ նախատիչ, ոչ ալ դիմադիր. ամենքն ալ ցնդեր էին ուրուականներու պէս:

Բայց ծանր թաղծութիւն մը կը նեղէր զիս. հաղիւ թէ բոպէ մը ուրախացուց զիս յաղթութիւնս: Ա՛լ ոչ ոք կը խօսէր հետս, կարծես թէ կը պատկանէին ինձմէ. հեալով, երկար ժամեր թափառեցայ, եւ նրբանցքը անվերջանալի էր: Հեծիւն մը բարձրացաւ եւ դարձեալ հեծութիւն մը: Յաջորդաբար ողբերը բազմացան, եւ անոնց որ կողմէն գալը չէի հասկնար:

— Ինչո՞ւ ոտնակոպ կ'ընես զմեզ, պղաղակեց ձայն մը, ամէն մէկ քայլափոխիդ կը ջախջախես զմեզ:

Ոչ ոք կը տեսնէի, ոչ ոք կը շօշափէի, եւ աւելի վարհուրեղով այդ լլկելոց յանդիմանութենէն՝ սկսայ շտապել, փողին երկայնքը վազել՝ սայթաքելով ու դեղեւելով, եւ հասայ սրանկիւնածեւ կամարի մը տակ՝ որուն բերանէն խոնաւ քամի մը կը փչէր եւ կը սառեցնէր քրտինքս: Բոլորակ դարատափ մը ելայ, զոր աշտարակի մը գագաթը համարեցայ: Գիշերը խաղաղ էր եւ աստղերու գետեր կը հոսէին երկնից վրայէն դէպ ի հեռաւոր հորիզոնը: Աշտարակէն վար նայեցայ՝ ազատ շունչ մը առնելէ ետքը. վիհ մը մթութեան չափ խոր դէպ ի վար կ'իջնար զիս ալ քաշելով: Ես ընկրկեցայ, փութացի խուսափել անընդդիմադրելի ձգողութենէն, թէեւ կը հասկնայի թէ վերջ ի վերջոյ հոտ պիտի զլորուիմ:

Բաւական էր փոթորիկ մը ելլէր ու աշտարակին վրայէն խլէր տանէր զիս:

Սեւ դրօշակ մը կը ծածանէր ձողի մը ծայրը: — Ո՞վ եղկելի, պոռաց նոյն ձայնը, պատրանք վայելեցիր եւ փախար, բայց կենացդ պատրասարանը մութ էր, տխուր էր, լի ցնորք-

ներով եւ արհաւիրքով, զայն ստուերը կ'ողուղ'ր եւ դու ստութիւն ու ոչնչութիւն միայն գտար: Երկիւզ, թերահաւատութիւն, զղջում չարչարեցին զքեզ. ելքդ մօտեցաւ, ահա առջիդ անհուն ճանապարհ, եւ դու կը տատամսի՞ս:

— Ո՞վ ես, հեծեցի երկնից աստղաւոր գունատութեան նայելով, որ կը խօսիս ինձի հետ այսպէս անանջատ հաւատարմութեամբ:

Ու ձայնը թաղմանական մը մնջմամբ հիծեց. — Հոգի՛դ եմ:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



ՄՏՔ ԵՍ ԽԱՌՆԱԲԱՆԵՆ

Գ.

ՏԵՍԻԼՔՆԵՐ

ՄՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԾՈՎԸ

— 0 —

Հոգին տակը ծով մը կայ գարշելի գոյնով, Անսահման աղջամուղջով մը պատած:

- Տառապող հոգիները
- Ու կեանքէն յողնածները
- Նաւարկելու զրկեցին
- Այդ ծովուն վրայէն,
- Երկու բփռկներ,
- Որոնց մէկը խուսկ ունէր, միւսը՝ զմուռս:

Ծակեցին երկրագունտին կողը Ու նաւամափոյց մը կառուցին. Եւ կեանքէն ձանձրացածները, Յոգնածներն ու տառապածները Նաւակներով ծովն իջեցուցին:

Ու ծովը կազմուած էր արցունքներով, Հիւանդին արցունքներովը Եւ անոր մօրն ու սիրականին արցունքներովը Ու ծովի ջուրերուն խառնուած էր Ժողովուրդներու արիւնը կարմիր Որ կը գոլորշիանար, կը գոլորշիանար:

Հիւանդին բերանէն Եւ ռնգունքներէն Թանձր ծուխի պէս Հառաչանքը կը ժայթքէր, Եւ կը խառնուէր արիւնի գոլորշիին, Եւ կը խտանար աղջամուղջը Ու կը պատէր ծովը գարշելի գոյնով...

Փռչ ու տատասկ , անէծք ու նախատինք
Իրար խառնեցին եւ ինծի մահի՞ճ պատրաստեցին
Փռչի ու տատասկի ,

Անէծքի ու նախատինքի վրայ պատկած՝
Կը շարչարուիմ . . .

Առէ՛ք , առէ՛ք զիս

Ու նաւամատոյցը տարէք .

Նաւակս հոն պատրաստ է . . .

Մօրս ոսկորներովը շինուած է ,

Ինչպէս անոր որովայնը դազազս ու խանձա-
րուրքս եղած էր :

Եւ մայրս ու սիրականս

Հոն ինծի կը սպասեն ,

Թիակներն իրենց կմախք ձեռքերուն մէջ :

Ահաւոր ժպիտը կը արամի

Անոնց անմարմին երեսներուն վրայ ,

Եւ աչքեր ունին ու չեն տեսներ . . .

Մենք պիտի թիավարենք ,

Պիտի թիավարենք սեւ ծովուն վրայ , մութին մէջ

Առանց զերար տեսնելու .

Եւ ա՛լ բանի մը չպիտի փափաքինք ,

Ու ալ բանի մը չպիտի նախանձինք ,

Ու տառապանքը պիտի յողնի հոն . . .

Լայնցան բերանները նեխած վէրքերուս ,

Ձոր մատուրներովս փորեցի .

Ժահահոտ մարմինս պիտի թունաւորէ

Օղը զոր դուք կը չնչէք .

Հեռացէ՛ք , մեկուսացէ՛ք ինձմէ ,

Ձեր խունկը չ՛օգնեք ինծի

Ու ձեր զմուռը անօգուտ է :

Դարձուցէ՛ք , դարձուցէ՛ք ինձմէ ձեր աչքերը ,

Եւ առտուան թարմ լոյսինմէջ լուացէք զանոնք .

Ու թարմ լոյսը որ երկնքէն կուգայ

Թող կենազործէ ձեր հոգին ,

Թունաւոր՝ ինծի հպելէն :

Գիշերուան խաւարին մէջ վառող

Մոմին պէս եղայ , —

Հալեցա՛յ , հատա՛յ ,

Լոյս արձակելու փառասիրութիւնովս :

Եւ ես իմ սպառումովս լոյս արձակեցի

Տիրոջը սեղանին վրայ :

Տիրոջը սեղանը Ձօրութեանց սեղանն է ,

Եւ այն որ թեւերուս տակ կը տքայ՝

Սեղանն է խորհուրդներու :

Խորհուրդներու սեղանին տակը ,

Կատուս իր ընթրիքը կ՛ապահովէ . . .

Երբ Բանաստեղծութիւնը աչքերս փակէ
Գիտութիւնը գլխուս վերեւ աղմկելով կը ճա-
ռագայթէ :

Եւ յանկարծ ,

Դաշնակը կը սկսի ճուալ , մրմուալ .

Այն ատեն խորհուրդներու սեղանը

Կ՛աւանդէ հոգին անշշուկ ,

Գիտութիւնը կը սպառի յամբարար .

Ժամացոյցին երգը , որ խղճիս ձայնն է ,

Դաշնակին լացերուն կը խառնուի ,

Ու ես դազազ կը գրուիմ :

Թաղման հանդէսի ժամն է .

Հին ալելուիաները կը մուրան :

Հնագոյն երգերը կը պարեն մխիթարութիւնը

Որ գանկիս մէջ կը նուազի . . .

Հին հառաչանքները կերտններու պէս

Վերստին կը սկսին պլպլալ շուրջս՝

Թանձր խաւարը հրկիզելով . . .

Կուչոս՝ սեղանիս վրայ՝

Ուր խորհուրդը կը գալարի հիւժախաւար ,

Ձօրութիւնները կ՛անդամատուին անխնայ ,

Ձիզերը կը ճղաւորուին անձկանօք ,

Անէծքները կը քննուին անժոյժ ,

Իմաստութիւնը կը զայրանայ անժուժկալ :

Հաճոյքը կ՛արհամարհուի նախանձով ,

Բանականութիւնը կը ցնցուի զայրացած ,

Լոյսը կը տարբաղադրուի յուսահատ ,

Խաւարը կը հալածուի ,

Դազազը կը զոյափոխի ,

Գերեզմանը կ՛աւելուի ,

Սրբութիւնը կը քննադատուի վայրապար ,

Տանջանքը կը վարհուրի ,

Խիղճը կը կորովամտի ,

Սէրը կը հեզնուի եղծուած ,

Երազները կը մարին ,

Յոյսերը կ՛ալլագունին ,

Անցեալը ետ կը դառնայ անողոք ,

Ապագան կը պարէ յարաշարժ ,

Ներկան կը տժգունի յանցապարս

Ու սարսափահար խոյս կուտայ ,

Մտերմութիւնը կը ընալուծուի ,

Իշխանութիւնը կը նզովուի ,

Հոգին կը սնդկանայ ,

Ու յաւիտենական , ճակատագրական Իրակա-

նութիւնը միայն կ՛երգէ ,

Դառնակո՞ծ , անմխիթար ու անճարակ :

Կը նաւարկեն , կը նաւարկեն հոգիները

Ստորերկրեայ ծովին սեւ ջուրերուն վրայէն :

Առդին ու անդին,
 Համբարունե՛րը՝
 Որ մուժին մէջ կը տեսնեն,
 Իրենց գլուխները ջուրէն դուրս հանելով
 ձիւներ կ'արձակեն,
 Երգեր, օրհնութիւն ու անորոշ խօսքեր :

Նաւակները դէպ ի ձայները կ'ողողուին ,
 Ու միշտ կը դառնան ,
 Ետ ու առաջ , առաջ ու ետ ,
 Ու նորէն առաջ ,
 Յարաշարժ, աննպատակ, կոյր ու լուռ ,
 Ստորերկրեայ ծովին սեւ ջուրերուն վրայէն :
 ԽՈՍՐՈՎ



ՏՈՒՆՍ



Իմ տուն շերտն մը ստորոտն է ու գահաւանդի
 մը վրայ , երկուսն ալ ծածկուած հաւասարապէս
 մթին ակնաւներով :

Տո՛ւն է թէ վրան . ա՛յ յնչափ ակաւ սեւաւանդ
 փոխուեցաւ աչքիս առջեւ . բարձրակարգ սեւ-
 չով , ակեւ ակաւ քիչ մը աւելի վար գտայ ինձ-
 գիւնս , խորխորասին ձաւքուն վրայ :


Նաւապետի մը պէս՝ վսակի մէջ իր նաւուն
 կանոնակիւն վրայ, տունիս մէջ ետեւ ու առաջ կը
 վազեմ միշտ փոխել ի փոխ ֆլեկերու երկու հորի-
 զոնները :

Երկուսն ալ հաւասարապէս մթին ակնաւներ ,
 վրաս կը խուժեն ու շուարած կը մնան ակնոց
 մէջսեղ, ակնոց մէջ նզուղի խեղդողի կարծերով :
 Բայց միևնոյն կը ձանչնան այ՛ն ակնաւոր որ
 տունիս ետեր կը սարածուի, գիտեմ անոր քանձ-
 րանո՞ մը մը քանակներն ու հագուադեպ բացաւ-
 սակները , անոր շատ բունաւոր տունկերը ու սա-
 կարաքիւ անուշաբոյր ծաղիկները ,

Կը դուրս մտածելով ակնաւոր արահետներուն
 անոր որ առջիս , գիտախոյն , կը գահալիժի ,
 կ'իջնէ յանդերով ակնոց , ակնաւոր ակնաւորի :

Տո՛ւն է թէ վրան կը հարցնեմ ինձգիւնս , ու
 կը տեսնեմ ոչինչով մը գայն օդը բոցնէլ հի-
 մեն , չիջնէրու հաւասար աւելի վար, փառսին մէջ :

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ



ԲԱՐԻՉԵԱՆ ՆՈԹԵՐ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԻՌԿՈՒՆ

— 0 0 —

10 փետրուար, 1900

Մեծ քաղաքին ո՞ր վտանգաւոր գօտիներէն է
 որ կը սկսին խենթեցած խուժանին կոհակաւու-
 բունները այս բարեկենդանի կատաղութեան
 երեք չվերջացող օրերուն մէջէն :

Ու իրարու ետեւէ , իրարու վրայ անդա-
 զար կը թաւալին արհաւիրքով լեցուն դի-
 մակաւորներու ամեհի ու կարմիր կարաւան-
 ները :

Դէպ ի ո՞ր անձանօթ քայքայումը կը քալին :
 Ու բուռականները քովքով կը զանգուածին,
 կը խորունկնան, կը լայննան ու կը դիզուին
 բոլոր երեւակայելի դոխներէն եկող , այս
 ցուլի ու բորենիի, շնագայլի ու յովաղի ծրու-
 սուններով տարօրինապէս մղձաւանջային դաբ-
 ձած՝ ալքօլէն ու տօնէն զինով ու մէկմէկէ
 հալածուող բազմութիւնները :

Ու թափօրները , անհունօրէն , վայրագօրէն ,
 իրարու ականջէ , իրարու նայուածքներու մէջ ,
 իրենց վիզերը գալարելէն , կ'ոտնան՝ ձեռու ընուն
 կարմիր կացիններովը օդին մէջ իրական ու
 անկարելի կատարածներ ողկոչելով . . . :

Իրենց իրանին բոլոր շարժումները կամաւոր
 ու սպառնալից՝ աւրելու ու ջարդելու արու-
 ետուն ու մենագարութիւնը ունեցողներու տա-
 րապայաման համեմատութիւնները կ'առնեն . . .
 Հազարաւոր թափօրներ կ'անցնին , ամէն ծա-
 ռուղիներէն , պողոտաներէն ու փողոցներէն՝ հը-
 րապարակներուն , քառուղիներուն բերանները
 թափուելու համար , որպէսզի ա՛լ նորէն խեն-
 թութեան գաւաթը ձեռու ընին վերսկսին իւրեց
 գիշերային ու դիւական ու փոթորկոտ պարը
 որտաւձի նշուումներով : Իրարմէ չճանչցուելու
 վախէն՝ չեն խօսիր, միայն ահաւոր ու մահացու
 քրքիջներ կը քակեն գիտակցօրէն երկարող
 պայթումներով : Մէկմէկու ուսի վրայ կ'ել-
 ւին , Բարիզի կարմիր պարեգօտով բոլոր ճըշ-
 մարիտ աղիճները ու բոլոր դանակաւոր տը-
 դաքները , ամէն տեսակէ տարալներով, ու փո-
 թի եւ ուտերու պար մըն է որ կը սկսին հեւ-

զհետէ իրենց ստքերուն տակ ամէն կողմէ ծոող կանակներուն վրայ . . . :

Ու թափօր մը մարդեր մէկէն ի մէկ գիմացս ելան, մութ անկիւնի մը վրայ, գայլի մորթե-րով, գիմակները իրենց զէմքերուն հակառակ կողմէն դրած, իրենց բերաններն ու աչքերը կանակներնուն վրայ, գլուխներն ետ՝ ու քայ-լերնին զէպ ի առաջ, հողէն բարձրացող շու-արած ու ահաւոր ուրուականներու քանակու-թիւններով անցան, ո՞ւր կը քալեն, զէպ ի ո՞ր անձանօթ քայքայու մը :

Ա՛լ հիմակ ցնորարքեր ամբոխին մակընթա-ցութիւնը փողոցներուն վրայի ծառերը կը տապալէ, թափառիկներն ու պղտիկներն ու ծե-րերը ոտնակոխելով հողէն կը հեռանայ ու դարձեալ կ'ամբապնդուի. ու խարխափելով դահավիժող գիշերին մէջէն, խուժանին տե-ղափոխուող անասուր թռնալէն պատերուն կը բալխի՝ ճամբաները թերեւս տարապայմանօ-ւէն լայնցնելու համար . . . :

Բայց ա՛լ կարելի չէ երկարել այս պտոյտը անվայրափակ արհաւիրքին մէջէն, պէտք է փախչիլ եւ հեռանալ, որովհետեւ ա՛լ քաղաքը ինքնիրմէն զուրս կը նետուի, բոլոր քաղաքը մեռելային զտանցանքի մը մէջ, թեւաւոր զե-ւերու նման որ խաւարին հեռ բազուկ բազուկի ոտուերներնին գետինէն կտրած, պա-րապին մէջ մահագոյժ կը պարեն . . .

«Այս քաղաքին մէջ, մէկէն ի մէկ սարսափահար՝ Գիշերային արհաւիրքէ ու տօներէ կարմիր, Հրաշանալու ու մեծնալու համար, Հողիս, դուռն քիզի հեռ առանձնացիր : »
(ՎԵՐՉԱԹԸՆ)

Ու մէկու մը պէս որ պատերազմի մը դաշտէն վերարկուովն իր գլուխը ծածկած կը փախ-չի, պէտք է փախչիլ այս գիշեր դո՛ւրս, դո՛ւրս, խենթութեան քաղաքէն անսահմանօրէն դուրս :

ԱՏՈՄ ԵՍՐՃԱՆԵԱՆ



Բարեղի գեղարուեստական քննադատութեան տմենէն Տեղինակաւոր վարպետներէն մէկը, Պ. Ռոսէ. Մարքս Gazette des Beaux-Arts հանդէսին մէջ հրատարակած է Պ. Էտիպը Շահինի մասին հետեւեալ յօդուածը :

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ



Այն նոր նկարիչներուն մէջ, որոնք «իրենց մտածումը բազմաթիւ օրինակներով տպագրե-լու» փառասիրութենէն տիրապետուած են, կայ մէկը որ յանկարծական ու անմիջական կերպով հանրային ուշադրութիւնը իրեն դը-րատեց, — Էտիպը Շահինը : Այս օտարահունչ անունը, անունն է հայ արուեստագէտի մը, որ այսօր երիտասարդութեան ու համբաւի փթթումին մէջ կը դանուի :

Տասը տարիի չափ առաջ իր դաստիարակումը կը սկսէր Վիեննայի, Բառլեթթիի ուշիմ անօրէ-րէնութեանը ներքեւ . 1895էն ի վեր, ան շա-րունակուեցաւ Բարիզ, ուր Ժան-Բոլ-Լորանս եւ Պէնժամէն Գոնսթան, քիչ մը անցողակի, իր վարպետները եղած են : Որքան ալ բունը ըլ-լար իր երիտասարդական խանգավառութիւնը Թիերոլտի սիրուն շնորհալիութիւններուն հա-մար, Պ. Շահին պարտէր, անգամ մը որ իր կոչումը ձգուէր, ձգտիլ աւելի զէպ ի արուեստ մը արտայայտութեան քան տեքստի : Խորհրդու-ծող ու զգայուն, ան աւելի կը հրապուրուի ի-րականութեան առամէն քան երազին զիւթ ա-պատկերներէն . կը ցանկայ տիրանալ ճշմար-տութեան, ճշմարտութեան մը, որ գիտէ որոշնը կարագրով մը համակուիլ եւ որմէ յուզմունքը երբեք չի վտարուի : Ինչ որ իրեն համար նոր եղող մեր բարիգեան կեանքին մէջ ամենէն աւելի աչքին զարկած ու զինքը դրաւած է, ոչ այնչափ մեր տեղիներն ու մեր ազմկայոյզ կրքերն են որչափ թշուառութեան ու դժնդակ դասանքի տեսարաններ, եւ իրենց ինկա-ծութեանը գիտակից ու համոյքի խղճալի կեր-պարանմանը դաստապարտուած էակներու անպարարախաղը : Խանդաղատարին զթու-տութիւն մը կը ճառագայթէ Շանդ-Էլիզէի Սա-լոններուն մէջ իր ցուցադրած նկարներու շար-քին վերեւ, գորոնք հեղինակն անուանակու-չած է սա ընդհանուր տիպոսով «Ողորմելի կեանքը» :

Թէպէտեւ այդ նկարները աննշմարելի չեն անցած եւ անոնց մեծ մասը գովեստներով նը-չանակուած են, փորագրութեան մէջ է որ Պ. Շահին գտած է արտայայտութեան ձեւ մը իր միջոցներուն յարմար եւ իր գործադրողի կա-րողութեանց ու վերլուծողի սրատեսութեան լիակատար չափը տալու ատակ :

Որչափ շեշտենք քիչ է սա կէտը թէ աշխատու-թեան եղանակը պէտք է որ պատշաճաւորութի տաղանդին բնութեանը եւ թէ անհրաժեշտ է արուեստագէտի մը համար՝ իր հետազօտութիւն-

ներն ուղղել ամէն կողմ մինչև որ իր առջեւ բացուի նախասահմանեալ ուղին : Գործը տաժանելի է, երբեմն երկարածից : շատերը կը թափառկոտին կամ կը մոլորին՝ Գամակոտի ճամբան գտնելէ առաջ . բայց ի՞նչ փոյթ , քանի որ յաջողութիւնը անվերպելի կերպով կը վարձատրէ ինքզինքը ճանչնալու ջանքը : Այս նոյն բանը պատահեցաւ Շահինին : Անցած դարնան , քմայքը , բնազդին այդ ուրիշ մէկ ձեւը , զինքը կը հրաւիրէր պղնձի վրայ փորագրելու , եւ զեռ տարի մը չբողբումը՝ քաջատեղեակ նկարիչներն զինքն արդէն իւրենց յարկանքին մէջ օրիորդ Մէրի Բէսէթի , Տէպուլթինի եւ Էլլէօի շարքը կը դասեն . . .

Բնական է որ նոր աշխատութեան ձեւի մը ընդգրկումը ոչ վրդովում ոչ փոփոխութիւն յառաջ բերած է դիտողութեան նախընտրութիւններուն մէջ . «էսթամբ»ները նոյն սովորական նիւթերը կ'ընծայեն . անոնց մէջ պիտի վերստին գտնենք միեւնոյն ընկերական գթութիւնը , խոնարհներուն ու կեանքի պարտաւորութեան համար՝ գործովալից . բայց փորագրութեան օրէնքներն ու սահմանը , բռնադատելով Պ. Շահինը համապրութեան , եւ տըպոյթներու ցուցակը վերածելով , անոր ձիրքերը մեծապէս արծարծած են . հոս , զգացումը կ'արտացոլայ հեղինակաբար , տուածակնութիւնը այլապէս ազդողական կը դառնայ . ընդհանուր կերպով , հնարումին իմաստն ու գորութիւնը կը ճշդուն են կը բարձրանան :

Երեսուն բլանչներուն մէջէն որ այդ գործին ամբողջութիւնը կը կազմեն , «Բնացողներ»ը , «Պար» , «Շաթօ-Ռուփը» , «Շըմինօն» , «Բարձով կիւնը» , կը միջամտեն իբրեւ օդատակար վկայութիւններ մեր ըսածն հաստատող . տիպարին կեցուածքին կամ ժեսթիւն սահմանումը լիակատար է անոնց մէջ , եւ անոնց գասաւորումն , ինչպէս եւ երեւոյթը , անթերի կը թուի : Արհեստին սիրունութիւնը կը նպաստէ յաջողութեանն այդ գործերուն որոնք յօրինուած են «կոէն»ի «օֆօսթ»ի եւ մանաւանդ «բուանթ-սէլ»ի միջոցով , որուն մէջ Պ. Շահին ամենէն ուժով կ'երեւայ . խորունկ սեւերուն ճոխութիւնը , գորշութիւններուն մնում տեղունութիւնը , ճերմակներուն շողշողումը , փայլկոտութիւնը , կը զարմացընեն ու կը զբօսցընեն . շինուածքը այնքան անձնական գրոշմ կը կրէ որ ո եւ է մէկը դայն կը ճանչնայ կազանդի այցաքարտի մը , «Հարիւր գրասէրներու» ճաշացուցակին կամ Պ . Շահինի հրատարակիչ Սակօի հասցէին վրայ նետուած ամենէն փոքր ուրուագծին մէջ իսկ : Արհեստին լիալիր տիրացումը յաղթականօրէն կը յայտնուի դարձեալ մէկ քանի էսթամբներու մէջ ուր , հաղուադիւտ ներքնատեսութեամբ մը , արտայայտուած են իտալացի կնոջ մը տածկոտ շտրիք , արուեստագէտ վիպասան Բասֆալ Թորթիւնիին ինք իր վրայ ամփոփումը , վերջապէս Ժ. Գոռնէլիին , այժմէս թեան այդ սքանչելի փելիստիային , վոլթէտեան փայլակներով նայուածքը :

Նոյն շարքին կը վերաբերի կենդանագիրը Ալֆրէտ Սթէվէնսին . . . Այսօրուան ու ապագային հետաքրքիրները պիտի կրնան գիտնալ թէ ի՞նչպէս էր դէմքը Պիլճիքացի վարպետին՝ այն միջոցին երբ անտվոր պառիւր մտաուցին իրեն՝ Գեղարուեստից Վարժարանին մէջ «մահէն առաջ» իր ամբողջ գործը ցուցադրելու Գիմա . նրկարը , 1900ու թուականեալ , անհերքելի տուքիւմանի մը արժէքնունի . ոչինչ սքողուածէ հոն ձերութեան բերած աւերումներէն , եւ սակայն մարդկային ցնցոտիին ողորմելիութիւնները այնտեղ աւելի զգացուցուած են քան նշանակուած . շատ նուրբ թաքթ մը Պ. Էտկար Շահինը կը զգուշաւորէ ծայրայեղ կամ անգութ ճշմարտամոլութեան մը վտանգին դէմ : Ժամանակին ու տառապանքին դանդաղ աւերումներուն հակառակ , մտածման բոցը արթուն կը մնայ Թերպորթի ու Մեցուի , Ինիթըր տը Հոքի եւ Վանտէր Մեք տը Տելֆրի թոռան , արդիներքին կեանքին վայելչաձեւութեանց շատ աւանդական նկարչին քով : Նուրբ , մետաքսային մաղերը , արծաթ քուլաներով թափթփած , կը պսակեն մանրալնին կերպով խուզարկուած դէմքը , որ շուրջի սեւ սաթին վրայ դուրս կը ցատքէ իր բաց գոյնովը , բարեյաջող հակադրութիւն քաղցրութեան եւ ուժի , փորուածքի ու գոյնի միջեւ , որ ի վեր կը հանէ զիմագծական մանրամասնութեան ճշգրտութիւնը , եւ կ'արժեցնէ սիրողաբար յառաջ տարուած եւ իր բոլոր թեքումներովն արձանագրուած «մտալէ»ի մը շահեկանութիւնը : Համեղ հակառակ կամաւոր կրճատումներու պարզ ու չոր նշանակումը լայն զդեատին , կակուղ ճերմակեղէնին , ակներեւանհողութեամբ մը կասուած փոզկապին , ու նաեւ ձեռքին ձեւը ուր սիկարէթը կը մարի երկայն ու վտիս մատուրներուն մէջ տեղը , ոճի կախարչանքը կ'աւելցնեն այդ փառաւոր վարպետի մը պատկերին զոր գծած է սրտես եւ ինքնատիպ կերպով օժտուած փորագրիչ մը : Այսքանը կը բաւէր որպէսզի մեր հանդէսը ուզէր այդ կենդանագիրը տարածել , հաւասարիմ մնալով կիսադարեան աւանդութեանը որով «Կազէթ տէ Պօ-Ս»ը , ողբացեալ կայեառին թանկագին խօսքին համեմատ , ելած է միշտ ազատ բեմ մը նոր փորագրանկարին եւ ճշմարտ տաղանդին : (*)

ՌՈՅԷ ՄԱՐԿՍ



Այս յօդուածին ընկերացած են Պ. Շահինի հինգ փորագրութեանց վերստ սքողութիւնները եւ մասնաւոր էջի մը վրայ Սթէվէնսի կենդանագիրը բուանթ-սէլով :

ՕՏԱՐԻՆ ԿԱՐԾԻՔԸ

ՎԱՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՏՐԱՊԻՉՈՆ

ՀԱՅՊԱՎԱՆ ԱՐՇԱԿ ԱՆՔՆԵՐ

Կ. Պոլս , գեկտեմբեր

Շար . եւ վերջ (*)

Իսկապէս , Գրեթե անտեսում եւ ամէն տեղեւորում ուր Գրեթե մեծ մասամբ զետեղուած են , պայմանները այնպէս դասաւորուած են որ ոչ թէ տաճիկ կառավարութիւնն է կառավարողը , այլ Գրեթեի զլխաւորները , եւ այն էլ անողութեամբ յակնադրութեամբ : Աննպատակ է եւրոպացի ընթերցողներին պատմել այնքան յաճախ պատահած սոսկալի բռնաբարութիւնները որոնք համազգեստեալ Գրեթեի գործ են զընտում քրիստոնեաների վրայ (այն ցեղերը որոնք մերժում են Համիտիէ դառնալ , ընդհանրապէս նրանց կէսի չափ վտանգաւոր չեն) : Ամենից ստաջ պէտք է հաստատենք որ հազարաւոր Թուրքերից որոնց հետ այս կէտի վրայ խօսել եմ , մի հասն անգամ չեմ գտել որը բարեկամաբար նկատէր այս կարգադրութիւնը կամ թէ լռելեայն գովէր նրան . բոլորովին հակառակը , այդ քայլը ամենասուր կերպով դատաւարաւորեցաւ , եւ ցոյց տրուեցաւ այն մեծ սխալներից մէկը որ երկար ժամանակներից ի վեր գործած է Թուրքիան : Լսենք օրինակի համար թէ ինչպէս են մտածում Համիտիէների մասին երիտասարդ սպաները .

« — Ամօթ չէ՞ սա , ասում են ինձ , որ մեզ ընկեր են անում , անյո , մինչեւ անդամ մեզ ստորապաս են անուանում այնպիսի մարդկանց որոնք ոչ հաշուել գիտեն , ոչ կարգաւ ու գրել , որոնք ընդհանուր մարդկային կամ շինուորական պատուի զղացման ոչ մի նշոյլ չունին , որոնք ինչպէս ամէն մարդ գիտէ , այնչափ ա ազակութիւններ եւ մինչեւ անգամ ոճրագործութիւններ , անասնման սանաւորութեամբ , յաճախ նաեւ ամենավատ կերպով կատարուած սպանութիւններ ունին իրենց խղճի վրայ , որոնք ոճրագործութիւնը իբրեւ արհեստ գործադրում են :

» Տեսէ՛ք , պարոն Տոքթոր , ասում էր ինձ մի անգամ մի սոլայ . այստեղ նստած էր Համիտիէների մի գնդապետ որ մի նշանաւոր աւագակ է եւ իր Համիտիէների հետ ամէն մի կարաւան կողոպտում է՝ նրան ամենաքիչը իր բնի մի կրորդ մասիցը թիթեացնելով . սա ստանց այլեւայլութեան նրանց պիտի կողոպտէր եթէ նոքա զինուորական պաշտպանութեան տակ չգտնուէին : Եւ կառավարութիւնը այս բոլորը գիտէ , եւ ստիպուած է լռելեայն համբերել . որովհետեւ նա բաւականաչափ շինուորներ չէ ուղարկում այս յերկրակը դատարանի քաշելու (առաքելութեան վերակա-

ցու Պ. Բասթոր ծաբերը սիրում է Գրեթեին ներկայացնել իբրեւ ասպետական տրամադրութիւններով մի ժողովուրդ , ես համաձայնում եմ նրա հետ , միայն թէ «ասպետական» է առաջ աւելացնելով «աւագակ» բառը) :

« — Մէհմէտ էֆէնտի , եթէ այս Համիտիէ Գրեթեի ձեռք ներկայութեան մի օտար կարաւանի վրայ յարձակուեն եւ նրան կողոպտեն , զուք ի՞նչ կ'անէիք այն ժամանակ , կը պաշտպանէի՞ք կարաւանը եւ պէտք եղած դէպքում աւագակները վրայ կրակ կ'անէի՞ք : »

« — Աստուած մի՛ արասցէ , պատասխանում էր Մէհմէտ էֆէնտին դառնութեամբ , դա ինձ չատ սուղի կը նստէր . խիստ արգիլուած է Համիտիէների վրայ կրակ անել կամ առհասարակ նրանց հետ կռուի բռնուիլ . չէ՞ որ նոքա շինուորներ են , մեր ընկերները : »

« — Եւ եթէ ես անձնապէս ձեզ խնդրէի որ օտար կարաւանները Համիտիէների առաջ պաշտպանէիք , ի՞նչ կ'անէիք : »

« — Բացարձակապէս ոչինչ , եղաւ պատասխանը , մեզ խիստ արգիլուած է նրանց հետ ու եւ է կռուի բռնուիլ :

« — Եւ եթէ ես անձնապէս յարձակման ենթարկուէի կարաւանը պաշտպանելու համար , ի՞նչ կ'անէիք : »

« — Այո՛ , այն ժամանակ ի հարկէ Համիտիէների վրայ , եթէ սոքա ձեզ վրայ յարձակում են եւ սպառնում , պիտի թողնէի որ կրակ անեն , որովհետեւ ես ձեր ապանովութեան հակում եմ . միմիայն այս մէկհատիկ բացառիկ դէպքում իրաւունք ունիմ , մինչեւ անգամ հըրաման , Համիտիէների վրայ կրակ անելու : »

Այլ եւս աւելորդ է մի որ եւ է մեկնութիւն . բայց ճիշդ միեւնոյն հայեացքները տարածուած են միւս սպաների մէջ : Իսկ հասարակ զինուորը , պէտք է նրան լսել երբ մի ու եւ Գրեթեի ամօթալի գործը պատմում է , թէ ի՞նչ հակակրանքով զինուորը ի՞նչպէս մը «ներողութիւն» ասում է , «գէն , ի՞նչ արած , մի Համիտիէ է» : Ես կարծում եմ ընդհանրապէս որ մեր պետութեան արեւմտեան մասի Թուրքերի մէջ մի ու եւ է բառ չկայ որ աւելի ատուած եւ անարդուած լինի քան «Համիտիէ» բառը :

Իսկ բարձր սպաների մէջ «ի՞նչ էք մտածում Համիտիէների զինուորական արժանիքի վրայ : ի՞նչ էական ծառայութիւններ սպասում էք նրանցից Ռուսիայի հետ ձեր մի կռիւ ունենալու դէպքում (որովհետեւ միայն այնպիսի մի բան կարող է Անատոլիում ի նկատի առնուիլ) :

« — Դեհ , ասում էր , նրանցից մինը , ես համոզուած եմ , որ եթէ սուսական կողմերի մի հատիկ վաշտ մեր Համիտիէների վաթսուս վաշտի դէմ ելնէ , ամբողջ խումբը իսկոյն փախուսա կուսայ : »

« — Եւ ի՞նչ աստիճանի է Գրեթեի հաւատարմութիւնը : Ինձ վերայ մի այնպիսի զգացմունք է գալիս , թէ X. փաշան 10000 տաճկական ռուկի ստանալու դէպքում (մտա 185000

(*) Տես «Անաշխտ» , Բ . Տարի , թիւ 3 .

մարք) պատրաստ է իսկոյն Ռուսների կողմն անցնիլ) : »

« — Ի՛նչ, եղաւ կրկնուած պատասխանը, 10000 ոսկի՞. այն ժամանակ լաւ սխալուում էք : Արդէն 5000 ոսկիի համար, նա պատրաստ է իր գոյնը փոխելու : »

Այստեղ ի հարկէ ես չեմ կարող մի անուն յիշել, որովհետեւ ամենափոքր պատիժը պիտի լինէր «աքսոր դէպ ի Եէմէն» — որ ստանում են բարձր սպաները թրքական կայսերական զրուժեան մասին մի այբույսի քննադատութիւն անելիս : Բայց վերուի գրտողութիւնները ճիշդ նոյն զգացումներն են արտայայտում, որ կանոնաւոր զօրաբանակի բարձրագոյն սպաները տածում են դէպ ի Համիտիէ սպաները :

Կառավարութեան մէջ կարծել են գործը նըրանով մի քիչ լաւացնել, որ այժմ Համիտիէ վաշտերի բարձր աստիճանները այսինքն բոլոր գնդապետների տեղերը, այլեւս Քրդերու գըլխաւորներին չեն տալ, այլ կանոնաւոր զօրաբանակի սպաներին : Մեր կողմից նկատած է՝ ական արդիւնքը այս փոփոխութեան, ա՛յն էր որ իրենց ունայնասիրութեան մէջ վիրաւորուած քրդական գլխաւորները ընդդիմազրուժեան են ելել այս սպաների դէմ :

Եւ թէ Համիտիէները բայց եւ այնպէս միշտ այն պիտի անեն ինչ որ իրենց ցեղապետներն են հրամայում եւ ոչ իրենց համար բոլորովին օտար եղող տաճկական վաշտերի գլխաւորների ասածը, գորանով անկարելի է կասկածիլ :

Իրողութիւնները բառերից աւելի լաւ են խօսում : Դորա համար եւ հէնց ուզում մի ոչ պակաս նշանակալից տեղի, — այստեղ ուր սա Հայաստանի լեռներից դէպ ի Միջագետքի հարթավայրն է մտնում — պայմանները նկարագրել : Այստեղ ինչ որ բնականաբար յետոյ նկատեցինք, Քայմազամից Համիտիէներին իբրեւ հիւրեր առաջարկուեցանք, եւ նաեւ ոչ մի առիթ չուենինք մեզ ընծայուած այս հիւրասիրութիւնից զանգատուելու : Ուրիշների թուում այստեղ էր նաեւ տեղական համիտիէ վաշտերի հրամանատարը, մասնաւոր սպէս սիրալիր մի տաճկական գնդապետ : Երբ մենք գայմազամին փոխադարձ այցելութիւն տալուց յետոյ կամենում էինք այս գնդապետին այցելել եւ այս նպատակի համար երբ մեզ մըշտասպէս ընկերացող համիտիէ սպաներին խնդրեցինք մեզ նորա մօտ առաջնորդել, պատճառաբանում էին, թէ նորա տունը չեն ծանաչում : Յետոյ մենք հրամայեցինք մեզ տըրուած Աղիլիէցի գաղթիւններին՝ բնակարանը մեզ ցոյց տալ, սակայն սոքա եւս սկսան ամէն կերպ խոյս տալ, պատճառաբանելով վերջապէս թէ նորա բնակարանը սարսափելի հեռու է, — կարճ, մերժում էին (անշուշտ Համիտիէներից վախնալով) մեզ դէպ ի այնտեղ առաջնորդել : Յետոյ մենք շատ մարդկանց հարցրինք գնդապետի հասցէն, բայց զարմանալի

բան, Աղիլիէթում ոչ մէկը չգտնուեցաւ, որ նորա տունը ճանաչէր : Այս բոլորը մեզ չարգիլեցին մի նամակով նորանից ներողութիւն խնդրել իրեն չկարողանալ այցելելնուս համար որովհետեւ ոչ մին տունը մեզ ցոյց տալ չէին ուզում : Ահա այս է Համիտիէների կարգապահութիւնը : Եւ կարելի է մօտաւորապէս պատկերացնել թէ ինչպէս սոքա մի լուրջ դէպքում իրենց տաճկական հրամանատարների հրամաններին անտարու են, եթէ նոքա իրենց ցեղապետների հայացքներին եւ ցանկութիւններին համաձայն չեն :

Յետոյ գայմազամից խնդրեցինք որ Մուսուլ երթալու համար ճանապարհներին լաւ տեղեակ մեզ մի քանի ժամտարմներ տայ, որ եւ իսկոյն պատրաստակա՞նութեամբ խոստացուեց : Այդ բանից անմիջապէս յետոյ Համիտիէ գըլխապետ Մուստաֆա փաշայի օգնականին եւ փոխանորդին անմիջապէս մի այցելութիւն, որի միջոցին մի սուրհանդակ ներս մտաւ գայմազամի կողմից ասելով՝ «Փերմանացիներ դէպ ի Մուսուլ գնալու համար զապթիւններ են ուզում, կարո՞ղ եմ տալ» (սուրհանդակը մեծ եւ մութ սենեակում հազիւ թէ կարող էր ինձ տեսնել, խօսք չկայ որ անկարող էր ինձ ծանաչել) : Ուրեմն՝ տաճկական կայսերական քաղաքական պաշտօնեան հարցնում է քրդական «կառավարութեան» թէ ինքն իրաւունք ունի՞ ժամտարմներ ուղարկելու :

Եւ ինչպէ՞ս են դատում անասարակ քաղաքական պաշտօնեաները Համիտիէի մասին : Ինչպէս է մտածում տաճիկ ժողովրդեան մեծաքոյն մասը նոցա մասին, միշտ հետեւեալ կերպով է դատատան անում՝

«Մենք Թուրքերս աշխատում ենք, քրիստոնեաները, Հայերը նոյնպէս աշխատում են, բայց համիտիէ խուժանը չի աշխատում եւ չի ուզում աշխատել : Մենք ունինք մի օրէնք, դա մեզ եւ քրիստոնեաների համար նշանակութիւն ունի, սակայն Քիւրդերի, Համիտիէների համար դա նշանակութիւն չունի, նոքա անպատիժ կարող են ամէն բան անել կամ չանել : »

Տաճկական մի նշանաւոր գիւղում ինձ մի գայմազամ ասում էր՝ «Ես քսան տարուց աւելի է որ այս վիլայեթում գործում եմ, սակայն մի այնպիսի անիշխանութիւն որ սկսել է վարգանալ համիտիէ գուռիկերի կազմութիւնից ի վեր եւ որ ամէն օր աւելի է զարգանում՝ երբեք չէի տեսել : Մենք աստիղ գնում ենք դէպ ի մի ամբողջական քայքայում : Երբ առաջնորում մի քրդական պետ այստեղ էր գալիս, նայած նորա տնտեսական զրուժեան, նորան երկուսից մինչեւ հինգ հասարակ Քրդեր էին ուղիկցում, որը նաեւ պաշտօնեաների հանդէպ յափազանց համեստութեամբ էր պահուս իրեն : Այժմ այս մարդկանց սպայութեան տիտղոսը շնորհուելով՝ աստիկ հպարտացել են, եւ ամենամեծ հպարտութեամբ են իրենց պահում, բացարձակ կերպով այլեւս չեն հնազանդում

և Իրենց պատուից ցած են համարում 30—50 համիտիէներեց պակաս կրկրում շրջելը: Գիւղեւրում, միեւնոյնն է թէ տաճկական կամ քրիստոնէական, մարդկանց սնունդը եւ ձիւններին կեր պահանջում են, վճարումն ի հարկէ՝ ինչպէս քաջածանօթ է՝ մոռնալով: Այստեղ, իմ գիւղում հազիւ մի օր է անցնում որ մի որ եւ է քրդական բարձր սպայ բազմաթիւ ուղեկիցներով չգայ. մօտ 3—4 յաճախ 6—8 օր մնում է այստեղ հրաշալի կերպով եւ զուարճութեամբ շուսյտանում է գիւղացիներին հաշուին, որի պատճառով մի մաս արդէն՝ մուրացկանութեան են հասել:»

Ո՛ւր էր որ ուղէ մարդ լսել. ամէն տեղ տիրում է մի ընդհանուր դժգոհութիւն կառավարութեան դէմ որ այս պատիժները ստեղծեց:

Մի կատաղութիւն Համիտիէների դէմ, որունց մի քիչ պատուաւոր թուրքը ինչպէս աւաղակներ է նկատում եւ կարելի եղածին չափ նրանից հեռու է կենում, որոնք աւելի սուկալին վախենալ են տալիս, եթէ սորանից յետոյ էլ այնպէս գնայ ինչպէս մինչեւ այժմ:

Ես երբեք չպիտի զարմանամ, եթէ թուրքերը այնտեղ մի յեղափոխութիւն առաջացնեն:

Եւ ի վերջոյ, ինչպէ՞ս է զինուորական կըրթութիւնը Բրդերին: Սա բոլորովին կեղծ է մինչեւ այժմ, եւ հաստատ է որ նաեւ տասնեակ տարիներ էլ այնպէս պիտի մնայ: Այո՛, ես կարծում եմ որ պահպանելով ներկայ կազմակերպութիւնը, կիսով չափ աղղկեցիկ մի կըրթութիւն միանգամայն անկարելի է: Առայժմ Համիտիէները ողորմելի հրացանաձիգներ, առաջին կարգի վատեր են: Ամենաշատը, երբ իրենք զգալի մեծամասնութիւն են կազմում եւ պատասխարուած են ժայռերով եւն, մի ամբողջ ժամանակ գրեթէ անարիւն հրացանաձգութեան յանդգնում են, սակայն մի սուկնամարտի ո՛չ մի դէպքում կարող են դիմանալ: Խոնջ պիտի պատահէր, եթէ մի օր Բրդերը մտածէին, թէ իրենք իսկապէս իրանական ցեղէն են եւ որ թուրքական թրքերի հետ բացարձակապէս ոչ մի ազգակցութիւն չունին, երբ նոցա մէջ ազգայնական զգացումը դարթնէր եւ իրենց մէջ թրքական իշխանութեան լուծը թօթափելու ցանկութիւնը գրգռուէր, հին ազատութիւնը վերստին ստանալու համար, սորա մասին իրենք չեն մտածում: Առժամանակ դորա համար պակասում է մի զլլուաւոր գրգռէլ, մի անձ, որ սակայն եւ այնպէս ամէն օր կարող է այստեղ իլ, որ յաւիտեան իրար դէմ թշնամացած ցեղերը միացնէր: Այդպիսի օրինակներ մենք արդէն տեսել ենք, մի քանի տասնեակ տարիներ առաջ հոչակաւորի պատուլլա շեխը մի մեծ քրդական բանակ էր կազմել, որով եւ յարձակուեցաւ Պարսկաստանի վրայ եւ Ազրբէյջանի կէտը վերոյիջեալ նպատակին համար տիրեց, այնտեղ մի քրդական թագաւորութիւն հիմնելու համար: Եւ թէ մի այդպիսի դէպքում

միջին թուով լաւ զինուած Բրդեր թրքական զնդերին մեծ դժուարութիւններ կարող են յարուցանել, այո՛, լեռներում մինչեւ անգամ շատ վտանգաւոր կարող են լինել, սա շատ պարզ է:

Մուշից, Տասնհազարի ճանապարհով, Բուլանքի հարթավայրերով ճանապարհորդեցի դէպ ի էրզրում: Նոյեմբերի 6ին էր երբ ես կարաքիլիսա հասայ: Այդ օրը, ինչպէս մենք մտադրած էինք 6 ժամ հեռաւորութեան վրայ գտնուած հայկական Սիդիկան մեծ գիւղը հասնել, բայց ստիպուած էինք մեզնից 3 ժամ հեռու քրդական իմանձեր գիւղում գիշերել. եւ սա մեր բաղդիցն էր, որովհետեւ Սիդիկանում, ինչպէս յաջորդ օրը ցոյց տուեց, մեզ համար շատ վատ պիտի լինէր: Այսինքն հէնց նոյն գիշերը Սիդիկանը հայ ապստամբների մի մեծ խմբի օթեւանն էր որոնք թերեւս զուարճութեան համար մի քանի գնդակներով ողջունելու էին ինձ ընկերացող զինուորական խմբակը:

Ինչպէս յետագայ քննութիւնները ցոյց տուին, այդ օրերում հայ ապստամբները 100ից աւելի մի խումբ հաւաքուել էր ռուսական սահմանագլխում Տաճկաստան անցնելու նպատակով: Եւ որովհետեւ նոցա շատ դժուար էր եղել տաճկական փոքրիկ զինուորական խմբերով ողողուած Ալաշկերտի հարթավայրերով աննկատ անցնելը, ուստի եւ վճռել էին մասերի բաժանուել եւ երկու մեծ մասով, տարբեր օրերում դէպ ի հարաւ անցնել: Նոյեմբերի 6-7ի գիշերը, առջի կէտը 60 հոգուց բազկացած անցնում է տաճկական սահմանը եւ Հայոց Սիդիկան գիւղում դադար առնում, ուր ապստամբները հայ գիւղացիների կողմից հիւրաբար ընդունում են եւ պատասխարում: Յետոյ եղել են մեծ արեան լճեր, որոնք ցոյց էին տալիս որ Սիդիկանի գիւղացիները ապստամբներին կերակրելու համար շատ ոչխարներ էին մորթել: Ինչպէս այս բոլորը աննկատ կերպով Սիդիկանում կարող էին անցնիլ, իսկապէս ինձ անհասկանալի է մնում, որովհետեւ այդտեղ կանոնաւոր կերպով մի պահակազուեղ կայ 7 զինուորից բաղկացած եւ ամենաքիչը 5 հատ էլ ժանտարմներ: Հաւանականաբար Սիդիկանցիք ապստամբներին պատմել էին, թէ 3—4 քիլոմետր հեռու գտնուող իմանձերի Հայերը մի քրդական պետի բռնակալութեանն են մատնուած, Դերվիշ աղա անունով, որ մի քանի տարիից ի վեր այդ գիւղում հաստատուելով սովորութեան համեմատ գիւղը սեփականացրել է, եւ Հայերը ենթարկուած են նորա քիւրդ ծառաների կամայականութեան: Որովհետեւ միայն իրենց հարստահարուած հայրենակիցներ ի վրէժը չարչարողներեց լուծելու ձգտումն է լուսաբանում ապստամբների վերջին անպատեհ որոշումները:

Նոյեմբեր 7ի առաւօտեան, Ֆէզայիները քաշուեցին իմանձերի ուղղութեամբ, եւ առաւօտեան ժամը 11ի մօտերը իմ կարաւանով Սիդիկան մտայ, ուր դէպ ի արեւելք ճանապարհորդելու պատրաստ մի հեծեկազորքի ջոկատ

կար եւ վեց հեծելազօրքեր թոփրազկալայից եկել էին, որոնք ինձ ընկերացող զինուորական խմբակի մի մասը փոխելու էին: Մինչդեռ ես հարկաւոր պատրաստութիւններն էի տեսնում արեւելքարձրութիւնը ու Սիդիկանի աշխարհադրական լայնութիւնը որոշելու համար, իմանձերի կողմից մեզ էին հասնում միացած հրացանների պայթիւններ, եւ որ միշտ աւելի արագանում էին: Մենք բարձրացանք խրճիթների տանիքների վրայ՝ հրացանաձգութեան նպատակը հասկնալու համար, սակայն ծուխից ուրիշ ոչինչ չէինք նշմարում: Սիտիկանցի Հայերը, որոնց ես հաւանական պատճառի մասին հարցնում էի, կարծում էին մի ուրիշ քրպական ցեղի յարձակումը լինել այնտեղ բնակուող Դերվիշ աղայի վրայ եւ կարծում էին դորանով ամենից լաւ կերպով Եւրոպացիներին երկար հարցուփորձ անել չտալ: Բայց ի զարմանս նոցա ես պատասխանեցի՝

«—Այո՛, օտար Գիւրգեր հրացան են արձակում Դերվիշ աղայի վրայ, որի ժամանակ մի տասնեակ Հայեր կը սպանուին, եւ վախճանն էլ այս կը լինի որ գիւրգերը կը թալանեն: Դե՛հ, ես այդ չպիտի թողնուամ, այլ մի զինուորի հետ այնտեղ եմ գնալու անձամբ համոզւեմ Գուրգերի ընթացքին: Ինձ շատ հաճելի է որ մի անգամ եւս մի այդպիսի արշաւանքի վկայ լինիմ, եւ ճշմարտութիւնը Եւրոպա հազար դեմ»: Այս բանի վրայ խնդրեցի ինձ ուղեկցող հեծելազօրքի սպաներին, ինչպէս եւ ժանդարմները սպային, իրենց մարդիկը հեծցնել տան եւ ինձ հետ իմանձեր ուղեկցել տան: Մինչդեռ գնալու վրայ էինք, մի ալեհեր ծերուկ եկաւ, որ եւ մեր մարդկանց մի երկար պատմութիւն սկսեց պատմել: Իմ հարցին, թէ այդ ծերունին ին՞չ է ուզում, ինձ պատասխանեցին, թէ նա պատմում է որ այնտեղ իմանձերում Դերվիշ աղայի տանը մի մեծ քրդական հարսանիք է լինում, եւ թէ Քրդերը ինչպէս յիմարացած անդադար հրացաններ էին արձակում, ճիշդ այնպէս որ կարծես թէ փամփուռչոտները ոչինչ արժէին:

«— Եւ որտեղի՞ց է սա իմանում ծերունին:»
 «— Նա ասում է, թէ այս առաւօտ Դահիր գիւղից ցածրացել է մի խումբ Քրդերի հետ, որոնք հարսը իմանձեր են բերել եւ ճանապարհին էլ հրացան են արձակել:»

«— Եւ որտեղացի է ծերունին:»
 «— Բայց նա բոլորովին Հայի նման է»՝ պատասխանեցի:

«—Օ՛, ոչ, ասացին, նա մի Գուրգ է:»
 Դորա վրայ հանդատացայ եւ թողնեցի իմանձեր երթալու ծրագիրս, որովհետեւ ոչ մի ախորժակ չունէի իր մանրամասնութիւնով ինձ քաջածանօթ մի քրդական հարսանիքի համար կէս օր կորսնցնել:

Սակայն ինչպէս յետոյ յայնուեցաւ ծերունիին բոլոր պատմածները սուտ էին, եւ ինք ծերունին էլ բացարձակապէս ոչ թէ Գիւրգ այլ Սիդիկանցի մի Հայ էր եղել: Սիդիկանցիք

սակայն յարգելի պատճառներ ունէին ինձ իմանձեր գնալու մտքից հրաժարեցնելու, ուր ապստամբներին հանդիպելու էի. որովհետեւ մի կողմից ինձ կարող էր մի բան պատահել — այստեղ պիտի նկատել, որ ապստամբները միշտ աշխատել են ճանապարհների վրայորեւէ կերպ Եւրոպացի ճամբորդների չպատահել, դորանով նոցա համակրանքը չկտրելու համար — միւս կողմից՝ ինձ ընկերացող զինուորներն ու ժանտարմները Դերվիշ աղային եւ իմանձերում բնակող Քրդերին, որոնց ֆէզայինները մորթելու նպատակը ունէին, օգնութեան հասնելով ապստամբներին հետ կտուր էին բռնուելու:

Ինչպէս վերջը իմանձերի ձերբակալուած ու սուցչի ասածներից երեւում է, ահա թէ ինչ է անցկացել այն ժամանակ. ապստամբները իմանձերին են մօտեցել նորան շրջապատելու նպատակով՝ Քրդերու փախուստը արգելելու համար. սակայն Դերվիշ աղան նոցա կանուխ նկատելով՝ խկոյն մի հեծեալ սուբանդակ է ուղարկում մօտ 20 քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող թոփրաքաղան, այնտեղի գույձազամին ֆէզայինների երեւան գալը տեղեկացնելու: Ապստամբները թեպէտեւ սուբանդակին հետապնդել էին, սակայն իրենք հետիոտն եւ նա ձիով լինելուն համար չէին աջողել բռնել: Սրդէն կասկած չկար, որ մի քանի ժամից տաճկական զինուորների եւ ժանդարմների զալուեն սպասելու էին: Ֆէզայինները յայտնում են իրենց ծրագիրը հայ գիւղացիներին, որ կայանում էր սարահարթերի միջով դէպ ի հարաւ մինչեւ Մուշի հարթավայրը անցնել, այնտեղ Սերոբեան խմբին միանալով, դէպ ի անմատոյց, դորա համար էլ միշտ պաշտպանուելիք, Դաւորիկի լեռները, Մուշից հարաւ քաջուիլ, ուր մի հայկական թագաւորութիւն են հիմնելու եւ Սերոբ փաշան էլ թագաւոր է ընտրուելու: Գիւղացիներին հրաւիրում են իրենց դէպ ի հարաւ արշաւանքին միանալ, բայց եւ նախ օգնել իրենց Դերվիշ աղային եւ իր ընկերներին, իրենց չարչարողներին ու արիւնը ձոնողներին, անդիի աշխարհ ուղարկել:

Եւ երեսայական միամտութեամբ գիւղացիները հրճուանքով այս խնդրի գաղափարին համաձայնում են, զինուած են ապստամբների բերած անհամար հրացաններով եւ ֆեզայինների հետ միասին սկսում են Դերվիշ աղայի տունը փակուած Քրդերի դէմ կռուել, այսինքն Դերվիշ աղայի, նորահղօթ, որ Համիդիէի «լէյզդրնանդ» էր, եւ չորս ծառաների դէմ: Քրդերը կրակին պատասխանում էին քանի զեւ կարող էին, սակայն քիչ ժամանակից նոցա մեծամասնութիւնից յաղթուելով սպանուեցան: Այս այն հրացանաձգութիւնն էր, որ մենք յրացի Սիդիկանում առաւօտեան ժամը Աին լսեցինք:

Այս միջոցին Ալաշկերտի գայձաղամբ ամենայն փութկոտութեամբ քսան ժանդարմներ հաւաքել էր, որոնց հետ ինքն էլ, ընկերացած մահմետական ութն մեծամեծներով — որոնց թուււմ Բեխելուլ փաշայի որդին Իսհակ պէյը—

աճապարանօք զէպ ի Խանձեր է ձիւվարուս ,
 աշնտեղ ապստամբներ զէմ կուուելու համար :
 Սակայն Ֆէզայիները եւ նոցա միջոցաւ զի-
 նուամ գիւղացիները փոխանակ Քրդերի յաջող
 սպանուածից յետոյ մօտակայ սարահարթերը
 գիւմելու գիւղին մէջ եւ գիւղին շուրջը աշ-
 խատել էին որքան կարելի է ամբանալ : Մէկ
 մասը տիրել էր գիւղին , մի ուրիշը գործում
 էր գիւղին բոլորովին կպած մի բլուրի վրայից ,
 մինչդեռ մնացածները գիւղի միւս թեւին մօտ
 վաւելափայտերի մեծ գէզերի յետեւում ամբա-
 ցել էր : Սկսուեց մի երկարժամեայ հրացա-
 նաձգութիւն որը սակայն անհետեւանքանցաւ :
 Ճաշից յետոյ երկու ժամ հեռաւորութեան
 վրայ գտնուած Մոլլա-Սիւլէյման գիւղից քսան
 զինուորներով օգնութեան հասաւ հեռեւակ
 զինուորների հարիւրապետը Ալի էֆէնտին :
 Մինչեւ այդ ժամանակ դեռ շարունակ ակար
 էին կառավարական զինուորական խումբերը
 Ֆէզայիների հանդէպ : Միայն երբ ժամը ութի
 մօտերը Թոփրաքալէի հեծեալ շոկատը եւ
 երեք ժամ հետո Դութաղի զինուորները հա-
 սան , Ֆէզայիները այլեւս յարմար համարեցին
 զէպ ի սարահարթերը քաշուիլ : Ամբողջ կու-
 բուստը Թրքերի կողմից , մեռածներ՝ Իսհակ
 պէյը եւ չորս հետեւակ զինուորներ , վիրա-
 ւորուածներ՝ ժանդարմների մի տասնապետ
 եւ չորս զինուորներ : Բաց ի սոցանից հինգ ձի-
 ւեր էին սպանուած : Հայերի կողմից տասնու-
 հինգ Ֆէզայիներ եւ երեսուն զինուած գիւղա-
 ցիներ սպանուեցան , բնական է ամենամեծ
 մասը սոցա զէպ ի սարահարթերը նահանջե-
 լիս : Մի Ֆէզայի էլ ձերբակալուեցաւ : Թէ ար-
 զեօք մնացած մասը մինչեւ Մուշ հասնելու է ,
 բաւական հարցական է երեւում , որովհետեւ
 Քրդերը , ինչպէս արիւնուուշտ շնորամէն կող-
 մից որսի են դուրս գալիս նոցա վրայ , մասնա-
 ւորապէս ուսուական գեղեցիկ զինուորական
 հրացանները ձեռք ձգելու համար , որոնց հատը
 այնտեղ 450—500 մարկ արժէք ունի : Յամե-
 նայն զէպս ապստամբները այնտեղ այլեւս Սե-
 րորի խումբը չեն գտնելու , որովհետեւ
 ձիւղ միւսնոյն ջրն երբ Խանձերի կռիւը պա-
 տահեց , նոյնպէս Սերորը գրեթէ իր բոլոր ըն-
 կերներով սպանուեց :

Ինչպէս ասացինք տաճկական կառավարու-
 թիւնը այս վրդովումները միմիայն ժանդարմ-
 ների եւ կանոնաւոր զօրքերի օգնութեամբ
 կարողացաւ խեղդել , հրաժարելով Համիդիէ
 աւազակների օգնութիւնից : Երբ յաջորդ օրը
 բոլոր այս պատահարները Քուրդերն իմացան ,
 մեծամեծ հոսանքներով սկսեցին թափուել
 մահմետական երեք պէյերի մահուան վրէժը
 որքան կարելի է շատ անմասնակից եւ անպաշտ-
 պան Հայերից լուծելու եւ ամէն բանից առաջ
 որքան կարելի է շատ թալանելու : Ընդհանուր
 սարսափ պատեց Ալաշկերտի շրջակայ հայ գիւ-
 ղացիներուն , եւ բնակիչները իրենց ամբողջ
 ինչքերը թողած սկսեցին փախչիլ զէպ ի Թոփ-
 րաքալաւ : Աւելորդ է ասել , որ երբ խեղճերը

իրենց գիւղերը վերադարձան աներում մերկ
 պատերից ուրիշ ոչինչ գտան . քաջ Քուրդերը
 ամէն բան կամ սրբել տարել էին եւ կամ ու-
 չընչացրել . այնպէս որ գեղացիները ամէն բան
 բոլորովին նորից են սկսելու :

Ի միջի այլոց կառավարութիւնը նախագ-
 ւորչութիւններ էր ձեռք առել Քուրդերի մեծ
 յարձակումների առաջն առնելու , մասնաւորա-
 պէս նոցանից կազմուած եւ Ալաշկերտի Հայե-
 րից շատ վախցուած մեծ կոտորածի համար :
 Օրինակի համար , այն հայկական գիւղերում ,
 որտեղեւում ամենից աւելի երկխաւի էր որ
 մի ջարդ կը լինի Քուրդերի կողմից ,
 ալպիսի տեղեր զինուորական ջոկատներ ու-
 զարկուեցաւ քրիստոնիստների պաշտպանու-
 թեան համար : Եւ երբ նոյեմբերի 8ի չու-
 րեքշաբթի օրը մի մեծ քրդական խումբ Մին-
 կի-Թեփէ հայ գիւղի առաջն յայտնուեցաւ
 բնակիչները սրէ անցկացնելու եւ սը-
 ները թալանելու , եւ երբ այնտեղ ուղարկուած
 հեծելազօրքի սպայի պահանջին չանսալով
 չհետապան , մի կարճատեւ հրացանաձգութիւն
 սկսուեց մի կողմից զինուորների եւ միւս կող-
 մից Քուրդերի եւ Համիդիէների միջեւ , որի
 ժամանակ մի Քուրդ եւ զինուորների մի ձի
 սպանուեցան : Հակառակ սակայն այս բոլոր
 նախազգուշական միջոցներին կառավարու-
 թիւնը անկարող էր արդիւիւ կթէ այստեղ
 կամ այնտեղ մոլեռանդ մահմետականները
 ծածկապէս մի հայ էին սպաննում , այսինքն
 Խանձերցի եւ Սիդիկանցի գիւղացիներից , ու-
 ռոնց զէմ բնականաբար իշխում էր չափազանց
 դաւնութիւն : Սակայն Հայերի կողմից վախե-
 ցուած սոսկալի ջարդերը տեղի չունեցան ,
 որի համար շնորհակալ պիտի լինել էրզրումի
 մարզաւէր վալի Ռատֆ փաշայի ձեռնարկած
 միջոցներին :

Երբ սա ձերբակալուած Ֆէզայից հարցու-
 փորձի ժամանակ տեղեկացել էր ուսուական
 սահմանազլիի գիւղերում գտնուած Ֆէզայիներ
 րի երկրորդ պէսի մասին , հաղորդել էր այս
 տեղեկութիւնը էրզրումի ստական ընդհանուր
 հիւպատոս Մաքսիմովին՝ խնդրելով որ Տփլիս
 տեղեկացնէ որ ուսական կողմից դազարեց-
 նեն խումբերի անցնելը , որոնց մէջ մտած կոյր
 մարդիկը զէպ ի Տաճկաստան անցնելով իրենց
 մահուան են գիւմում : Այս քայլի հետե-
 ւանքի մասին ոչինչ լուեց , որովհետեւ
 կթէ ոչ եւ իմ ուսական բարեկամների միջո-
 ցաւ ուսական կառավարութեան կողմից մի
 այգպիսի արտակարգ կարգադրութեան մասին
 անշուշտ կ'իմանայի : Հաւանականաբար ապրս-
 տամբները թեւադրուած են միայն մի քանի
 ամիս սպասելու եւ յետոյ Տաճկաստան անց-
 նելու համար :

Ի միջի այլոց այս բոլոր պատահարները չու-
 չափելի կերպով ապացուցանում են , որ Լոն-
 տոնի յեղափոխական կոմիտէն իր գործ դը-
 բած ամբողջ խոտովութիւններով բացառաբար
 Քուրդերի պորձն է հոգում , այս բանին է նը-

պատուով որ աշխատանքը արհամարհող (աւագակա) աստեղտական ժողովուրդը անխիթ է գտնում հայկական գիւղերը թալանելով՝ ապրելու համար անհրաժեշտը առանց նեղութեան հայթայթել :

ՏՐ. ՎԱԼԴԻՄԻՐ ԲԵԼԿ

(«Ֆրանսիական Չայթուենկ», 1900, Թիւ 5, 8, 10)



ՄՈՌԻՍ ՊԱՌԷՄ՝ «ԵՐԿԱԹ»Ի ՄԱՍԻՆ

Ազգայնականութեան գաղափարը ջատագովող յօդուածէ մը դոր Մորիս Պառէս հրատարակած է «Լը ժուրնալ» ի մարտ 1 թուոյն մէջ, կը թարգմանենք հետեւեալ հատուածը ուլ ֆրանսացի գրագէտը կը պանծացնէ Ս. Ղազարու վանքն ու «Տիգրան Երկաթ»ը իբրև «ազգայնական» մեծ ուժեր :

... Այդ խանդավառ ժողովքէն դուրս ելլելուս, գիշերին մէջ միայնակ, միտքս կ'առաջնորդուէր գէպ ի աշխարհիս ամենահետաքրքրական վայրերէն մէկը, սրբազան վայր մը ապահովապէս, ուր արմատախիլ եղած եւ տիեզերքին չորս կողմը ցրուած ժողովրդի մը պատգամաւորները կ'աշխատին պահպանել, կամ՝ աւելի ճիշդ, ստեղծել իրենց ազգայնութիւնը, իրենց հասարակաց գիտակցութիւնը : Աշխարհիս ամենէն գեղեցիկ բնապատկերներէն մէկուն մէջ, Վենետիկեան լճակին վրայ, Ս. Ղազարու հայկական վանքն է այն :

Բոլոր զբօսաչըջիկները անոր սքանչելի տեսարանը կը ճանչնան . արեւը մայր կը մտնէ եկեղեցիներուն եւ Ս. Մարկոսին գմբէթները լուսավառելով . սեւ կոնտուրները արծաթէ ջուրերուն վրայ կը շրջին . պալատները կ'երկարին Սքիավոնիի քարափին վրայ . հանրային պարտէզներէն եւ Լիտոյէն ծառերն ու դաւարիքը Ագրիականին մէջ կը հակին . հեռաւոր զանգակատուններէն «Ավէ Մարիա»ն կը հնչէ . եւ այս ամբողջ գեղեցկութիւնէն թեթեւ տենդ մը կը բարձրանայ :

Բայց ազգայնական տեսակէտով, այդ Ս. Ղազարու կղզեակին գեղեցկութիւններն ու տենդերը մեզի աւելի կարեւոր պիտի երեւան : Վանքը որ մօտ երկու դարէ ի վեր այդ փոքրիկ հողին վրայ կը գտնուի, զինք պաշարող թոյլ հեշտանքներուն ուշադրութիւն չի դարձնիր երբեք . իր բնակիչները, հայ Բենետիկեաններ, զիրենք կը նուիրին իրենց

մէկ քանի հարիւր զեռատի հայրենակիցներու զատարակամանը դործին : Վարպետ ու աշակերտ, երեւակայութեամբ կ'ապրին Հայաստանի անհաւասար, ա' յնչափ ցուրտ ու ա' յնչափ սաք, կլիմային ներքեւ Երազներու ատեն ի'նչպէս պիտի գտնեն, քանի որ անասան ման աշխատութիւն մը կը գրաւէ զիրենք, եւ այն ուրիշ բան չէ բայց եթէ ստեղծել, պահպանել, կամ եթէ կ'ուզէք վերադառնել հայկական ազգութիւնը :

... Տեսայ իրենց աշխատանոցը . տղարան մըն է : Իրենց չքեղ մատենադարանին մէջ հայ ժամանակագիրներու ձեռագիրները հաւաքած են : Ահա ատոնք են իրենց ազգայնականութեան բոլոր միջոցները :

Իմ ամենէն սիրելի բարեկամներէս մին, նշանաւոր գրագէտ մը, խանդավառ հայրենասէր մը, այն երիտասարդ Հայը որ «Ռըվիւ տէ Ռըվիւ»ին մէջ «Տիգրան Երկաթ» ստանուումով օսմանեան պետութեան այլազան ցեղերուն վրայ առաջնակարգ ուսումնասիրութիւններ կը ստորագրէր, իր հայրենակիցներուն մասին սա տողերը կը գրէր . «Թէպէտ ամէն տեղ իրենց կ'ընկերանար միշտ կոխոտուած ու միշտ արիւնտաւած հայրենիքի մը յիշատակը, անոնք յամբարար իրենց պատմութիւնը կը մոռնային . Իտալիոյ մէջ արդէն իտալերէնը կ'ընդգրկէին, Տաճկաստանի ու Պարսկաստանի մէջ կը թողնէին որ իրենց լեզուն ապականի բարբարոս ստութիւններու խառնուրդով » :

Ս. Ղազարու Ակազեմիան լեզուն պահպանած եւ զպրոցներով զայն տարածած է : Իրենց գրքերը, յիշեցնելով Հայերուն իրենց ծագումն ու անցեալը, նախ եւ առաջ արթնցուցին ազգային գաղափարը : Դպրոցներն ալ տարածեցին զբնականութեան ու հայրենիքի պաշտամունքը : Այս աքսորի մեծաստանին մէջ է որ ստեղծուեցաւ Հայոց հայրենասիրական մատենագրութիւնը :

... Ս. Ղազարու վանքին զատարակութեանը կարելի է մեղադրել անոր շեշտուած կրօնական նկարագիրը եւ շատ պատմական մշտանգութիւնները . երիտասարդ Հայերը, նուրբը, կը նկատեն թէ այն գիտական կրթութիւնը զոր Թիֆլիսէն ընդունած են՝ մասնաւորապէս թանկագին եղած է ազգային մտածումին : Հայրենիք մը ձեւացնելու համար, յիշատակներու ժառանգութիւն մը պէտք է : Վենետիկի Ս. Ղազարը զայն կ'ընծայէ Հայերուն, բայց պէտք է նաեւ ծրագրի մը

ուհնենալ իրագործելու . այդ ծրագիրը կրնան ընդունիլ Թիֆլիսէն , ուր յեղափոխական ամենէն նոր մտածումները կը խմորուին : Այսպէս Հայաստանը կը ստեղծուի երկու աշխատանոցներու մէջ : Բայց սա կէտը անհերքելի է թէ աշխարհիս ամէն կողմը տարտղնած ազգ մը , որուն երկիրը բաժնուած է Ռուսաստանի , Պարսկաստանի եւ Օսմանեան Պետութեան միջեւ եւ որուն զաւակներ՝ իրենց առեւտուրին կամ բնական տեղերուն պահանջներէն մղուած՝ բաղմալեղու են , կը պահպանուի կը վերակազմուի մատենադարանով մը եւ տըպարանով մը :

... Ու թանկագին յիշատակը Տիգրան Երկաթին որ այս օրերս մեռեր է քսանութը տարեկան՝ իր ազգին համար տածած անկարող տարփանքէն սպաննուած , մտքիս մէջ կը խառնուի այն հզօր զբաղումներուն որոնց մէջ տեսայ այդ վանքը եւ զայն շրջապատող բանաստեղծական պատկերները :

ՄՈՌԻՍ ՊԱՌԷՍ



ՑԱԻ ԽԱՉԻՆ ՏԱԿ


— 0 0 —

Վ. Ն. ԻՆ

Ցաւի խաչին տակ հասկացանք իրար . . .
 Վէրքերի շղթան կապեց մեր սրբեր .
 Եւ այդ օրունից իրարու համար
 Դարձանք սրբակից աննենդ ընկերներ :

Լաւ օր չըտեսանք , մեր խեղճ հոգիներ
 կապտեցան անվերջ բազդի մրտրակից .
 Տառապանքի մէջ սիրա՛ծ իմ ընկեր ,
 Ա՛խ էլ ինչո՞ւ լալ այս նոր հարուածից :

Սըրբի՛ր արցունքդ , օ՛ , դա չէ՛ վայել
 Տառապանքների չարքաչ որդեգրին .
 Եւ անմահի պէս սովորի՛ր նայել՝
 Մի՛շտ հեգնող ժըպտով՝ կեանքի խաղերին :
 Պարել ԱՐԱՄ ՉԱՐԸԳ



ՊԱՏԳԱՄԱԽՈՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏԻՆ

Շար . (*)

— 0 0 —

Եթէ ի Պոլիս երկու օր միջոց տուած ըլլային ինձ , վախնալով գործին պատասխանատու թեւնէն , չէի յանձն առներ գալ հոս , բայց հիմա կը տեսնեմ որ պէտք է ոգի ի բոլին աշխատիլ սխալ քայլ չառնելու , զանոնք ի գործ եւ ի միութիւն մղելու , գործը պարագայից համեմատ վարելու , միշտ ծրագրելու Պոլսոյ հրահանգներուն համեմատ՝ որ ազգին բաղձանքն է :

16/28 Յուն . — Խրիմեան տխուր եւ լուռ է : Նարպէյ ալ տկար եմ ըսելով պառկած է . բոնի հանեցի զինքը որ Անգղիոյ գեսպանատան գրերը գրէ :

Յանկարծ Մելիքօֆ զօրապետը եկաւ . ուրախութեամբ շրջապատեց զինքը . խել մը մը տերմական խօսքերէ յետոյ խնդրեցինք որ բարեխօսէ մեր գործոյն համար Կորչաքօֆի քով . « Պիտի գնամ , կը խօսեմ , ըսաւ , բայց ես զինուորական եմ , դո՛ւք գործեցէք եւ կտաւ վարութեանց մէջ խտրութիւն մի գնէք . ամենէն օգուտ քաղել ջանացէք . Գ դար է որ հայ ազգին այսպիսի մի բարեպատեհ առիթ չէր պատահած , օգուտ քաղելու է » : Մերթ Ֆրանսերէն եւ մերթ հայերէն կը խօսէր շատ սիրալիր կերպիւ :

Յետոյ Նարպէյի հետ ներքին սենեակն առանձնացաւ եւ ապա մեկնեցաւ :

Մելիքօֆին մեկնելէն յետոյ , ցրուեցինք , ես , Չերազ եւ Տ . , երրորդ կարգի լիազօրաց գրերը :

Վերադարձին տեսանք որ Օ . եկած է որուն պատմեցի երէկուան անցքը ի մասին Նուպարի եւ մեր ըրածը . « Երբ նեղը մնանք քեզի պիտի զիմենք » աւելցուցի :

— Ժամը կին Բոցտամ գացին :

— « Տէպա » ի եւ « Թան » ին թղթակիցներուն յանձնեցինք մեր թղթերը որ տպուին : Ալ այսուհետեւ ձայն հանելու հոգը պէտք է ունենանք :

— Նարպէյ եւ Խրիմեան վերադարձան ու նկարագրեցին ընդունելութիւնը :

— Նարպէյ գանդատեցաւ թէ զինքը մարդու տեղ դնող չկայ . ամէն բան Խրիմեանի անունով կուգայ եւ կ'երթայ : « Ըրածդ բըծախնդրութիւն է , ըսի , դուք մի էք եւ ոչ երկու . ուստի անուն պահանջելը տղայութիւն է » :

Խրիմեանի ծանրութիւնը Նարպէյի քով եւ Նարպէյի բարեձեւութիւնը Խրիմեանի քով կը պակսին . այս երկու յատկութիւնները Ներսէսին վրայ կան . երանի՛ թէ ան միայն եւ

(*) Տես « Անահիտ » , Բ. Տարեի , Թիւ . 1—2, 3 :

կամ ըլլար եւ այժմ այս ոգեմաշ վիճակին մէջ չէինք գտնուեր . երկուքը իրարու հետ , երկուքը մէկէն եւ առանձին ինձ հետ եւ Չերազի հետ հաշտ պահել պէտք է եւ գործին ալ եւ տեւէն ըլլալու է : Ամէն բան մենք պիտի մըտածենք, պատրաստենք որ իրենք կա՛մ ստորագրեն եւ կա՛մ կառքը նստին ու երթան :

Պոլիս նամակ գրելու անգամ կը դժուարանան : 17/19 Յուն . — Նարպէյ Լորիս Մելիքոֆին այցելութիւն տալով վերադարձին ըսաւ թէ Ռուսական զեսպանատունէն շատ վերաւորուեր են որ իրենց այցելութեան չեն գացեր :

Դիտել տուի իրեն թէ Ռուսաց կողմէն , մանաւանդ Կորչաքոֆի կողմանէ մեր քարթին իբրեւ պատասխան ոչինչ եկաւ . սաի անգամ մը ալ ըսած էի իրեն եւ ինքը միշտ առանձին գուրս ելնելէն եւ վերադառնալէն յետոյ «ժէօմենին տեսայ, Եռվանօֆը տեսայ» կ'ըսէր եւ խնդրած էի միջոցը գտնէ պատճառը հասկընալու . որ մ'ալ պատասխան բերաւ թէ Ռուսերը զմեզ խնայելու համար հետոները կը պտտին , որպէսզի Անգղիոյ բարկութիւնը չչարժեն . շնորհակալութեան արժանի քաղաքականութիւն մը համարեցինք եւ լոկցինք , մինչդեռ այսօր հակառակը կը լսենք , ուստի ըսի իրեն թէ կամ առաջին տեղեկութիւնները չին ծու էին եւ կամ այս :

Նարպէյ վշտացաւ եւ իւր արքեպիսկոպոստութիւնը յառաջ քշեց ի վկայութիւն ճշմարտախօսութեան :

— Նարպէյ ուղեց գիշերը ժամը 10ին Մելիքոֆի երթալ «անկածե եմ» ըսելով . չթուղուցի , այլ ստիպեցի որ Ֆրանսական երեկոյթին երթայ Խրիմեանի հետ . Խրիմեան առարկեց որ Ֆրանսերէն չցիանալուն իւր երթալը օդու չունի , հետեւաբար մերժեց :

— Նարպէյ եւ Չերազ դացին , եւ ի՛նչ զեղեցիկ արգիւնք . . . Մ. ի միջոցաւ Պիքոնսֆիլտի ներկայացեր են , պայմանաւ որ քաղաքական նիւթի վրայ չխօսուի . շատ մարգավարութեամբ (!) ընդուներ է . ներկայացեր են նաեւ Անարասիի որ խոստացեր է ընդունիլ զիրենք՝ երբ կարգը Հայոց խնդրոյն գայ :

— Չերազ ստուգեր է թէ ուս զեսպանատան քարթները տեղը չեն գացած : Ուրեմն , ըսի , վաղը անպատճառ անձամբ երթալ պէտք է . զի Պոլիս երբեք Ռուսաց դէմ փոքրիկ դժգոհութիւն մը չունի , լնդհակառակը գոհ եւ շնորհակալ է :

— 18/30 Յուն . — Օ. եկաւ , կ'ըսէ որ թըղթերէն տանք թուրք զեսպանաց . ըսինք թէ արդիլուած ենք . կայսրուհիէն ունկնգրութիւն ինդրելու խորհուրդը տուաւ եւ Չերազին մէկ քանի թերթի թղթակից ցոյց տուաւ :

Այցելութեան գացին զեսպանաց , եւ ուս զեսպանին հետ տեսնուեր են :

— Մ. *** ի հետ առանձին տեսնուեցայ , գրեր է Նուպարին որ պայ . Խրիմեան Նուպարին վալիութեան համար կ'աշխատի եւ իր քաղաքականութիւնն ալ հակառուս երեւնալն է :

Չերազ սովորականին համեմատ յուզեալ է . ըսի իրեն որ արի կենայ , բան չեն կրնար ընել , ոչինչ կ'ըլլայ Պոլսոյ որոշմանց եւ հըրահանգներուն հակառակ :

— Պոլսէն հեռագիր եկաւ որ կ'ըսէ թէ առանց հայ վալիի եւ հայ պաշտօնակաշներու՝ բարեկարգութիւնը խարէական է :

Խրիմեան ծիծաղեցաւ թէ աս ալ գրելու բա՛ն է . — ըսի . «Ես ձեզ պատմեցի թէ Պոլսոյ մէջ ի՛նչ անձկութիւն կը տիրէ . երեք-երեքուկէս ամիս է որ Պոլսէն ելած էք ու չէք գիտեր . անոնք ձեր հոս ունեցած հանգիստ սրտին քառորդն անգամ չունին , դուք մէջն էք եւ մօտէն գիտէք ամէն բան , մինչդեռ անոնք միշտ այս կոծութեան մէջ են :

Սեղանին վրայ ալ կարգ մը անհաճոյ խօսքեր ըրաւ Պոլսոյ գործողներուն վրայ , եւ ինքզինքը գովեց ու իրեն հետ Նուպարի մեծուստը :

Այն արեք Նուպարին վրայ շինուած է . զարմանալի՛ բան . Խրիմեան պատրիարք եղած ատենը փոխանակ քաղաքական ժողովին հետ խորհրդակցելու , Ն * * * ի տունը կ'երթար , այսինքն՝ Բաղաքական ժողովոյ հակառակ կուսակցութեան , եւ անոնց հետ կը խորհրդակցէր . հիմալ ալ պաշտօն մ'ունի , պատգամաւոր է , փոխանակ այդ պաշտօնը տուողներուն հետ խորհրդակցելու եւ անոնց հետ լեւելու , կ'երթայ Նուպարին կը հետեւի , անոնց հակառակորդին :

Պատրիարքին գրեցի Խրիմեանի այս ընթացքը , Նուպարին վալիութեան խնդիրը զոր կը պաշտպանէ նաեւ Մ. * * :

— 19 Յուն . — Ռուս թերթի մը թղթակիցը Հայոց դէմ գրուած յօդուածը բերաւ : Չերազ եւ Նարպէյ ջանացին համոզել զինքը եւ Հայաստանի կաշմութիւնը Ռուսիոյ շահերուն հակառակ ըլլալը հերքել :

— «Տէպա» ի թղթակիցն ալ կ'ըսէ որ Ռուսերը նեղացած են Հայերուն եւ ուս թերթերը Հայոց դէմ կը գրեն :

Կա՛մ պատճառաբանութիւն է այս Ռուսաց կողմէն եւ կամ ձեւ . եթէ տաջինն է՝ դէշ , եւ եթէ երկրորդը այնատեն լաւ է մեզ համար :

Մենք ամէն հնարաւորութիւն գործ գնելու ենք այս ուս եւ անգղիական ազգերուն մէջ չէզոքանալու . ոչ միոյն ատելութիւնը եւ ոչ միւսին նախանձը գրգռելու ենք ձեռքի տակէ աշխատելու ենք երկուքն ալ առանձին իրենց շահուց մասին համոզել եւ մին միւսէն նախամեծար բռնելու միտում երբեք չունենալ :

Նարպէյ ի՛նչ լաւ դերձանով կապեր է Ռուսաց կողմը :

— 20 Յուն . — Պոլսէն նամակ եկաւ որ կը պատմէ օսմ . կառավարութեան միանկ վիճակը : Նարպէյ ի գրուած էր միարան աշխատիլ եւ Պատկանեանի համար գործել :

Խրիմեանին՝ թէ Չերազը ապագային պիտի պտտմէ եւ Փափազեան ազգային ժողովի բեմէ պիտի հոչակէ ձեր այս աշխատութիւն , եւն :

Խրիմեան ըսաւ՝ «Չմեզ սղու տեղ գրեր են

եւ քաջալերութիւն կը գրեն ու պսակ կը խոստանան :»

— Այս մարդուն հոգին լաւ չկրցայ ըմբռնել . մեր ինդրոյն վրայ առնուած ուրախատիթ լուրի մը վրայ փոխանակ բերկրելու , կը արտմի , կը լռէ , Չերազի ուրախութիւնը կամ մխիթարութիւնը կը ծաղրէ , եւ յետոյ կը թմրի կը մնայ . իսկ Նարպէյ իր անձնական նամակներուն կը զբաղի , միշտ , առաւօտէն մինչեւ երեկոյ եւ երբեմն գիշերներն ալ . մէկ մ'ալ յանկարծ կ'աներեւութանայ եւ ժամերով բացակայ կը մնայ կ'ամ իւր ժառանգական իշխանութեան խնդիրը ապահովելու եւ կամ թղթակիցներու այցելութիւն տալով անոնց իւր անձը մեծցնելու :

Հոգի առնելու եւ հոգի տալու օրերը հասած են եւ մենք զեւ մեծ բան մը չենք ըրած . գոնէ առանձին նստէինք եւ խորհրդակցութիւններ ունենայինք զարձեալ օրուտ է :

Նարպէյի այդ լուր հաղորդելն է որ մեզ անախօրժ կուգայ . ամէն բան զարգարուն եւ իւր անունին յատուկ ընելով կը գրէ եւ Խրիմեան ասդին կը նախանձի ու կը գայրանայ :

— Գիր առ Պիղմարք նախադան Քօնկրէին :

— Գիր առ կրօնապետ Ալմանիոյ :

— Գիր առ Օսթէնլի , երեք օրինակ մեր թղթերէն խրկեցինք :

— Չ՛Ա Յուն . — Խրիմեան կը հարցնէ թէ կանոնագրին մէջ զօրքին ինդիրը ինչպէ՞ս նշանակած են :

«Իրամամբ զուրս եւ անորոջ ձգած են այդ մասը» պատասխանեցի :

Կ'ուզէ որ իրիթիբ ընէ եւ կանոնագիրը թերի ու անյարմար ցոյց տայ . «Մէկ գիշերուան մէջ գրուած է , կ'ըսէ , ուստի եւ աղէկ պատրաստուած չէ :»

«Ընդհակառակը , ըսի , 10—15 օր այնպատուած է վրան եւ ես 17 գիտողութիւններ ունեցայ վրան , որոնց մէկ մասը ընդունեցին եւ մէկ մասն ալ չընդունեցին եւ զիս համոզեցին :»

Միչդեո Խրիմեան կանոնագրին վրայ գիտողութիւններ կ'ընէ , անդին ամենքը կը հաւնին անոր . Լոնտրայի միթիսկին մէջ շատ հաւներ են , ամէն լիազօրները հաւնած են եւ հակառակ գիտողութիւն ընող չկայ :

Լոնտրայի միթիսկին նկարագրութիւնը Չերազ թարգմանեց «Թայմզ»էն եւ Խրիմեան ուրախացաւ . առաջին անգամ է որ մեր խնդրոյն վրայ առնուած յաջող լուր մը կը հրճուեցնէ զինքը եւ «չնորհակալութեան գիր գրելու է» կ'ըսէ , «առ Քարնարլօն , Շէֆթզպրի , Տեն Սթենլի , եւ այլոց» :

ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԱՆ

(Շարունակելի)

ՀԱՅՐ ԵՒ ՅՈՅՆԸ

— 0 0 —

Շար . (*)

Իններորդ դարէն մինչեւ տասնմէկերորդ դարն է որ, — այն միջոցին երբ կայսրութիւնը , Հիւսիսի կողմէ Պուլկարներէն ու Հարաւի կողմէ Արաբներէն յարձակում կրելով , ամենամեծ վտանգի մէջ էր, — Հայերը ամենէն աւելի գործունէութիւն ցոյց տուին յունական դատին համար : Այդ այն շրջանը եղաւ ուր բանակին ու կառավարութեան մէջ ամենէն աւելի նշանաւոր հանդիսացան Գուրգէնեան եւ Ակարենեան հայ ընտանիքները : Վէճի առարկայ զարձած է Վասիլ կայսեր Հայոց թագաւորական տոհմէն սերելուն աւանդութիւնը , զոր թերեւս ինքն իսկ ստեղծեց : Ինչ որ ստոյգ է , սա է որ Հմայեակ անուն Հայուն որդին էր եւ Սմբատի եղբայրը , որոնք , ուրիշ Հայերու հետ , Յոյներու կողմէ Մակեդոնիա զրկուած էին Պուլկարներու յառաջխաղացութիւններն արգելելու համար : Այդ պաշտօնէն է որ Վասիլ , աստիճանէ աստիճան , բարձրացաւ հասաւ մինչեւ գահը , եւ Հարստութիւն մը հիմնեց :

Հայազգի գնդապետներուն մէջէն որ Բիւզանդոնի ծառայեցին , մեծագոյնը եղաւ Յովհաննէս Չմչկիկ : Ասորիքի բոլոր պատերազմներուն մէջ ընկերացաւ Նիկիփոր Փոկասին , Հայէպի Սուլթանին գէմ կոուեցաւ , յանդուգն յարձակումով մը Անտիօքը գրաւեց : Այս վերջին յաջողութիւնը կայսեր եւ իր միջեւ հակառակորդութիւն մը հաստատեց որ աւարտեցաւ Փոկասի սղբերգական մահուամբն ու Չմչկիկի գահակալութեամբը : Կարծահասակ , օժտուած , թնդերային զօրութեամբ մը որուն չափը ցուցուց արար ու պարսիկ ըմբռնելուն , չիկահեր , յօնքերը թաւ ու ճակտին վրայ միացած , խաժակն , Չմչկիկ այսպէս նկարագրուած է մեզի : Մարմնական ուժին զոր իր հայրերէն ժառանգած էր , իր որդեգրած հայրենիքին զարգացումը կը միացնէր : Բարբաբոսներուն մէջ է միայն որ կարելի է լոկ բիրտ ուժի գերազանցութեամբը տիրապետել : Չմչկիկ իր զօրագունդերուն կ'ուզէր ճառեր որոնք զինքը սիրելի կը կացուցանէին բոլոր Յոյներուն : Պուլկարներուն եւ Արաբներուն վրայ իր տարած յաղթանակները կայսրութիւնն ամրապնդեցին : Դաբնիներով ծանրաբեռն Ա...

(*) Տես «Անահիտ» , Բ. Տարի , Թիւ 3 :

սորիքէն դառնալուն , թունալից բաժակ մը իրմէ կորզեց թագը , զոր ինք ալ ոճիրի մը կը պարտէր : Իր թագաւորութիւնը կարճատեւ եղաւ , բայց իր մատուցած ծառայութիւնը ո եւ է ժէսթէ աւելի լաւ կը բացատրէ եւ կը խորհրդապատկերէ մեր շահերուն մտերմութիւնը՝ դարերուն մէջէն : Արագ սլացքով մը , մերթ չիւսիսի թշնամիին դէմ վազեց , մերթ Հարաւի թշնամիին : Սուրը զոր իր թանձր ու ջղուտ ձեռքը բռնեց , հելլենականութիւնը փրկեց մահմետական վտանգէն :

Եթէ համայնագնին ակնարկ մը նետենք տասներորդ դարուն վրայ , կը տեսնենք որ Յոյներուն եւ Հայերուն սերտ դաշնակցութիւնը իրեն արդիւնք ունեցաւ անոր փայլ մը եւ զօրութիւն մը տալ զոր կորսնցուցած էր յորմէհետէ Արաբը Անատոլուի նահանգները , նոյնական ծովափունքն ու գրիթէ բոլոր կղզիները գրաւած , Կ. Պոլիսը երկու անգամ պաշարած եւ Սելանիկն ու Կրետէն առած էր : Զուգայարգար յարձակման մը հետեւանքով , մահմետականները վանուեցան այն բոլոր գիրքերէն ուր զօրք կը պահէին , Տաւրոսի վրայ ետ մղուեցան , Կիլիկիայէն՝ դուրս հանուեցան , ասորական աւազներուն մէջէն հալածուեցան : Հալէպը առնուեցաւ , Անտիոքը աղատուեցաւ , Սելանիկը նորէն Յոյներուն ձեռք անցաւ , վերջապէս՝ մեծ ճիգէ մը յետոյ՝ Կրետէն փրկուեցաւ : Միեւնոյն ատեն , Մակեդոնիան հելլենական ազդեցութեան շրջանակին մէջ կը մտնէր . Պուլկարները ետեւէ ետեւ մէկ քանի անգամ պարտուած , իրենց ցանկութիւնները կը սահմանափակէին՝ միայն Դանուբի հովիտը ձեռքերնին պահելու : Այսպէս , մեր երկու ազգութիւնները , իրարու վրայ կրթնելով , կրօնքի , վաճառականութեան եւ պատերազմներու խանդավառութեան մէջ միացած , անկորուստ պահեցին , փառաւոր գործակցումով մը , ժառանգութիւնը այն յատկութիւններուն որոնց այսօր աւանդապահներն ենք մենք :

Ինծի կը թուի թէ իմ միտքս շատ ծանր է , եւ թէ շատ կոշտ գծերով կը պատկերացնեմ անցեալին կեանքը : Կ'ուզէի ձեզի ցուցնել , նրբազնին մանրամասնութիւններով , որոնք այս ճառին մէջ իրենց տեղը չեն կրնար ունենալ , ինչ որ եղան մեր երկու ժողովուրդներուն ներքին յարաբերութիւնները այդ բիւզանդական շրջափակին մէջ : Ատոր զգայութիւնը ունեցայ , եւ իրիկուններ կը յիշեմ ուր շատ ներուժ եղաւ այդ վաղալութիւնը , երբ Պրոպոնդիսի պարիսպին առջեւէն ծովուն վրայէն անցնելով , կը տեսնէի ձկնորաներ իրենց ուղեւորներուն վրայ հակած եւ պարիսպին առամուկներուն մէջ շրջանակուած տուներ ,

առանց կարենալու զանազանել յոյն տուները հայ տուներէն ու ձեր եղբայրներուն դէմքերը մերիններուն դէմքերէն :

Այդ պայքարներու միջոցին , որոնց ընկերացաւ յաղթութիւնը , թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Բիւզանդական կայսրութեան մէջ կորովի շատ մեծ վատնում մը տեղի ունեցաւ : Արդէն մեր երկու ազգերը վարժուած էին Արեւելքի ու Հարաւի բարբարոսներուն հետ մարտնչելու : Մտքերուն չէին անցըներ թէ Արեւմուտքէն լուրջ վտանգ մը կրնար գալ իրենց : Միեւնոյն ատեն որ թուրք հրոսները երեւան ելան , հասան միանգամայն Խաչակրութիւնները : Առաջին Խաչակիրներուն զգացումները անշուշտ շատ յարգելի էին . բայց անոնց շուտով յաջորդեցին ամէն կարգի ուխտաւորներու ընչաքաղց ձգտումները : Արեւելքը աւելի հարուստ գտան քան ինչ որ երազեր էին : Շահագործման ձեռնարկներ սկսան , դրամատուներ հաստատուեցին , Կ. Պոլիսն իր հեթանոսական մեծավայելչութեան մնացորդներէն մերկացուցին , անոր քրիստոնէական արուեստին յիշատակները քանդեցին կամ առին տարին : Հեղինակական այդ աւերակներուն վրայ փորձեցին կանգնել ինչ որ իրենք կը կարծէին թէ լատինական քաղաքակրթութիւնն էր : Ատով ուղղափառութիւնը չխախտեցաւ ոչ Բիւզանդիոսի մէջ եւ ոչ Մեծ Հայաստան : Բայց Կիլիկիոյ հայ իշխանները կաթողիկոսութեան հակեցան ի փոխարէն թաղի մը զոր Պապը շնորհեց Լեւոնին : Յուսաց կայսրը աւսոր ուրիշ թագ մը խրկեց , սա նշանաբանով՝ «Ընդունէ՛ զայն մեր ձեռքէն , եւ ո՛չ թէ ուրիշ ձեռքէ , եւ յիշէ որ մեզի աւելի մօտ ես քան Հոռոմն» : Այս պատուիրագրերը կը նախազուշակէր ինչ որ յետոյ պատահեցաւ : Իրարմէ զատուած , մեր երկու ազգերը , մէկը միւսէն յետոյ յարձակում կրելով , յաղթահարուեցան : Մահմետական աշխարհը , թուրքերուն ու Մոնղոլներուն իսլամութիւն ընդունելովը զօրացած , յաջորդաբար նուաճեց Խաչակիրները , Կիլիկիան , Հայերը , Յոյները : Հայերը դիմեցին Եւրոպայի պետութիւններուն , որոնք անոնց խոստումներ ըրին նման այն խոստումներուն զոր կ'ընեն այսօր : Յոյները նմանօրինակ ընդունելութիւն մը գտան . իրենց կործանման վերահաս վտանգը Եւրոպան անտարբեր ձգեց :

Տեսնելէ յետոյ թէ քաղաքական եւ բարոյական սահմանին մէջ մեր միութիւնը ի՞նչ յաջողութիւններ բերաւ մեզի , օգտակար է նկատել թէ պառակտումին ատենն է որ մեր եւ կու ազգերուն անկումին աղէտքը տեղի ունեցաւ . պէտք է խոկալ այս նիւթին վրայ . ինչ դարձուածներու մէջ ալ մտնէ մարդ , պիտի

հասնի մեր ցոյց տուած եզրակացութեանը, այն է թէ մեր երկու ազգերուն փրկութիւնը կախեալ է իրենց միահաղոյն յարումէն առ «հելլենականութիւն», միակ դաստիարակութիւնը որ իրենց խառնուածքին պատշաճ է, եւ առ «ուղղափառութիւն», կրօնական ձեւ մը որ տեղական ինքնիշխանութեանց յղացումին հետ կը համաձայնի : — Այս «ուղղափառութիւն» բառին վրայ կանգ առնենք : Մեր դարուն ազատախոհութիւնը մեզ կը մղէ կրկնելու թէ բոլոր կրօնքները հաւասար են եւ ամէն տեղ պէտք է որ թոյլտուութիւն վայելին, կամ մանաւանդ թէ՛ մարդս ազատ ըլլալով, պէտք է թողուլ որ հետեւի իր ուզած դաւանանքին : Բան մը կայ որ աւելի ստոյգ է քան այս դիւրին կարծիքները, սա է թէ մեր գաղափարները մեր զգայութիւններէն կը բղխին : Եւ նոյն իսկ կան շատ մարդիկ որ գաղափար չունին, ըսել կ'ուզեմ թէ չեն խորհրդածեր. կը գործեն ազգեցութեանը տակ այն շփոթ զգայութեանց որոնց իրենց մարմինը սովորած է : Ամէն բանէ առաջ կրօնքներն են որ սրտեմաւորեցին այդ շփոթ զգայութիւնները : Եկեղեցիները դեռ կը շարունակեն ըլլալ այն մեծ գպորցները ուր ազգային զգացումը կը կազմուի : Արմատական տարբերութիւն մը, ինչպէս այն տարբերութիւնը որ կը դառնուի կաթոլիկութեան, — որ բնապետական ձեւ մըն է, — եւ ուղղափառութեան միջեւ, — որ աւելի ազատական ձեւ մըն է՝ քրիստոնէութեան, — անհնար է որ ազգերու միջեւ, նոյն իսկ միեւնոյն ազգին ծոցին մէջ, չհաստատէ տեսութեանց տարամթտութիւններ որոնցմէ յառաջ կուգայ գործելու եղանակին մէջ բացարձակ անհամաձայնութիւն մը : Ատոր բազմաթիւ օրինակներ կարելի է յիշել ամէն երկրի մէջ, մանաւանդ Ամերիկա ուր բողոքականներու եւ կաթոլիկներու միջեւ անհամաձայնութիւնը հանրային կրթութեան համար կարեւոր դժուարութիւններ կը յարուցանէ : Առանց այդչափ հեռուն երթալու, չէ՞ որ նկատողներ եղան թէ ձեր անկախութեան պատերազմներուն ատեն, միայն կաթոլիկներէ բնակուած կղզիներն են որ շարժումին չմասնակցեցան : Հայ կաթոլիկները նմանօրինակ վարմունքի մը օրինակը տուած են յայտարարելով թէ իրենք լուսաւորչական եւ կեղեցւոյն չեն վերաբերիլ եւ հետեւաբար ազգային ձգտումներ չունին : Ի՞նչ մեծ ապացոյց մեր ուղղափառ եկեղեցիներուն բարոյական բարձրութեանը : — Մեր այս բոլոր ըսածներէն կրնանք հետեւիցի նախ որ եթէ, ինչպէս կը մտածենք, զգայութեանց համաձայնութիւնը հարկաւոր է կազմակերպուելու

վրայ եղող ժողովուրդներու մէջ, երկու ազգերուն մէջ ալ՝ ուղղափառ եկեղեցին է որ մեզի պիտի հայթայթէ զգացումներ որոնք կարող ըլլան մտածող դասակարգին ձգտումներուն հետ ներդաշնակուիլ, — եւ յետոյ թէ՛ մեր երկու ազգերը համանման շահեր, սովորութիւններ ու յղացումներ ունենալով, իրենց ազգային եկեղեցիները պէտք է որ զերար փոխադարձաբար ճանչնան, ինչպէս որ եղաւ Միջին Դարուն :

Անձնական գաղափար մը չէ այս : Եթէ ասոր վրայ ձեռքի կը խօսիմ, պատճառն այն է որ յոյն բարեկամներ խանդավառութեամբ պայն ինծի ներկայացուցին, եւ միւս կողմէ գործադրութեան սկզբնաւորութիւն մը գտաւ ան Ներսէս պատրիարքին ձեռքով : Մէկ քանի Յոյներ, որ դեռ ողջ են, հայերէնի թարգմանեցին ձեր կրօնական գրքերը, եւ մեր գրքերը քրննեցին : Ներսէս պատրիարքը բաղդատեց. երկու դաւանանքներուն միջեւ իբր տարբերութիւն ուրիշ քան չգտաւ բայց եթէ անտու թիւններ ուրիշ իր մեծ իմացականութեանը ժպիտ մը միայն ներշնչեցին : Կոնգակ մը հրատարակեց որով կ'արտօնէր Հայերուն որ յոյն եկեղեցիներուն մէջ մկրտուին ու պսակուին այն ամէն տեղերը ուր հայ քահանայ չդառնան : Եկեղեցիներու միութիւնն էր որ կ'երագործուէր : Թուրք կառավարութիւնը փութաց այդ կոնգակը ջնջել : Ներսէսի հրատարուածն անմիջապէս յետոյ : Բայց ա'լ ժամանակը անցած է այն քաղաքականութեան որ կը կայանայ ազամանդը ազամանդով կտրելուն մէջ : Դուք ալ մենք ալ այսօր շատ յստակ կերպով կը տեսնենք մեր երկու ազգերուն բնական շփման կէտերը : Ներսէսի ձեռնարկը կը մնայ իրբեւ մեծաշուք արտայայտութիւն մը մեր մտածող դասակարգին ու մեր կղերին եւ ժողովրդին մէկ ստուար մասին ձգտումներուն : Թէ ատի մօտ ատենէն վերստին պիտի փորձուի եւ յաջողի, այս մասին տարակոյս չունինք, որովհետեւ մեր ազգը այս գործին յաջողմանը համար իր կամքին բաւականաչափ մէկ բաժինը յատկացուցած է :

Մեր քաղաքական ու կրօնական անցեալ բաժանումները մեզի ո եւ է ցաւի զգացում ներշնչելու չեն : Ընդհակառակն մեզ երջանիկ համարելու ենք որ կրնանք մեր բռնելիք արդի ընթացքին համար այսքան համողիչ դասերէ օգտուիլ :

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱՍԹ

(Շուրուեակելի)

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Բ Ի Թ Ի Ի Ն Ը
ԹՈՒՐԳԻՈՅ ՄԷՋ

— 0 —

1876 զեկտեմբեր 11ին, թնդանօթները, հարիւրէն աւելի հարուածով, Պոլսոյ ժողովրդին իմացուցին թէ Սուլթանը «սահմանադրութիւն մը» պարգեւած է իր երկրին: Անսահման ուրախութիւն: Երկու տարի յետոյ, 1878ին, Պոլսոյ ժողովուրդը լրագիրներու մէջ «կայսերական իրատէ» մը կարգաց, որով նոյն Սուլթանը Սահմանադրութիւնը կը դադարեցնէր: Ընդհանուր ապշուածութիւն: Այդ ժամանակէն ի վեր վիճաբանութիւն մը կայ բացուած մէկ կողմէ: Երիտասարդ Թուրքերուն եւ միւս կողմէ Եւրոպացիներուն միջեւ: Առաջիններուն կարծիքով, Սուլթան Համիտն է միակ մեղաւորը եւ պատասխանատուն, եթէ սահմանադրական կառավարութիւն մը չկրցաւ արմատ ձգել Տաճկաստանի մէջ, իսկ վերջինները կը պնդեն թէ Սահմանադրութիւնը լոկ խաղ մըն էր, լոկ հրնարք մը, որով թէ՛ Սուլթան Համիտ եւ թէ՛ ազատամիտ կարծուած բոլոր Թուրքերը փորձեցին Եւրոպան խաբել: Այս կարգէն է կոմսսը Մուրի, որ այդ առիւնները Պոլսոյ ֆրանսական դեսպանատան առաջին քարտուղարն է եղած, եւ որ այս վերջերս, «միւլիւ տէ տէօ մոնտ» ի մէջ, երկար յօդուածով մը կը պարզէ իր այս տեսութիւնը:

Ուրեմն, Տաճկաստան սահմանադրասէր մահմետականներ չէ ունեցած երբեք:

Իրաւ է թէ, կ'ըսէ կոմսս տր Մուրի, Տաճկաստանի մէջ վաղուց ի վեր փոքրիկ խումբ մը կար, որուն անդամները ունէին ազատամտական ձգտումներ, եւ՝ անցեալին փորձէն լուսաւորուած՝ հակառակութիւն մը կը յայտնէին ընդդէմ միապետական գրութեան: Սուլթանին բացարձակ եւ միահեծան իշխանութիւնը իրենց ծանր կուգար եւ զայն արգելք մը կը նկատէին երկրին ընդհանուր վարպացման: Սակայն ատոնք չունէին ճշգրիտ եւ որոշ գաղափարներ, այլ աարտամ եւ անորոշ, ազատական ցանկութիւններ: Այդ խմբին քաղաքական պետն էր Միգհատ փաշա, որ Տաճկաստանի գրեթէ ամէն կուսակալութեանց մէջ պաշտօն վարած ըլլալով, ընդարձակ վարչական փորձառութիւն մը քաղած էր եւ իմաստունի ու հայրենասէրի անուն մ'ալ կը վայելէր ա-

մենուն քով: Բայց Միգհատ փաշա կը մտածէր երկրին բարեքը ապահովելէ աւելի օտար միջամտութիւնը խափանել թրքական գործերու մէջ, եւ այս նպատակը իրագործելու համար էր միայն որ Սահմանադրութիւն մը խմբագրել տուաւ: Այնպէս որ, եթէ եւրոպական միջամտութեան առջեւ պատուար քաշելու հարկը տեսած չըլլար, իր բարենորոգչական զերը պիտի կատարէր անշուշտ այլ եւ այլ բարենորոգութիւններով, բայց ոչ թէ սահմանադրութեան մը հաստատութեամբ:

Ի՞նչ պատահած էր որ եւրոպական տէրութիւններու միջամտութիւնը հարկ դարձուցեր էր:

Սուլթան Ազիզի կառավարութիւնը, իր վերջին տարիներուն մէջ, այնքան քստմնելի զեղծումներ կը հովանաւորէր որ երկրին ամէն կողմէն խլրտումի եւ յեղափոխութեան ձայներ սկսած էին: Հերձեկովիներէ Պուլկարիոյ մէջ ապստամբական խումբեր կը շրջէին եւ ժողովուրդը կը գրգռէին ու կը զինէին: Որպէս թէ ներքին այդ դժուարութիւնները չէին բաւեր, Սուլթան Ազիզի նախարարները համարձակեցան 1875ի հոկտեմբեր ամսուն մէջ, Թուրքիան «սնանկ» յայտարարել: Հանդարտօրէն իմացուցին պաշտօնապէս թէ՛ թուրք եւ թէ՛ եւրոպացի առնելիք որոնք ուր ուր այդ թուականէն յետոյ չպիտի վճարէին Տաճկաստանի պետական պարտքերուն ո՛չ գլուխը ո՛չ ալ տուկոսը, վասնզի չունէին որ տային: Այս անցքերուն յաջորդեցին պատերազմ մը ընդդէմ Սերպիոյ եւ ընդդէմ Մոնթենեկրոյի, պատերազմ մը որուն մէջ Թուրքերը, յաղթական ըլլալով հանդերձ, ստիպուեցան կէս ճամբան կանգ առնուլ մնալ, զրկուել յաղթութեան օգուտներէն, անոր համար որ, այդ միջոցին, Ռուսիա միջամտեց եւ հրամայեց խաղաղութիւն կնքել անմիջապէս Սերպիոյ հետ: Բոլոր այս դէպքերը մէկ կողմէ բոլոր քրիստոնեայ հպատակները դառնացուցած էին եւ միւս կողմէ Եւրոպիոյ հանրային կարծիքն ալ Թուրքիոյ դէմ գրգռած էին: Տաճկաստանի ներքին կացութիւնն այն աստիճան վտանգաւոր էր որ Թուրք ժողովրդին ազատամտական մասը հարկը դաց գահընկէց ընել Սուլթան Ազիզը, զոր կը նկատէր միակ հեղինակն ամէն դժբաղդութեանց: 1876 մայիս 30ի գիշերը, Սուլթան Ազիզ կը հանուի իր անկողինէն, իր պալատէն դուրս տեղ մը կը բանտարկուի եւ մէկ քանի օր յետոյ կը մեռնի, յայտնի չէ՛ բռնի՞

մահով թէ ինքնասպանութեամբ : Սուրբան Ազիզին կը յաջորդէ իր եղբորորդին , սուրբան Մուրատ , իշխան մը որ միշտ համբաւ վայելած էր ազատամիտ , անկողմնակալ եւ մահաւանդ քրիստոնեաներու բարեկամ ըլլալու : Բայց իր կայսրութիւնը մէկ քանի ամիս միայն տեւեց : Մուրատ , իբր խելագար , գահէն վար առնուեցաւ , Չըրազանի պալատը փոխադրուեցաւ ուր բանտարկեալ կը մնայ մինչեւ հիմա : Իրեն յաջորդեց սուրբան Համիտ , իր եղբայրը :

Տաճկաստանի պաշտօնական անանկութիւնը խիստ հարուած մըն էր Եւրոպացիներուն քրտակին , հարկ էր որ իրենց կառավարութիւնները միջամտէին հպատակներուն առնելիքին գանձումը ապահովելու համար : Պալքանեսն թերակղզիին մէջ Սլաւները գլուխ բարձրացուցեր էին , հարկ էր որ Անգլիա , Պրանսա , Իտալիա , Աւստրիա միջամտէին խափանելու համար Թուսիոյ նպատակներուն իրաւորմանը , քանի որ ռուսական ոչ միայն հասարակ գործիչներ Պուլկարիա տարածուած յեղափոխութեան կրակը կը վառէին , այլ եւ մինչեւ իսկ Չեռնոյիֆի պէս զօրավարներ Սերպիայի բնակիչներուն հրամանատար եղած էին : Սուրբան մը գահընկէց եղած էր , ուրիշ մը յիմար հրատարակուած : Յայտնի է որ աւրեւելեան խնդիրը վերաբացուած էր : Արդ , Արեւելեան խնդրոյն լուծման եղանակը ունի սա յատկութիւնը որ Արեւելցիներուն միայն չի վերաբերիր , այլ նաեւ եւրոպական բոլոր ազգերուն , որոնց ներկայ եւ ապագայ շահերը կրնան ազդուիլ այդ եղանակէն : Հարկ էր ուրեմն որ զբողէին այդ լուծման եղանակով ամենքն ալ հաւասար մտահոգութեամբ :

Անգղիա նախաքայլը եղաւ : Դեսպանաժողովի մը գումարումը առաջարկեց , որուն նպատակը պիտի ըլլար լաւագոյն միջոցները պտնել եւ որոշել խաղաղութիւնը պահպանելու եւ միանգամայն Դանուբի եզերքի ժողովուրդներուն վիճակը բարւոքելու համար : Ահա միջամտութիւնը որ կը սկսէր երեւնալ հորիզոնին վրայ : Եւրոպիոյ միւս բոլոր պետութիւնք , իւրաքանչիւրն իրեն յատուկ նկատումներէն զրկեալ , ձայնակցեցան Անգլիոյ առաջարկին : Բ . Դուռը կրնա՞ր իր հաւանութիւնը մերժել , կրնա՞ր չմասնակցիլ այդ Դեսպանաժողովին , որ այն ատեն թուրքիոյ բարեկամ կառավարութեան մը կողմէն կ'առաջարկուէր . եւրոպական հանրային կարծիքը այնպէս էր

որ կարող չէր այդ յանդիմութիւնը ունենալ . մասնակցեցաւ այդ Դեսպանաժողովին , ինչ որ կը նշանակէր ընդունիլ եւրոպական միջամտութիւնը — բայց միաքը արդէն դրած էր Դեսպանաժողովին «ալթուրքա» խաղ մը խաղալ : Միգհատ փաշա իսկոյն իր մարդիկներէն կը կազմէ մասնաժողով մը , որ , խորին լուսթեան մէջ , իր հսկողութեան տակ , կը պատրաստէ թատերական այն մեծ անակնկալը որ կոչուած էր , ըստ իրեն , եւրոպական ազգերը ապշութեան մէջ գահավիժել :

Դեսպանաժողովը կ'որոշուի եւ անոր մասնակցելու համար Անգղիայէն եկան լորտ Սալիսպըրի , Պրանսայէն կոմս Շոտորդի , Աւստրիայէն պարոն տը Բալիչէ , որոնք միանալով Պոլսոյ միւս եւրոպական դեսպաններուն , սկսան նախ առանց թուրք ներկայացուցչի մը մասնաւոր նիստեր ունենալ ուր պատրաստեցին բարենորոգումներու ծրագիր մը : Բ . Դուռը բողոքեց որ Դեսպանաժողովը կը զբաղի թուրքիոյ ներքին գործերուն կարգադրութեան խնդրով առանց թուրք ներկայացուցչի մը : Ի՞նչ , առանց իր կարծիքն հարցնելու իսկ , եւրոպա կը մտադրէր կանոննե՞ր : օրէնքնե՞ր պծել թուրք հպատակ ժողովուրդներուն համար : Ասիկա ընդունուելիք բան չէր , իր արժանապատուութեանը կը դպէր : Դեսպանաժողովը ականջ չկախեց այս տրտունջներուն , բայց ապահովեց Բարձրագոյն Դրան որ , իր առանձին նիստերէն յետոյ , պիտի ունենայ ընդհանուր նիստեր , ուր պիտի հրաւիրուին նաեւ թուրք պատգամաւորները , Սաֆէթ փաշա եւ Բարաթոտորի էֆէնտի :

Վերջապէս , կ'որոշուի ընել այս ընդհանուր ժողովին առաջին նիստը 1876 դեկտեմբեր 11ին թերասնէի քէօչկը որ կը բարձրանայ Ոսկիղջիւրի եզերքը :

Դեսպանները հոն կը հաւաքուին : Վիճաբանութիւնները պիտի սկսէին , երբ յանկարծ դրսէն թնդանօթի որոտման ձայներ կը լսուին : Այն ատեն Սաֆէթ փաշա ոտքի կ'ելլէ հանդիսաւոր ծանրութեամբ մը , եւ կ'ըսէ նոյնքան հանդիսաւոր շեշտով մը . «Այս թնդանօթի հարուածները մեզ կ'աւետեն սահմանադրութեան մը հրապարակութիւնը , զոր սուրբանը այսօր կը պարգևէ իր կայսրութեան : Այս սահմանադրութեամբ կը փոխուի կառավարական ձեւ մը որ կը տեսէր վեց հարիւր տարիէ ի վեր , եւ նոր դար մը կը բացուի օսմանեան ազգերուն երջանկութեանը համար » :

Սաֆէթ փաշա այս խօսքերով կը հրաւիրէր պարզապէս ղեսպանները տներնին վերադառնալ եւ այլ եւս չզբաղիլ Թուրքիոյ ներքին գործերով : Դուրսը , փողոցները խռնուած էր սոֆթաներով , մոլլաներով , ամէն հասակի էֆէնտիներով ամբողջ մը որ թաղէ թաղ շրջելով կը պոռային «Կեցցէ՛ Սահմանադրութիւն՝ «եաշասըն քանոնի էսասի» , որուն ետեւէն ալ կը դռչէին հին սարկական բանաձեւը «Փատիշահիմ չօք սաշա՛» : Հետեւեալ նիստերուն մէջ , ի զուր Դեսպանները միաբերան պնդեցին թէ իրենք կը պահանջեն իրենց պատրաստած բարենորոգումներու ծրագրին գործադրութիւնը , թէ սահմանադրութիւնը չի կրնար անոր արգելք մը ըլլալ :

Թուրք լիազօրները պատասխանեցին՝ «Մենք ձեզմէ աւելի առաջ կ'երթանք բարենորոգմանց խնդրոյն մէջ : Դուք միայն Հերձեկովիւնի եւ Պուլկարիոյ համար տեղական մէկ քանի բարենորոգումներ կ'առաջարկէք , մենք ընդհանուր երկրին բարենորոգումն է որ անա կը սկսինք : Մենք բոլոր ազգերը , առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան , կը կոչենք սահմանադրական կեանքի մը . ա՛լ այսուհետեւ չկայ ոչ Պուլկար , ոչ Յոյն , ոչ Թուրք , ոչ Հայ , ոչ Հրեայ , ոչ Արաբ . ամենքս ալ Օսմանցի ենք եւ երկիրը ամենուն է» :

Վսեմ բաներ էին այս խօսքերը , բայց պեսպանները համոզելու ուժ չունէին : Անոնք , միշտ տարակոյս մը ունենալով Թրքերուն անկեղծութեանը մասին , շարունակեցին պնդել որ Բ. Դուռը պարտաւոր է գործադրել ղեսպանաժողովին ծրագրած բարենորոգումները Հերձեկովիւնի եւ Պուլկարիոյ համար : Պաշտօն յանձնեցին Լոյս Սալզպըրիի որ պարզապէս մէկ քանի հարցումներ ուղղելով Բ. Դրան ղիտաւորութիւնը հասկնայ սոյն ծրագրին մէկ քանի էական կէտերուն նկատմամբ : Բ. Դուռը երկու օր խորհելէ յետոյ իւրաքանչիւր հարցումին լակոնական զօրութեամբ մերժողական պատասխան մը տուաւ : Ա՛լ վիճակը ծանրացեր էր . խզումը , այս պարագաներուն մէջ , չէր կրնար յապաղիլ . վերջին նստի մը մէջ , բոլոր ղեսպանները կարգաւ , իրարու ետեւէ , ոտքի ելան եւ ըսին Սաֆէթ փաշային . «Եթէ Բ. Դուռը մերժէ ծրագրին այս ինչ կտո՞մ այն ինչ յօդուածները , ես պատուէր ստացած եմ Պոլսէն մեկնելու» : Այս նոր սպառնալիքին առջեւ Թուրք կառավարութիւնը կը պատասխանէ որ պատրաստ է կազմել ձեռնարկն քուրդ պաշտ-

նեաներէ բաղկացեալ բարեկրօնականց մասնախումբ Յը : Ասիկա ըսել էր , «ա՛լ այսուհետեւ իմ ներքին գործերուս չպիտի թողում որ խառնուիք» : Դեսպանները որ սպառնացեր էին սոյն շարթուան մէջ մեկնիլ , իրարու ետեւէ մեկնեցան , թողնելով ետեւնին իրենց առաջին քարտուղարները իբրեւ գործակատար :

Սահմանադրութիւնը եղաւ այսպէս Թրքերուն ձեռք այն փաստը որուն կը թնելով մերժեցին եւրոպական միջամտութիւնը բարենորոգումներու խնդրոյն մէջ : Այս եղաւ Սահմանադրութիւն կոչուած քաղաքական կառավարութեան առաջին արարուածը : Երկրորդը սկըսաւ անոր գործադրութեամբը : Այս նոր կանոնադրին նայելով , Տաճկաստան ալ պիտի ունենար երեսփոխանաց ժողով մը , ծերակոյս մը , անկախ դատարաններ , հսկողութիւն ամէն պաշտօնէն այլ վրայ , անկեղծ եւ ճշմարիտ ելեւմըտացոյց , նախարարական պատասխանատուութիւն , եւն , եւն : Բոլոր այս սկզբունքները մտածալ տաւ մնալու սահմանեալ էին , որովհետեւ կը մնային միշտ ենթակայ եւ հպատակ Սուլթանին բացարձակ իշխանութեանը , որ հակառակ այս սահմանադրութեան առերեւութեան արգելքին , կը մնար ազատ եւ անկախ իր կամքին մէջ : Սահմանադրութիւն մը այն ատեն օգտակարապէս կը գործէ , երբ ապահոված է ժողովրդին իր ուզած անձը երեսփոխան ընտրելու ազատութիւնը : Արդ , երբեք , Հայը , Յոյնը , Թուրքը , Հրեան այդ ազատութիւնը չունեցան իրենց ընտրութեանց մէջ : Կոստակալը եւ իր «Ղիլսէք մեհնիլի» միանալով կ'ընտրէին կառավարութեան հաճելի անձերը , այնպէս որ էտիրնէէն երեսփոխան ընտրուեցաւ մահմետական մը որ տարի մը առաջ Պուլկարներուն տները թալանի տուած էր , եւ Սելանիկէն ալ՝ այնպիսի Թուրք մը որ , 1876 մայիս 6ին , միանալով մոլեոանդներու հետ , քաղքին մէջ կոտորած մը կազմակերպած էր , որուն մէջ Յրանսայի եւ Գերմանիոյ հիւպատոսներն ալ ուրիշներու հետ մորթուեցան : Իսկ ծերակոյսը 25 անդամէ բաղկացեալ ժողով մըն էր , որ ամբողջովին ընտրուած էր Բ. Դրան կողմէ ուղղակի , առանց ժողովրդին որ եւ է մասնակցութեան : Մեր եւ յոգնած հին պաշտօնեաներ որոնք հլուութեան եւ հնազանդութեան մէջ արդէն վարժուած են : Ահա այս էր թրքական խորհրդարանը 1878 մարտ 19ին : Վեց չարաթ առաջ սակայն այս սահմանադրական Սուլթանը երկրէն դուրս

կ'աքտորէր , առանց դատաստանի . Միզհատ փաշան որ այդ սահմանադրութեան հայրն էր եղած :

Այս խորհրդարանին բացումը չգոհացուց Եւրոպան : Ռուսիա իրեն փաստ բերելով Դեսպանաժողովին ծրագրին մերժումը եւ Պուլկարիոյ մէջ կատարուած կոտորածները , բանակները յառաջ քշեց թէ՛ Եւրոպիոյ եւ թէ՛ Ասիոյ կողմէն : Երբոր 1878ին , խորհրդարանին երկրորդ նստաշրջանը բացուեցաւ , արդէն Ասիոյ մէջ Լորիս Մելիքովի եւ Լազարեֆի գերի բռնած էին եօթը հրամանատար փաշա , տիրած էին Կարսի եւ Արտահանի , Եւրոպիոյ կողմէն ալ , Բլեվման երկար ընդդիմութենէ մը յետոյ , Ռուսներուն ձեռքն ինկած էր : Ամէն կողմէ գաղթականները Պոլսի կը խուժէին եւ կայսրութիւնը մօտիկցած կը թուէր խորխորատին ափը : Անսպասելի , անհաւատալի բան մը տեղի կ'ունենայ այդ ատեն երեսփոխանաց ժողովին մէջ : Այդ ժողովը , որուն ոչ ոք ուշադրութիւն չէր ըներ (ա՛յնքան խելօք , հանդարտ , քաղաքավար էր) , յանկարծ կը մտածէ «պարտաւ» մը յայտնել նախարարներուն , եւ անոնց փոփոխութիւնը ուզել : Ասիկա ժպրհութիւն էր . Սուլթանի Համիտ շմորած մնաց , բայց Ռուսներն այնպէս կը յառաջանային , արտաքին դժուարութիւններն այնքան ծանր էին որ խոհմութիւն համարեց գոհացում տալ , եւ ութ օրուան մէջ եպարքոս , պատերազմական նախարար , եւ այլն , պաշտօնէ հանուեցան , նորէն վերահաստատուեցան , վերջապէս ճանքուեցան : Երեսփոխանաց ժողովը , աւելի յանդուգն դառնալով , սկսաւ աւելի բարձր հանել իր ձայնը , զոր չպիտի մոռնար միապետութեան համար ծնած Սուլթանը :

Այս միջոցներուն Ռուսիոյ բանակները կը հասնին մինչեւ Սան Սթէֆանօ եւ խաղաղութիւն կը կնքուի : Ալ խորհրդարանին պէտք չէր մնար : Հնարուեցաւ եւրոպական միջամբողութիւնը արգելելու համար , գործադրուեցաւ Ռուսիոյ դէմ Եւրոպան շահելու համար : Քանի որ այս նպատակներէն ոչ մին ոչ միւսը չէր կրցած իրականացնել , Սահմանադրութիւնն ալ անպէտ բան մըն էր : Կայսերական իրաւէ մը բու էր զայն ջնջելու , եւ այնպէս ալ եղաւ : Թրքական «Սալնամէն» (օրացոյցը) զեռ ամէն տարի կը վերատպէ այդ սահմանադրութիւնը : Ա՛յս պատճառաւ , Երիտասարդ Թրքերը կ'ըսեն «Մենք սահմանադրութիւն մը ունինք» :

Սուլթանի Համիտն է որ չի գործադրեր զայն» :

* * *

Թէ թուրք ժողովուրդը սահմանադրապէս կառավարուելու ընդունա՛կ է թէ ոչ , այդ այնպիսի խնդիր մըն է , որու մասին , ըստ մեզ , կարելի չէ բացարձակ կերպով ոչ ժըխտական ոչ հաստատական պատասխան տալ : Բարդ խնդիր մ'է :

Երբոր Ճարտնացիները կրցան սահմանադրական կառավարութիւն մը իրենք իրենց տալ , երբոր հովիւներէ ու երկրագործներէ բաղկացեալ Պուլկար ազգը կրնայ ատով ապրիլ , վարգանալ եւ յառաջադիմել , չափազանցութիւն պիտի ըլլար վճուել թէ թուրք տարրը անընդունակ է սահմանադրութեան :

Իրաւ , Միզհատի ձեռքով եղած փորձը դէմ կը խօսի Թրքերուն , բայց չի մոռնանք նոյնիսկ անոնց այն առածը որ կ'ըսէ «պաշտպան զօգար» : Իրենց գլուխը , Սուլթանի Համիտ , արդէն այդ հոտած գլուխն էր , ըստ որում խառնուածքովը , գաղափարներովը , համոզումովը հակառակ էր սահմանադրական կառավարութեան ձեւին : Մինչդեռ , Ճարտնի մէջ , վեհապետը , Միխասօն ինքն էր որ իր սահման իշխանութենէն հրաժարելով , կը մըղէր կը յորդորէր իր ժողովուրդը , իր նախարարները՝ խղճմտօրէն սահմանադրութիւն գործադրելու :

Բուն դժուարութիւնը հոն է որ արքայական ընտանիքին հետ շատ մահմետականներ համաձայն են որ հրաժարելու չեն տիրողի վեր ունենալէ — ինչ որ անկարելի կ'ընէ սահմանադրական հաւասարութիւն մը հիմնելը : Իմաստասիրական պատմական ուսումնասիրութիւնները միայն կրնային մտքերը փոխել այս մասին : Այդպիսի կըթութեան մը չգոյութեանը մէջ , պատերազմները , երկրին աղէտքները , յեղափոխութիւնը կրնային նոյն արդիւնքը տալ : Միզհատ փաշա նախ աշխատեցաւ ճգմել , ճնշել , խղզել Պուլկար յեղափոխութիւնը , ամէն ատու իրիկուն տասնեակ Պուլկարներ կախել տալով ամէն տեղ : Այս արիւնալի հրահանգին մէջ ինքն ալ հրահանգուեցաւ : Համոզուեցաւ որ մեթոտը հարկ էր փոխել քրիստոնեաները Թուրքին կապուած զուգուած միացած պահելու համար , եւ այդ

օրէն խորհեցաւ քրիստոնեաներուն բաժին ուտեղ աալ երկրին ընդհանուր կառավարութեան գործին մէջ : Ըստ մեզ, Միգհատ եւ միայն Միգհատ անկեղծ էր Սահմանադրութիւն մը հաստատել փորձած ատեն : Եթէ, այն ատեն, Միգհատ մը չգտնուէր, Սուլթան Համիտ պիտի գործադրէր Պուլկարիոյ դէմ միայն կոտորածի միջոցը, ինչպէս ըրաւ Հայոց դէմ : Պուլկարներն ալ արժանացան այդ կոտորածի զրութեան, քանի որ Պաթաք եւ այլուր 30000 Պուլկար ջարդուեցան : Անոնց բախտէն էր որ Միգհատ մը կար, որ միջամտեց իսկոյն եւ ըսաւ «Ես Պուլկարիոյ խնդիրը լուծելու ուրիշ միջոց մը ունիմ, Սահմանադրութիւնը, հարկ չկայ կոտորածի» :

Մեր դժբաղդութիւնէն էր որ Հայոց խնդրոյն ատեն, թուրքերը չմտածեցին նորէն յառաջ քշել սահմանադրութեան զազափարը :

Կը բաւէ լոկ գունակերպել քու պգտիկ, Գու դատարկ կեանքդ, ու ե՛րբեմն երբ ծածանի

Անյուսութեան սեւ դըրօշը գլխուդ վրայ
Ու անցեալիդ մէջ ա՛լ ոչինչ պահելու
Արժան դատես, եւ կրակին տաս անխընայ
Թուղթ ու ծաղիկ, յանկարծ փող մը մեղմ ունչու

Պիտի հընչէ կամարին տակը սրտիդ
Եւ սըրահին խորէն, մութին մէջ հալած,
Պիտի սեանես անցնելը խրոխտ, անքթիթ,
Պաղատանքիդ մըմունջներուն մէջէն ցած,

Անոր որուն երբեք օր մը չըզըպար,
Որուն երբեք չըխօսեցար, զոր երբեք
Չբճանչցար իր հողին մէջ. յամբարար
Բայց տիրաբար ան իր պատկերը բեկբեկ

Հաստատած էր խորը մտքիդ. անուշ էր
Ձինքը տեսնել անցնել իր սէփ քալուածքով
Մինչ հեռուէն սիրաբոյ անոր կը քալեր
Եւ՝ հեռացած՝ դեռ կը մընար անոր քով :

Տարին անցաւ ու տարիներն իրարու
Յաջորդեցին ու թողուցին առյաւէտ
Այն սփունքները սիրելի. ահարկու
Հով մը ցրուեց պատանութիւնդ ծաղկաւէտ

Ու աճեցար, ու մարդ եղար, ու հիմա
Ատեն չունիս կանգ առնելու ճամբուն մէջ
Ունկնդրելու երգը սիրուն հոգեհմայ
Սրտիդ անմեռ փոքր սարեակին, բայց անչէջ

Կը նըշուեն երբեմն մտքիդ մէջը դեռ
Իր աչքերը սրոնք ըզքեզ չըճանչցան.
Ու երկիւղով կը դառնաս մերթ անոնց դեռ,
Չեռքդ կուրծքիդ, երգելու քու սէրդ անձայն . . .

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ



ՏԻՃԱՍԱԿԸ

— 0 0 —

« Պարսպ մաքուր յիշատակ մը . . »

ԷՌՆԷՍԹ ԼԱԹԵՅՆԷՍ

Պարսպ մաքուր յիշատակ մը, ա՛խ, այո՛,
Կեանքին մէջ ա՛ն միշտ կը մընայ բազմալի,
Ան միայն, ջինջ աղբիւրի մը պէս անդոյ
Ուր կ'ուզէիր խըմած ըլլալ՝ ճամբուն լի

Գինիներուն, պըտուղներուն մէջէն բեր :
Ան կողին է որ առտու մը, մըշուշին
Մէջ երեւցաւ ու ջնջուեցաւ գերդ փրփուր.
Եւ սրտիդ մէջ ճայներ քեզի փսփսացին

Որ հոն միայն պիտ' ապրէիր երջանիկ . . .
Պարսպ մաքուր յիշատակ մը, բայց անի



ՆՊԱՏԱԿԸ

— 0 0 —

«Դրօշակ»ը իր վերջին թուով հրատարակած է թրքառուսական սահմանադրւէն ղըրկուած նոր թղթակցութիւն մը որ կը հերքէ իսաստուրի 300 Հայերու կոտորածը, եւ կը յայտարարէ թէ ընդհակառակն թուրքերէն ու Բիւրտերէն է որ այդ պայքարին մէջ 2—300 հոգի ինկած են, իսկ Հայերէն՝ միայն 15—20 հոգի, եւ այն ալ լոկ ֆէտայիներէն. գիւղերու բնակիչներուն զպշող չէ եղած: Առեղծուած մը եղաւ այս իսաստուրի դէպքը: Եւրոպական բոլոր լրագիրները ծանուցին զինեալ Հայերու անցք մը սահմանադրւէն, եւ 300 Հայերու կոտորած մը՝ այդ անցքին հետեւանքով: Պելք որ, այդ դէպքի միջոցին, Ալաշկերտի մէջ կը գտնուէր, կոտորածի գոյութիւնը հաւաստեց իր հեռագրով եւ իր յօդուածով. արտասահմանի հայ թերթերը—եւ մանաւանդ «Դրօշակասէր» թերթերը, — զինեալ Հայերու անցք եւ 300 Հայերու կոտորած արձանագրեցին. վերջապէս նոյն ինքն «Դրօշակ»ը իր վերջնութիւն թուոյն մէջ հրատարակեց թղթակցութիւն մը որ զինեալ Հայերու անցքը եւ Բիւրտերու հետ ընդհարումը մէկ երկու հակիրճ տողերով պատմելէ յետոյ, ընդարձակ ողբերգական նկարագրութիւն մը կը պարզէր իսաստուրի մէջ տեղի ունեցած զարհուրելի կոտորածի մը (խօզժութիւններու, վայրագ խողխողմանց, թալանի, սրբապղծութեանց եւ աղջիկներու մոլեգին առեւանգութեանց սարսուցեցեցիչ ու որոշ մանրամասնութիւններով): Հիմա, նոր թղթակցութիւն մը կուգայ այդ բոլոր եղբերագութիւնը հերքել. փոխանակ կոտորածի, հայկական յաղթանակ մըն է եղեր իսաստուրի մէջ տեղի ունեցած դէպքը: «Դրօշակ»ին այս վերջին թղթակցութիւնը գիւցաղներգական էջ մըն է պարզապէս, զոր անկարելի պիտի ըլլար կարգալ առանց խրոխտ յուզմունքի մը, եթէ մարդ անխուսափելի վախը չունենար թէ յանկարծ յառաջիկայ թիւին նոր թղթակցութիւն մը կրնայ գալ իրողութիւնը բոլորովին տարբեր գոյնով ներկայացնել: Այն բոլոր պարոնները որ յօդուածներով կամ նամակներով «Անահիտ»ին մեղադրեցին Ալաշկերտի դէպքին վրայ առանց անոր մանրամասնութիւնները գիտնալու կարծիք յայտնած ըլլալը, շատ աւելի ուշիմ բան

մը կ'ընեն եթէ այդ մեղադրանքը ուղղեն «Դրօշակ»ին. «Անահիտ»ը զատաստան մը յայտնեց, եւրոպական բոլոր լրագիրներու մէջ հրատարակուած հեռագիրներուն եւ Պելքի ականատես վկայութեան վրայ հիմնուելով. «Դրօշակ»ը, որ պաշտօնական օրկանն է այն կուսակցութեան որ Ալաշկերտի դէպքը կադմակերպեց, շատ աւելի ի վիճակի է եւ պարտաւոր է մանրամասն ու որոշ տեղեկութիւններ ունենալ իր կուսակցութեան կատարած արարքներուն եւ անոնց հետեւանքներուն մասին, եւ զանոնք իրենց ճշգրիտ գոյնովը ներկայացնել հայ ժողովրդին. տարօրինակ կը գտնեմ որ Ալաշկերտի մէջ հայկական-գրօշակեան յաղթանակ մը տարուած ըլլալու պահուն, «Դրօշակ»ը եղբերագութիւն մը հրատարակէ՝ ո եւ է թղթակցի մը նամակին վրայ կրթնելով միայն. եւ հիմա որ նոր թղթակցի մը կը հերքէ նախկին գուժը եւ անոր տեղ անխառն աւետիս մը կը շեփորէ, ինչո՞ւ համար «Դրօշակ»ի խմբագրութիւնը չի փութար բովանդակ եւրոպական մտմուլին զրկել ճշգրիտ նկարագրութիւնը Ալաշկերտի դէպքին (ո՞րչափ լրագիրներ կան, Անգլիոյ, Իտալիոյ եւ մանաւանդ Փրանսայի մէջ որոնք ուրախ պիտի ըլլային հայկական քաջութեան ապացոյցներ ի վերհանել՝ անընդհատապիւր խողխողումներու երկայն ու վհատեցնող շարքէն յետոյ). բայց խնդիր է գիտնալ թէ այս քայլերը առնելու համար «Դրօշակ»ի խմբագրութիւնը ո՞ր աստիճան կարող է ապացուցանել ճշգրութիւնը իր վերջին թղթակցութեան, որ ամբողջ եւրոպական հեռագիրներուն տուած տեղեկութիւնը հերքող միակ տողքումանն է: Սպասելով այդ հարցին լուծման, Ալաշկերտի միջադէպին մէջ կէտ մը կայ՝ որուն մասին եւրոպական ու հայ բոլոր տեղեկութիւնները համաձայն են իրարու, այն է թէ սահմանադրւէն անցնող Հայերը առիւծի պէս կոռուած են թուրքերէն ու Բիւրտերէն շատ մարդ մեռցուցած են, եւ իրենցմէ քիչ կորուստ տուած են՝ հակառակ իրենց դէմ ելլող ուժերուն նիւթական առաւելութեանը: Ինչ ալ մտածենք այս կամ այն կուսակցութեան մասին, այս ափ մը քաջերու ցոյց տուած կորովը յարգանքէ ուրիշ զգացում չի կրնար ներշնչել ո եւ է Հայու, — ասի վէճ չի վերցներ: Իայց նոյնքան անվիճելի է, — երբեք պիտի չհաղորիմ այս գաղափարը յեղյեղելէ, — թէ անհատական քաջութիւններու առջեւ մեր զգացած յարգանքը բնաւ երբեք չի ջնջեր ի-

բաւունքը զոր ունինք այդ ուժերը մղող ու գործածող «վարիչ մարմին»ներուն գործունէութեան ընդհանուր յատակագիծը քննադատելու : Եւ եթէ նոյն իսկ նաստուրի մէջ իրօք այդ աւագամ Հայեր ջարդուած չեն եւ Ալաշկերտի ընդհարումին մէջ միայն Քիւրտերն ու թուրքերն են որ հարիւրներով ինկած են , — ինչ որ ապացուցուած չէ տակաւին , — նոյն իսկ այդ պարագային մէջ՝ պատճառ մը չեմ տեսներ ներկայացուցած դիտողութիւններս անտեղի համարելու . իմ դիտողութիւններս կ'ուղղուէին «յատակագիծ»ին , եւ անոր գործադրութեանը մէջ ձեւք ձգուած մասնական յաջողութիւն մը չի բաւեր «յատակագիծը» քննադատելի ըլլալէ դադրեցնելու : Այսօր Հայ ազգին գերագոյն նշպատակը , միակ նպատակն է , ոչ թէ Քիւրտ կամ թուրք սպաննել , ոչ թէ իր զոհարբութիւններովը օտար տիրապետութեանց անդիտակցաբար դիւրութիւններ ընծայել , այլ նաւեի իր ազգայնութեան պահպանուելը տեսնելու , արեւստիակ ապահովման մեջ դնելու . ուրիշն հայազգը պէտք է որ իր բոլոր ուժերը , — իւր թական , բարոյական , մտաւորական , դիւցազնական , — կեդրոնացնէ այդ միմիակ նպատակին իրագործմանը՝ ամենէն աւելի յարմար շրջանակին մէջ , ամենէն աւելի յաջողութեան հաւանականութիւններ ցոյց տուող ծրագրին համեմատ :

Ես կը կարծեմ թէ Պիթլիսի շուրջը կամ Ալաշկերտի մօտ կատարուած ո եւ է ջանք կամ զոհողութիւն , այդ գերագոյն եւ միակ նպատակին մերազգը հասցնելու հաւանականութիւն չի ցուցնէր . այդ բոլորը ըստ իս կը ծառային դիւրացնելու եւ փութացնելու ուստական գրաւումը , որուն այլ եւս մեծագոյն արդեւքը , Անգլիան , թուրքս , գրեթէ բոլորովին քաշուած է՝ հայկական ջարդերէն ի վեր . (նոյն իսկ «Տէյլի Նիւզ»ը , Անգլիոյ ամենէն հայապաշտպան թերթը , կը գրէր վերջերս թէ՝ «Մեծ Հայաստանի փրկութիւնը այլ եւս ուստական գրաւումին մէջ կարելի փնտոել» . եւ «Թայմզ» իր վերջին թիւերէն մէկուն մէջ խօսելով այն ջանքերուն վրայ զոր Ռուսիա ի գործ կը դնէ Մեծ Հայաստանէն անցնող երկաթուղիի գծին տարամերժ իրաւունքը ստանալու համար , կ'աւելցնէ պաղարիւնութեամբ «Անգլիա կարող է հանդարտ կերպով նկատել ուստական դիւրացնողութեան Հայաստանի մէջ հետեւած քաղաքականութեանը , որովհետեւ այդ քաղաքականութիւնը չի շօշափեր բրիտանա-

կան շահերը» : Այս բոլորը , կ'ըսեմ , կը դիւրացնեն ուստական գրաւումը , եւ ասոր շօշափելի ապացոյցը ունեցանք տեսնելով որ Ռուսիա այդ երկաթուղիի արտօնութիւնը խլելու համար գործածեց Կովկաս ապաստանած 40,000 Հայերու վերադարձին խնդիրը , — եւ այդ 40000 Հայերուն գաղթումը արգիւնք էր Վանի կոտորածին , որ արգիւնք էր Վասպուրականի մէջ հայ յեղափոխականներու գործունէութեան : Ռուսական դրուումով՝ Մեծ Հայաստանի ազգաբնակչութիւնը կ'ազատի նիւթական տատապանքներէ եւ ստրկական կոտորածէ . բայց ազգին «գերագոյն բաղձանքը» իրագործուած չ'ըլլար : Ընդհակառակն : Ռուսիա , որ Սան-Սթէֆանոյի դաշնագրով «հայկական խնդրոյն» ստեղծողը եղաւ , Պիթլիսի վեհաժողովէն ի վեր իր ընթացքը փոխած է . եւ վերջին ջարդերու շրջանին՝ յայտնապէս տեսնք որ Մեծ Հայաստանի մեջ ինքնավար Հայութեան մը կազմակերպման ամենէն ուժգին ու անողոք հակառակողը ուստական դիւրացնողութիւնը եղաւ . այդ դիւրացնողութիւնը , որ Մուրաւլիեֆի գալուստով վայրկեան մը կարծուեցաւ թէ պիտի փոխուէր ու 78ի ուղղութեան դառնար , միեւնոյնը մնացած է միշտ հանդէպ ինքնուրոյն Հայութեան մը կազմակերպման գաղափարին : Գրօշակեան ջանքերը Մեծ Հայաստանի մէջ՝ այն ատեն միայն տրամաբանական ու զովելի պիտի ըլլային , եթէ յոյս մը ըլլար որ Ռուսիա տրամադրութիւն եւ շահ ունի այդ ջանքերը նուիրագործելու՝ միջամտութեամբ մը ի նպատակ «հայկական դատին» , Գերագաղափար , այդ յոյսը չունինք : Իսկ Գերմանիան . ու Յրանստան Մեծ Հայաստանի մէջ Հայոց ի նպատակ գործնականապէս միջամտելու . ոչ տրամադրութիւն ցոյց կուտան , ոչ ալ ուղղակի շահ ունին : Արդ , այս ատենը նկատի առնելով , մեր յեղափոխական մարմինները իրենց բոլոր ջանքերը ի գործ դնելու են հայ ազգին «գերագոյն բաղձանքը» իրականացնելու կարելիութիւն պարունակող պայմաններուն մէջ , — եւ այդ պայմանները անոյ չեն : Այս տեսակէտէն է որ կը հուստանք թէ մեր բացարձակ իրաւունքն է , անհատական քաջութիւնները գովելով հանդերձ , քննադատելի եւ նոյն իսկ գատապարտելի հռչակել ծրագրերը այն ամէն վարիչ մարմիններուն որ այդ բոլոր ուժերը կը գործածեն այնպիսի շրջանակի մը մէջ եւ այնպիսի ուղղութեամբ մը որ բաղձացուած նպատակակէտին տաճարողիլու հու-

ւանականութիւն չի ցուցրներ: Այս քննադատելու եղանակը եւ կը գտնեմ ամենէն «տրամաբանական»ը եւ ամենէն ճշմարտագէտ «հայրենասիրական»ը: Անոնք որ կ'երեւակային թէ իմայս բոլոր դիտողութիւններս իրենց նպատակ՝ ունին Դրօշակեան կուսակցութեան դէմ յարձակիլ եւ զայն տկարացնել, եղեռնականօրէն ապուշ սխալ մը կը գործեն: Ես առաջինը պիտի ըլլայի Դրօշակեան կուսակցութեան վարմունքը գնահատող, եթէ ան իր ուժերը գործածէր Հայ ազգին ազատագրութեան համար գործնականագէտ կարելի եղող ծրագրի մը:

* * *

Պնահատուելու արժանի նորութիւն մը արդէն կը գտնեմ «Դրօշակ»ի վերջին թուոյն մէջ, եւ կը փութամ զայն նշանակել: «Դրօշակ»ի յուսուածի թիւը կը պարունակէ Մակեդոնական Քոմիթէէն զրկուած նամակ մը, Երիտասարդ-թուրքի մը նամակը, եւ Քիւրտի մը նամակը: Կարեւորագոյնը այս վերջինն է՝ ըստ իս: Հայ յեղափոխական թերթի մը մէջ քիւրտ հայրենասէրի մը նամակին հրատարակումը, նոր ուղղութեան մը բացումն է հայ յեղափոխութեան մէջ: Եւ այդ նորութիւնը այնչափ աւելի հաճոյքով կը նկատեմ որ անոր պէտքը եւ շատոնց զգացած եւ հրատարակուող զգացուցած եմ: Քիւրտը «ատուած ցեղը» եղած է մեզի համար, որովհետեւ այդ անունը կրող մէկ քանի ջոկեր են որ Հայաստանի մէջ խժոժութիւններ, կեղեքումներ գործած են եւ կը գործեն ցարդ, արդ: սխալ մըն է կարծել թէ բոլոր այն ցեղերը որ «քիւրտ» ընդհանուր արտադրանքները կը ճանչնանք, այդ ոճրագործ ընթացքը ունեցած են եւ ունին Հայերուն հանդէպ: անոնց մէկ ստուար մասը հուսցի վեր բնագրական բարեկամութիւն մը ունեցած է Հայուն հետ, եւ աւելի մօտ կը դրայ ինքզինքը Հայուն, քան թուրքին, զոր կ'ատէ իբրեւ բռնաւորը, եւ իբրեւ եկեղորը: Ու նոյն իսկ աւագակ Քիւրտերը, այսօր Հայուն հետ թշնամութեամբ վարուողները, սահմանուած են Հայուն դաշնակից դառնալու՝ այն օրը որ հայ միտքը իր բարոյական ու նիւթային բոլոր միջոցներով, գիտնայ անոնց վրայ ազդել, անոնց ցեղային իրական շահերը զգացնել իրենց: Ընդհանուր տեսակէտով՝ քիւրտը չէ Հայուն բուն թշնամին: Հայուն բուն թշնամին թուրք բռնապետական ուժիմն է, որուն

հաւատարագէտ գերի են Քիւրտը եւ Հայը: Անշուշտ յեղափոխական մարմինները պարտք ունին օգնելու աւագակ Քիւրտերէ յարձակում կրող Հայերուն՝ որ ինքզինքնին պաշտպանելու կարող դառնան: Բայց հայ ժողովրդին ազատագրման մեծ նպատակին համար, աւելի կարեւոր, աւելի հիմնական, աւելի ուշիմ գործ մը կատարած կ'ըլլան ձեռք առնելով այն միջոցները որոնք պիտի ջնջեն թշնամական խրամատը որ բացուած է քիւրտին ու Հայուն միջեւ՝ տնտեսական պայմաններու հետեւանքով, բայց մանաւանդ Սուլթան Համիտին խորամանկ քաղաքականութեանը արդիւնքով: Հայերը պարտին, եւ կարող են, նպատակ որ քիւրտ բոլոր ցեղերուն մէջ արթննայ եւ զարգանայ «ազգայնական» ձգտումը, «քիւրտ հայրենասիրութիւն» մը: Հայերը պարտին մզել քիւրտերու «գիտակից» մասը, որ սկսած է դոյութիւն ունենալ, որպէսզի այդ մասին վերաբերող քիւրտերը իրենց ցեղակիցներն հրաւիրեն այդ կեանքէն ելլել, եւ ցեղային կոիւններէն վեր՝ ազգութիւն մը կազմելու գաղափարին յարիլ: այդ ուղղութեամբ, քիւրտը, ճակատագրականագէտ, բազմակից մը եւ դաշնակից մը պիտի սկսի տեսնել Հայուն մէջ, եւ փոխանակ Հայուն դէմ դարձնելու իր դանակը, «Բնաւորին» դէմ պիտի դարձնէ զայն: Այս տեսնելու եղանակը շատոնց իմ մէջս կազմուած էր սաղմնային ձեւով մը: հայաստանցիներու հետ տեսակցութիւններով՝ տեղական պայմաններն ուսումնասիրելով, ան իմ մէջս աւելի ամրացաւ: անոր մէկ ցուքն է որ յայտնեցի Տր. Պելքին ուղղած «բաց նամակ»իս մէջ, եւ անոր մանրամասն արտայայտութիւնն ու ճշգրտմը կատարելու համար է որ հրաւիրեցի Հայաստանցի աշխատակիցներ՝ որպէսզի «Անահիտ»ին մէջ Հայուն «դրացի» ցեղերու մասին մանրակրկիտ տեղեկութիւններու շարք մը հրատարակեն, շարք՝ որուն մէջ կարեւորագոյն տեղը պիտի բռնեն Քիւրտերու նուիրուած յօդուածները (ընդարձակ ուսումնասիրութիւն մը որ ծանուցուած էր «Անահիտ»ի Ա. Տարուան թիւ 12ի մէջ, պիտի սկսի հրատարակուիլ յառաջիկայ թուով): Այդ հրատարակութիւնը կատարելէ առաջ, խնդրեցի Քիւրտերու վրայ այդ ուսումնասիրութիւնը պատրաստող հայաստանցի աշխատակիցէս («Լոշտակ»), որ նամակ մը գրէ Քահիրէի մէջ «Քիւրտիսթան» անուն քիւրտերէն թերթ մը հրատարակող Ա.պոլիւրրահման պէյլին եւ այդ թերթի եւ անոր

անօրէնին ուղղութեանը մասին տեղեկութիւն ուղէ : «Քիւրտիսթան»ի տնօրէնը մեր բարեկամին ուղղած է սիրալիր պատասխան մը (դեկտ. 14 թուականով), որուն սա հատուածին վրայ մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրեմ . « . . . Քիտեմ թէ քիւրտերուն եւ Հայերուն շահը միեւնոյնն է, եւ ասոր համար է որ ես միշտ ուղած եմ լրացրիս միջոցով ջնջել այն ասելութիւնը որ գոյացած է այս երկու ժողովուրդներուն միջեւ . Հայոց առաջին յեղափոխութենէն ի վեր : «Քիւրտիսթան»ի մէջ քրդերէն լեզուով հրատարակուած յօդուածները ասոր վկայ են : Եթէ կարգաքայն օրինակները զոր այս թղթատարով ձեզ կը զրկեմ , պիտի վերահասու ըլլաք ատոր (*) : Վերջապէս , սիրելի Պարոն, ամէն տեսակ զոհողութիւն պիտի ընեմ ջնջելու համար այն ասելութիւնը զոր Ապտիւլ Համիտ այս երկու ժողովուրդներուն միջեւ դրած է, եւն : »

«Իրօշակ»ին նամակը գրող քիւրտը նմանօրինակ բաներ կ'ըսէ՝ «Կառավարութեան Հայերը ջարդել տալու միտքը ուսօթիւրքական պատերազմէն կը սկսի : Այն ատեն Ապտիւլ Համիտ քիւրտիսթան իրատէ մը զրկեց , որով կը հրամայէր Հայերուն ինչքը թալլել , զանոնք կոտորել , հայրենիքնէն հեռանալու բռնադատել : Բոլոր քիւրտ ազաները եւ պէյերը Վան ժողով մը կազմեցին : Այս ժողովին մէջ Քիւրտերու մեծ շէխ՝ Շեխ Իպատուլլահ Կոթի ելաւ եւ ըսաւ . «Շատ հին ատենէ ի վեր Հայերն եւ քիւրտերը այս երկրին մէջ գրացիներ են . եթէ մենք վանոնք այսօր կոտորենք՝ վաղը թուրքերը պիտի սկսին մեզ կոտորել : Ես կը կարծեմ որ քիւրտերը այդ բանը կը հասկնան, եւ չեմ յուսար որ քիւրտ մը գոնուի որ այդ դահճութիւնը յանձն առնէ : » Շեխ Իպատուլլահ ազգեցիկ ըլլալով , միւսները համակերպեցան : Ասոր վրայ ժողովը ցրուեցաւ . եւ Ապտիւլ Համիտի փափաքը չկատարուեցաւ : Յետոյ Ապտիւլ Համիտ իր կամքը յառաջ տանելու համար , «Համիտիէ» հեծելազուններ կազմեց . հովիւներու, ծառաներու հարիւրապետութեան, հազարապետութեան պաշտօն տուաւ . քիւրտերը ատ տեսնելով վազեցին զինուորագրուեցան ու ստացան զգեստ եւ զէնք : Երէկ ծառայու հովիւ եղող մը , երբ հարիւրապետութեան կը բարձրանայ , ոչ միայն Հայը այլ իր հայրն

ալ կը սպաննէ : Ապա Ապտիւլ Համիտ քիւրտերուն մէջ տարածել տուաւ թէ Հայերը , Ռուսիոյ հետ համաձայնելով , մտադիր են քիւրտերը ջարդել : Քիւրտերը գրգռելէ եւ մոլեռանդեցնելէ ետքը , շատ չանցած՝ հեռագրեց Զեքի փաշային Տալուրիկը զարնել : Ահա այսպէս մեքենայուած է հայաքրդական կռիւր : Ասկայն ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն հանդամանքի վրայ որ Սիզանի, Պոթանի, ձեզիբէի, Սինճարի կողմի Քիւրտերը ոչ մէկ Հայ չսպաննեցին : Կը հարցուի՝ ինչո՞ւ մէկալ Քիւրտերը ջարդեցին , իսկ ասոնք բան չըրին : Այն պատճառաւ որ ասոնց բարքերը անխառն մնացած էին : Արդէն այդ կողմերու քիւրտերը թուրք կառավարութենէն գոհ չէն եւ կառավարութեան խորամանկութիւնները գիտեն : Ասոնք քանիցս ապստամբեցան կառավարութեան դէմ . ամենէն նշանաւորը Պետրիսան փաշայի ապստամբութիւնն է . անոր բանակի մէջ շատ մը Հայեր ալ կային, եւն . Այստեսակ փաստերը զիս կը զրգեն ցանկալ որ Հայերը ձեռք ձեռքի տուած ըլլան այն անխառն ու մաքուր մնացած քիւրտերուն հետ . . . Յայտնի է որ քիւրտերու եւ Հայերու մէջ՝ դէմքերու եւ սովորութիւններու խիստ նմանութիւններ կան . այս երկու ժողովուրդները նոյն ընտանիքին կը պատկանին : Եթէ անոնք որ նոյն բունութեան տակն են , իրարու հետ չհամաձայնին , որո՞ւ հետ պիտի համաձայնին : Շատերը պիտի հարցնեն թէ այս համաձայնութեան ճարը ո՞րն է, դժբաղդաբար հրապարակաւ անկարելի է այսպիսի գործնական հօրցի մը յատասխանել : Ատի յեղափոխական քովթէններու ներքին գործողութիւններու շրջանակին կը պատկանի : »


Ահաւասիկ նոր ճամբայ մը որ կը բացուի մեր ազգային գործունէութեան առջեւ : Անհրաժեշտ է անշուշտ , ինչպէս «Իրօշակ»ին թըղթակիցը գիտել կուտայ, որ այս նոր ուղղութիւնը յօշոգցնելու համար պէտք եղած գործնական միջոցներու մասին ոչինչ գրուի կամ խօսուի հրապարակաւ . բայց նոյնչափ անհրաժեշտ է որ քիւրտ ու հայ թերթերը ուսումնասիրութիւններով եւ յօդուածներով սկսին երկու դրացի ցեղերը իրարու ճանչցնել՝ իրենց «իրական» գոյնով եւ «իրական» չահերով , ջանան բառնալ այն արիւնտ դժտութիւնները , որոնք թուրք բռնապետութեան շահերուն միայն օգտակար եղած են մինչեւ ցարդ : Այս ուղղութեամբ ջանքերը շատ աւելի

(*) «Անահիտ»ի այս թուով կը հրատարակենք յօդուած մը «Քիւրտիսթան»ի մասին :

գործնական եւ ապահով են քրդա-հայկական կոիւր բառնալու, քան հայ յեղափոխական խումբերու հակաքուրդ յարձակումները : Հայը պէտք է իր բոլոր միջոցներ, զէնք, ուժ, դրամ, խելք, դարձընէ միակ թշնամիին, թուրք ոէժիմին դէմ, — միակ նպատակին, ազգային ազատագրութեան համար :

Ա. 2.

Յ. Կ. — Հ. Ֆ. Շարմըթան, զոր այս յօդուածը գրելէ յետոյ՝ վերջին պահուն՝ առիթ ունեցայ տեսնելու, հաւաստեց ինծի թէ Խաստուրի մէջ կոտորած տեղի ունեցած է, եւ նոյն իսկ Խաստուրէն զատ Ալաշկերտի գաւառին 10—12 գիւղերու մէջ թալան ու սպանութիւններ կատարուած են : Հ. Շարմըթան ուղղակի լուր առած է երկրէն, ստոյգ աղբիւրէ : Դրօշակեան կուսակցութեան Բարիզի ներկայացուցիչները կրնան դիմել այս մասին Հ. Շարմըթանին եւ բազմաթիւ իրենց տեղեկութիւնները անոր տեղեկութիւններուն հետ :



ՓՐԱՆՍԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Ուշագրաւ յօդուածով մը («Փրանսո-ռուս խնդիր մը») որ երեւցաւ «Ռըվիւ աը Բառի»-ի մարտ 1ի թուոյն մէջ, Պ. Ժորժ Կոլիս «Թան»-ի Պոլսոյ նախկին թղթակիցը, Փրանսայի Արեւելքի մէջ վայելած դարաւոր ու գերիշխան ազդեցութեան անկումին պատմութիւնը կ'ուրուագծէ եւ պատճառները կը վերլուծէ, ցոյց տալով թէ ինչպէս Գերմանիա կը սկսի ստեղծել Արեւելքի մէջ ազդեցութիւն մը որ Ֆրանսականէն աւելի զօրաւոր դառնալու վրայ է արդէն, եւ թէ ինչպէս մասնաւոր Ռուսիա, մէկ կողմէ՝ տկարացնելով յունական Օթթոմանութիւնը եւ Պուլկարներուն ու Սերպերուն միջոցով սլաւական Օթթոմանութիւնը զօրացնելով, միւս կողմէ անուղղակի կերպով ջանալով թուրքներէ Ֆրանսական ազդեցութեան հիմը կազմող արեւելեան Լատինութիւնը, կը ձգտի ամբողջ Փոքր Ասիոյ եւ մասնաւորապէս Սուրիոյ եւ Պաղեստինի մէջ գերիշխան ազդե-

ցութիւն մը ձեռք ձգել : Պ. Կոլիս անհրաժեշտ կը համարի որ Ֆրանսական զիւանագիտութիւնը տեսնէ վերջապէս թէ Փրանսայի դաշնակիցը այս խնդրոյն մէջ իրեն համար վտանգաւոր հակառակորդ մը դառնալ սկսած է, եւ ջանայ երբ գեռ ուշ չէ՝ վտանգին տուելն առնել :

«... Ռուսական ազդեցութեան յառաջդիմութիւնը ցոյց տուինք, կը գրէ՝ եզրակացնելով, այս յառաջդիմութեան պատճառներն ու միջոցները պարզեցինք. Ֆրանսական հանրապետութեան վաղանցուկ նախարարներուն մեթոտի, համոզմունքի եւ յաճախ տեղեկութեանց պակասը՝ նպատած է այդ յաջողութեան : Ս. Բեթերսպուրկի մէջ անկեղծօրէն կարծեցին թէ Փրանսա այդ դաշտէն կը քաշուէր : Բայց եթէ այժմ, լաւագոյն կերպով ներշնչուած, որոշած է չքաշուիլ, պէտք է որ զայդ յայտարարէ : Փրանսո-ռուս խնդիր մը, երկու երկիրներուն ունեցած արդի յարաբերութեանց վիճակին մէջ, չի կրնար անախորժ ձեւ մը առնել : Բարեկամ եւ դաշնակից պետութիւնները իրաւունք ունին վիճելու այն պիտի խնդիրներու մասին ուր նոյնատեսակ շահեր ունին. անկարելի չի կրնար ըլլալ որ համաձայնութիւն մը գտնուի» :

Այս յօդուածէն կը թարգմանենք հետեւեալ հատուածը, որ մասնաւորապէս շահեկան է մեր հասարակութեան համար :

«... Փրանսական հանրապետութիւնը կրնար հրաժարիլ այն կրօնական պաշտօնէն, զոր թագաւորները անոր իբրեւ ժառանգութիւն ձգեցին. այդպէս չըրաւ : Աստով ազատեց ինչ որ գեռ կը պահէ իր երբեմնի առանձնաշնորհեալ կացութենէն : Փրանսա այլեւս չունի տաճկական երկիրներուն մէջ այն հին մեծ դաղթականութիւնները զոր կը կառավարէր Մարսիլիոյ Վաճառականական ժողովը : Անդլիոյ յանձնեց Արեւելքի հետ առեւտրական գործունէութեանց մէջ առաջին տեղը, եւ կարենալու համար մըցիլ Գերմանիոյ հետ, որ հիմա կ'ուզէ երկրորդ տեղը գրաւել, պէտք էր որ ունենար աւելի երիտասարդ եւ յանգուզն ճարտարաբունեամ մը :

Փրանսա չէր կրնար յուսալ որ Սուլթաններուն իր խօսքը պիտի կրնար մտիկ ընել տալ, եթէ անոնց պետութեանը մէջ կարեւոր, նոյն իսկ ահազդեցիկ դեր մը չունենար կատարելու : Արդ, կաթոլիկներու պաշտպանութիւնը իրեն

կուտայ՝ այդ դերը , որ արգէն մեծ նախանձներ արթնցուցած է : Անոր համարժէքը գտնելու համար , Անգլիա ջանաց իր հովանաւորութեան տակ առնել Հայերն ու Տրիւզները , յետոյ իւրացուց Երուսաղէմի բողոքական Եպիսկոպոսութիւնը , զոր Թրեաերիկ-Կիլիսիոմ Դ. եւ Վիթթորիա թագուհին միասին հիմնած էին : Ռուսիա ինքզինքը օրթոտոքաներու պաշտպան կը յայտարարէ , եւ Գերմանիոյ կայսրը իր բարեկամութիւնը կ'առաջարկէ երեք հարիւր միլիոն մահմետականներու : Ֆրանսա իրապէս ունի , աւանդութիւններով եւ դաշնագիրներով , ինչ որ ուրիշներ չեռ կը ձգարն ձեռք ձգելու :

... Հանրապետութիւնը անտարակոյս ամենամեծ օգուտ մը կը քաղէ ֆրանսական կրօնական առաքելութեանց Արեւելքի մէջ ստացած բարգաւաճումէն : Սուրիոյ եւ Միջագետքի մէջ , ինչպէս ամբողջ Փոքր Ասիոյ եւ Բուսնիի մէջ , Յիսուսեանները , Աստմբախոնիսիները , Լազարիսիները եւ Տոքթրին-Քրեթէնի Եղբայրները հարիւրաւոր դպրոցներ հիմնած են : Ֆրանսերէն կը խօսին Անատոլիոսի ամենէն հեռուոր աւաններուն մէջ ինչպէս Պոլիս , եւ Արեւելքը չճանչնալ ըսել է չհասկնալը թէ լեզուները առաջնակարգ զօրութիւն մըն են իւրեւ ջաղաքական ազդեցութեան եւ վաճառականական տարածման գործակներ : Կառավարութիւնը աւելի լաւ զինուած է քան երբեք իր շահերը պաշտպանելու համար Պաղեստինի եւ Սուրիոյ մէջ : Մարոնիթ ազգը , միակը որ ամբողջութեամբ հռովմէական եկեղեցւոյն կը պատկանի , երեք հարիւր հազար Սուլթանին հպատակներ կը հաշուէ , ամենքն ալ հաւատարմօրէն յարած Ֆրանսայի , որ 1860ին աւտնց բերաւ ի , զէնքերուն օդնութիւնը Տրիւզներուն դէմ : Միլիթիները , յունական ծէսով կաթոլիկներ , իրենց կղերին կրթութեան զործը ֆրանսացի Բէն Պլաններուն յանձնած են : Արամէական կաթոլիկութեան միւս երկու նուազ բազմութիւ խմբակները , Հոմի միացած Սուրիացիները եւ Քիլտանիները , շատ աւելի կը զգան ֆրանսական պաշտպանութեան ներքեւ լատին խմբաւորումին բարեքները , անոր համար որ երկուքն ալ իրենց մէջ հերձուած մը ունին (Յակոբեաններ եւ Նեստորականներ) : Լազարիսիներու արգէն հին քոլէժին մէջ ինչպէս եւ Յիսուսեաններու նորահաստատ դպրոցներուն մէջ , խուռներամ եկած են ոչ միայն բոլոր կաթոլիկները , այլ եւ այլ մահմետականները , Տրիւզները եւ օրթոտոքաները , Ֆր-

րանսայի անուը գտնուը իրեն կը քաշէր , հակառակ իրենց ներքին անհաշտելի կրօնական ատելութիւններուն : Այսօր իսկ , չկայ ուղիււոր մը որ չզարմանայ ակննելով Ֆրանսայի վայելած ժողովրդականութիւնը , մինչեւ իսկ անապատին ամենէն մօտիկ աւաններուն մէջ , այն նախասիրութիւնը զոր ունին անոր համար , դիւրութիւնը որով անոր լեզուն կը գործածեն եւ իրական գորովը որ կը մասնուի այն մեղադրանքներուն մէջ , երբեմն դառն , զոր անոր կ'ուղղեն : Տեսնենք ինչ են այդ մեղադրանքները :

Օտար պետութեանց դերը թրջահպատակ երկիրներու մէջ՝ իր բնութիւնը փոխած է այս դարուն երկրորդ կէսէն ի վեր : Այլ եւս այն օրերուն մէջ չենք ուր հիւպատոսի մը կառավարական քոնաքը մտնելը ամենքը դող կը հանէր , պահակը իր խցիկին մէջ եւ փաշան իր բազմոցին վրայ : Ալի եւ Ֆուատ , Ապտիւ Ազիզի նախարարները , 1848ի յեղափոխութիւնէն յառաջ եկած գաղափարներու շարժումէն օգտուելով , իրենց երկիրը հաս բակաց իրաւունքին մասնակից դարձուցին : Քեամիլ եւ Քիւչիկ Սայիտ , Ապտիւ Համիտի վէզիրները , նոյն ճամբուն մէջ պահեցին երկիրը : Պետութիւնները , իրենց փոխադարձ նախանձտութեանց հետեւանքով , իրենց սեփական առանձնաշնորհութեանց վրայ յաղթանակներ տանիլ տունին Սուլթանին : Հասարակաց իրաւունքը , յառաջադիմութեան սկզբունքը , քարթիթիւլատիոններուն հակառակ է : Ֆրանսա ատով կորսնցուց առաջին կարգին մէջ միայնակ ըլլալու առաւելութիւնը : Ուրեմն առանձնաշնորհեալ վարմունք մը չէ որ պէտք է պահանջէ Բարձրագոյն Գնէն , այլ ճշգրիտ հետեւողութիւն մը դաշնակիրներուն եւ իր բարոյական գիրքին ճանաչումը : Պահանջմանց այս միւսիմամբ կրցած է միշտ պարտաւորիչ դարձնել Արեւելեան աշխարհը իրեն իստօրէն կը մեղադրէ իր քաղաքականութեան քմահաճոյքները :

... Այլեւս ոչ մէկուն համար գաղանիք չէ թէ կարգ մը հանրապետական դիւանագլուներ Արեւելքի կրօնական ջաղաքականութեան մտքերնին դարձուցին , վախալով «կղերամիտ» համարուելէ : ... քրիստոնէից պաշտպանութեան գաղափարին հակառակորդ եղողները անոր նուազ վնաս հասուցած են քան անորոշները , անոնք որոնց քով բարոյական քաջութիւնը պակաս է , եւ որոնք , առանց աւանդութեան թեր կամ գէմ ո եւ է գիրք ըբ-

նելու, ամէն գնով նեղութիւններէն խոյս տուած եւ գրասենեակներու «խնդիր չհաններ» բանաձեւը գործադրած են:

Փրանչիսկեաններու ուժացումը, բնիկ կղեր- ներու մէջ քիչ մը զփոփոխութիւն, Միաբանու- թիւններէն շատերուն հակակրօնութիւնը դէպ ի հանրապետական ոէժիմը, կառավարութեան քաղաքականութեան մէջ համոզմունքի եւ յա- րատեութեան պակասը, տկարացման պատ- ճառներէն զոր պէտք է Ֆուել: Ատով, հակա- ռակորդի մը յառաջդիմութիւնները դիւրաւ կրնան բացատրուիլ: Անոնք աւելի լաւ պիտի հասկցուին եթէ նկատողութեան առնուի որ Փրանսա երեք տարի շարունակ, 1895էն 1898, իրեն բան գործ ըրաւ վիատեցնել ամէն անոնք որ Արեւելքի մէջ իրեն յարած մնացած էին ի- րենց ցեղին յիշատակներովն ու յոյսերովը:

Հայերը, իրենց Լուսաւորչական եկեղեցւոյն մէջ կղզիացած, եւ ուրեմն չպատկանելով ո՛չ Լատինականութեան ո՛չ Օրթոտոքսութեան, ոչ մէկ իրաւունք չունէին օգնութիւնը պա- հանջելու այն երկու պետութիւններուն որոնք իրարու ձեռքէ կը քաշեն Արեւելքի կրօնական պաշտպանութիւնը: Իրենց զփրազողութեանց պատճառներէն մին կղաւ այդ: Եւ սակայն, Փրանսա, որ իր 1848ի զգացումները անոնց ուսուցած էր, կրնար ինքզինքը պատասխա- նատու համարիլ այն գաղափա ներուն զոր ա- նոնց հայրենասէրները մինչեւ ի մահ պաշտ- պանեցին: Ատկից զատ, Հայերը քրիստոնեայ են, եւ քրիստոնէութեան պաշտպանութիւնը ֆրանսական անունին փառքը կաղմած է Ա- րեւելքի մէջ:


Անգործութեան թաքթիքը. որ հայկական ճգնաժամին ատեն ֆրանսական կառավարու- թեան թաքթիքը եղաւ, Թուրքիոյ քրիստոնեայ ազգերուն մէջ անբացատրելի ապշութիւն մը սփռած է: Պ. Հանոթօ բեմէն պարզեց անգործու- թիւնը արգարացնող ամէն տեսակ պատճառ- ներ, ամբողջ Արեւելքը միաձայն զանոնք յոռի գտաւ: Տաճիկներն անգամ, տեսնելով մեծ պետութիւն մը որ կը խոստովանի իր նիւթա- կան տկարութիւնը, դուշակել տուին իրենց սովորական արհամարհանքը այն ամէն բանի համար որ ուժ չէ: Ունայնութիւնն ու անխո- հեմութիւնն զգացին քաղաքականութեան մը որ ամէն գնով Սուլթանը խնայեց՝ ու վերջ ի վերջոյ բեմին կատարէն զայն խոտաբար դա- տեց այն օրն ուր ֆրանսական հանրային կար- ծիքը Անատոլուի ոճիրներուն անվերջանալի

շարքէն յուզուեցաւ: Այսպէս ֆրանսական կա- ռավարութիւնը իր հաճոյակապարութեան բե- րելիք շահն անգամ ձեռքէն կը փախցնէր: Ապտիւլ Համիտին սիրտ տալով առանց անոր հաճելի ըլլալու, յուսահատութեան մղած էր ա- րեւելեան կաթողիկէները որոնք կարծեցին թէ պաշտին ոճրագործ խենթութեանը ձեռքը լըք- ուած էին: Այդ անսահման զոհողութեանը դէմ Բարիզի դահլիճը փոխարինութիւններ յուսա- ցած էր: Ո՛ւր պէտք է փնտուել առոնք: Ամէն կողմէ ուրիշ բան չէր տեսնուեր բայց եթէ մրցակիցներ կամ թշնամիներ, եւ Փրանսա, Հա- յաստանի ջարդերուն հետեւեալ օրն իսկ, Ա- րեւելքի մէջ տարօրինապէս կղզիացեալ կ'ե- րուար: Քրիստոնեաները, յուսախար, գացին ուր որ իրենց բաղղը զիրենք կը մղէր, դէպ ի այն տէրը որ բաւական զօրաւոր էր որպէսզի տիեզերական խղճին դէմ խիզախէր: Սուլթանը իր գահին ոտքը տեսաւ ոչ միայն իրենց եղ- բայրներուն արիւնովը ծածկուած Հայերը (*), այլ կայսրութեան բոլոր ազգերը, անոր ղայրոյթը իրենցմէ հեռացնելու փութկոտ:

Փրանսա ատով կորսնցուց աւելի բազմա- թիւ «յաճախորդ»ներ քան ինչ որ այն միջոցին կարծեց: Հաւատարիմ Մարոնիթիւններն անգամ դէպ ի Կ. Պոլիս դարձան՝ երկրորդ երաշխաւո- րութիւն մը ընդունելու համար:


Բայց որպէս թէ քաղաքագէտներու սխալնե- րուն անմիջական դաս մը հարկաւոր ըլլար, դէպք մը չուշացաւ ապացուցանել Մեկինի կա- ռավարութեան զգուշամտութեան ունայնու- թիւնը: Սուլթանը կրետէն կորսնցուց: Հա- յաստանի ջարդերուն փրկանքը եղաւ այդ: Ար- տաքին գործոց նոր նախարար մը այդ արդա- րութեան գործին եռանդագին գործաւիցած էր: Բաւած էր ամուր խօսիլ եւ Սուլթանի նաւակայ- քին մէջ մարտանաւեր ցոյց տալ: Սուլթանը իր ժողովուրդներուն դէմ գործադրուած ոճրի մը դինը կը հատուցանէր իր երկիրներէն մէ- կուն կորուստովը, ու եւրոպան, հակառակ ֆը- րանսական բեմին բարձունքէն արձակուած նա- խագուշակութեանց, լնդհանուր պատերազմի նշանը չէր տար...

ԺՈՐԺ ԿՈՂԻՍ



(*) Յօդուածագիրը այս տեղ ցաւալի սխալ մը կը գործէ շփոթելով հայութեան պաշտօնա- կաններկայացուցիչները (Տատեան, Օրմանեան, եւն) որոնք Սուլթանին ոտքը ինկան՝ նոյն ինքն հայ ժողովրդին հետ որ իր բողոքին մէջ անդրդուելի մնաց:

ՊԱՏՈՒՅՑ ԱՏԵԱՆ



Ընդարձակ յաւելուածով մը, «Դրօշակ»ը հը-
րատարակեց վերջերս Վերակազմեալ Հնչակեան
կուսակցութեան եւ հայ յեղ. Դաշնակցութեան
միջեւ Միութեան նպատակով կատարուած
բանակցութեանց տեղեկատուութիւնը, եւ
հաւաքածուն այն տոքիւմաններուն որոնք
Դրօշակեան կուսակցութիւնը մղած են Արփի-
արեանը «մատնիչ» հոչակելու: «Դրօշակ»ի այդ
յաւելուածը երկու մասի կը բաժնուի ուրեմն,
որոնք ինծի համար իրարմէ բոլորովին ան-
ջատ են: Թէ այդ Միութեան խնդրոյն մէջ,
երկու կողմէն ո՛ր աստիճան անկեղծութիւն,
ո՛ր աստիճան կանոնաւորութիւն, յստակ ու
հետեւական վարմունք ցոյց տրուած է, ատի
ուրոյն հարց մըն է, որմով յետոյ պիտի
զբաղինք: Թէ, ասկից զատ, Դրօշակեան կու-
սակցութիւնը, որ սկիզբէն ի վեր Հնչակեան
կուսակցութեան հանդէպ հակառակորդ եւ
թշնամի մարմնոյ մը վարմունքը ցոյց տուած
է ամէն պարագայի մէջ (Սասուն, Պոլիս, Զէյ-
թուն, եւն), ո՛ր աստիճան իրաւունք ունի
բարձրահայեաց եւ անկողմնակալ ուսումնասի-
րութեան մը ձեւերն առնելով՝ իր Յաւելուա-
ծին առաջին մասին մէջ Հնչակեան կուսակ-
ցութեան բովանդակ գործունէութիւնը արհա-
մարհակաւ քննադատութեւ: Է մը անցնելու, երբ
մանաւանդ ինքն իսկ Հնչակեան կուսակցու-
թեան ծրագիրը նոյնութեամբ ընդգրկած եւ
միեւնոյն ուղղութեամբ գործած է՝ յոկ կազմա-
կերպութեան եւ գործադրութեան մանրամաս-
նութեանց տարբերութիւններով, — աս ալ
զատ հարց մըն է, եւ շատ շահեկան հարց,
որմով յետոյ կարելի է զբաղել, որմով Հնչակ-
եան հին գործիչները մանաւանդ պարտք ու-
նին զբաղելու՝ հայ յեղափոխութեան պատ-
մութեան ճշդումի գործին համար: Առ այժմ,
կարեւորը, կենսականը, յաւելուածին երկրորդ
մասն է, այն մասը որ կը պարունակէ Արփիա-
րեանի «մատնիչ ըլլալն» ըստ Դրօշակեան կու-
սակցութեան ապացուցանող տոքիւմանները:
Այդ տոքիւմաններուն վերջնականապէս համո-
զիչ եւ անհերքելի ըլլալուն մասին տարակու-
սիւր երբեք չ'ենթադրելը Վերակազմեալ Հըն-
չակեան կուսակցութիւնը յեղափոխական «ան-
թերի» եւ «տեսլական» կազմակերպութիւն մը

համարել, — ասի վերջապէս պէտք է լաւ մը
ճշդուի եւ հասկցուի: Հարցը, բուն հարցը, կը
կայանայ գիտնալու մէջ թէ Արփիարեան ի-
րօք մատնիչի դեր կատարած է թէ ոչ: Այս
հարցին լուծուելէն յետոյ է որ այդ խնդրով
եւ ուրիշ շատ մը յարակից խնդիրներով կա-
րելի պիտի ըլլայ լրջօրէն զբաղել:

Ամէն ոք կը յիշէ որ երբ 1897ին Վառնայի
թերթերէն մէկուն մէջ «Հրանդ» իր ամբաս-
տանիչ յօդուածներուն շարքը սկսաւ հրատա-
րակել, եւ զայրոյթի ազազակ մը բարձրացու-
ցի ի անս այդ գայթակղեցուցիչ ընթացքին
որով հանրային գործիչ մը կ'անուանարկէին
ամենէն մահացու ամբաստանութեամբ՝ առանց
չօջափելի փաստեր մէջ բերելու: Զայրոյթս
այնքան աւելի բուռն էր որ կը ճանչնայի
Արփիարեանը եւ զինքը անկարող կը նկատէի
զբամական նկատումներով ազգը մատնելու
հրէշային արարքին, եւ զիս այդ սպաւորու-
թեանս մէջ կը զօրացնէր սա պարագան ալ որ
Արփիարեան ամենէն առաջ պահանջած էր,
«Մարտ»ի յօդուածով մը, որ տոքիւմանները
հրատարակուին, եւ պատուոյատեան մը կազ-
մուի՝ խնդիրը վերջնապէս լուծելու համար:
Գովելով Արփիարեանին պահանջքը, ձայ-
նակցեցայ իրեն «Իրաւունք»ին զրկած յօ-
դուածովս, եւ յայտարարեցի որ ազգին համար
անբարոյացուցիչ ու վնասակար եզող այս
խնդրոյն վերջնական լուծում մը տալու
համար՝ անհրաժեշտ էր պատուոյ ատեան մը
կազմել, ու եւ է կուսակցութեան չպատկանող,
անկախ եւ անկողմնակալ անձնաւորութեանց
զատարանին ենթարկել այս հարցին քննու-
թիւնը:

Այժմ, կը մտածեմ որ «Դրօշակ»ը շատ աղէկ
բան մը ըրած է տոքիւմանները հրատարակե-
լով: Առաջին քայլն է այդ: Կը մնայ երկրորդը
առնել, կարեւորագոյնը, — պատուոյ ատեանը
կազմել: Դրօշակեան կուսակցութիւնը կը կար-
ծէ թէ իր տոքիւմանները կը բաւեն վէճի ա-
ռարկայեղած խնդիրը լուծելու, բայց Դրօշակ-
եան կուսակցութիւնը չի կրնար պահանջել
որ ըստը Հայերը միեւնոյն եղանակով մտա-
ծեն եւ կուրօրէն խոնարհին այդ վճիռն առջեւ:
Անհրաժեշտ է քննել այդ տոքիւմանները, ա-
նոնց մէջ շարուած «իւրողութիւններուն» ըս-
տուգութիւնը ճշդել, եւ եղբակացութեան մը
յանդիւ: Առաջին նայուածքով իսկ, այդ տո-
քիւմանները կը ներկայացնեն խառնակ, ան-
խնամ, քմածին քառս մը ամէն տեսակ նիւ-

թեղէններու . տոբիւմաններու հաւաքածուն պատրաստողները անոր մէջ թխած են ամէն ինչ որ ձեռքերնին ինկած է՝ առանց ուրիշ մանրակրկիտ ու խիստ քննութեան : Մինչեւ անգամ զիջած են հոն տեղ տալ ուրիշ Սօսիի մը սա ծիծաղելի զրպարտութեան թէ «Ապահովութեան համար Չօպանեանի հասցէին եկած իմ նամակները ստորութեամբ բացուում էին», ինչ որ բացարձակ ստութիւն մըն է . ես ամենայն ինամբով զրկած եմ այդ պարոնին նամակները , առանց անոնց երբեք զպչելու . (այս աննշան մանրամասնութիւնը կը յիշեմ ցոյց տալու համար թէ «Դրօշակի Յաւելուած»ին մէջ ի՞նչ աստիճան ողորմելի ցեխացայտքներ հիւրընկալուած են «Իբրեւ փաստ») : «Դրօշակ»ը Արփիարեանի մատնչութիւնը հաստատելու համար ամենակարեւոր տեղ մը կուտայ «մեղայագրին» . արդ , այդ «մեղայագրէն» յետոյ — որ Արփիարեանի բարոյական տկարացման մէկ տխուր վայրկեանին ծնունդն է , բայց ինքնին չի կրնար երբեք անոր «մատնչութեանը» ապացոյց սեպուիլ , — ոչ միայն այսօր բոլոր Հայոց յարգանքը վայելող շատ մը գրագէտներ , այլ եւ Նուսուֆեան , «Հրանդ» եւ «Օգիմդա» Դրօշակեանները եկած են երկար ատեն , «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ բարեկամաբար գործակցել Արփիարեանին , մինչդեռ այդ բանը պիտի չընէին եթէ այդ «մեղայագրը» բաւէր Արփիարեանին մատնչութիւնը հաստատելու : Տօբիւմաններուն կեդրոնական , էական կտորը , Արփիարին հարցաքննութեան թղթերը , մէկ քանի կասկածելի շանդամանքներ կը ներկայացնեն զորոնք անկարելի է չնկատել : Այդ թղթերը Դրօշակեան կուսակցութեան յանձնուած են Թիւթիւնճիեֆ մատնիչին ձեռքով , ասի ամենքս գիտենք , եւ Դրօշակեան կուսակցութեան սնօրէն մարմինը ամենէս աւելի լաւ գիտէ այդ բանը . արդ , յաւելուածը , որ ամենաչնչին մանրամասնութիւններ յիշատակած է , այս կարեւոր մանրամասնութիւնը բոլորովին քողարկած է . ինչո՞ւ համար : «Դրօշակ»ի խմբագրութիւնը գիտէ որ Թիւթիւնճիեֆ այդ թղթերուն գիւտը կատարեց՝ Արփիարեանի հետ խմբագրական կռիւ մը ունենալէ անմիջապէս յետոյ (Արփիարեան մերժած էր հրատարակել Թիւթիւնճիեֆի մէկ գրքին ազգը «Հայրենիք»ին մէջ , որովհետեւ չէր ուզեր որ մատնիչի մը անունը երեւնայ «Հայրենիք»ին մէջ) . այդ մասին ոչ ի՞նչ «Դրօշակ»ի յաւելու-

ածին մէջ : Յետոյ , ինքնին , այդ թղթերը աւելո՞ւածային երեւոյթ մը ունին . ինչո՞ւ Թիւթիւնճիեֆ պարզ ու բնական գաղափարը չէ ունեցած հարցաքննութեանց թրքերէն բընագիրը նոյնութեամբ ընդօրինակելու , — ինչ որ շատ աւելի «կարելի» կը դարձնէր անոնց հոգեբանական ուսումնասիրութիւնը ; — եւ զանոնք հայերէնի թարգմանելու աւելորդ նշանութիւնը յանձն առած է : Նպատակս «Յաւելուածին» մանրամասն վերլուծումն ընել չէ . չեմ կրնար զայդ ընել , որովհետեւ կարգ մը կէտերու համար վերստուգութեան միջոցներ ինձի կը պակսին : Միայն թէ այս մէկ քանի գիտողութիւնները կը ներկայացնեմ՝ ցոյց տալու համար որ այդ «Յաւելուած»ը բնութիւն չունի իբրեւ անհրաժեշտ փաստերու յիշատակարան մը կանգնելու , որուն առջեւ ուրիշ Հայ պարտաւոր ըլլայ՝ ճշմարտութեան մօրէմերկ յայտնութեանէն շրջաճ՝ խոնարհիլ : Ընդհակառակն , ոչինչ այնքան կը զգացնէ մանրամասն ու խղճամիտ վերաքննութեան մը պէտքը որքան այդ Յաւելուածը : Ուրեմն առաւել քան երբեք անհրաժեշտ է պատուոյ արեանի մը կազմութիւնը :

Դրօշակեան կուսակցութիւնը իր յաւելուածին մէջ կ'ազդարարէ թէ ինքը չ'ընդունիր ուրիշ նոր վճիռ այս խնդրոյն նկատմամբ , եւ թէ Պոլսոյ քոմիթէին վճիռը , որուն վրայ կը հիմնուի , իրեն համար վերջնական է : Կուսակցութեան մը սկզբունքներուն տեսակէտէն , այս տարամերժութիւնը կրնայ բացատրելի ըլլալ . կուսակցութիւն մը երբ մահուան վճիռ տալու չափ կը համոզուի անձի մը մատնչութեանը , բնական է որ տրամադիր չըլլայ ընդունելու որ իր վճիռը «քննութեան երթարկուելու կարօտ է» : Բայց ազգը պարտաւոր չէ աչքերը գոց իբրեւ ճշմարտութիւն ընդունիլ կուսակցութեան մը վճիռը : Կուսակցութիւն մը շատ անգամ , կուսակցական կրքերու բորբոքումէն կուրացած , կրնայ անգիտակցաբար ծայրայեղութեանց եւ սխալ դատողութեանց մղուիլ : Անկուսակցամուլ , ամէն կերպով անշահախնդիր եւ անկողմնակալ ատեան մը միայն կրնայ այսպիսի հարցի մը վերջնական պատասխանը տալ : Դրօշակեան կուսակցութիւնը , որ համոզուած է իր վճիռն ճշգրտութեանը , փափաքող ըլլալու է որ այդ պատուոյ ատեանը կազմուի : Իսկ վերակազմեալ հնչակեան կուսակցութեան համար սիրական պարտականութիւն մըն է այդ Ատեանին կազ-

մութիւնը պահանջել : Ատեանը պէտք է կազմութիւնը ախարի անձերէ որոնց անկողմնակալութեանը եւ պարկեշտութեանը համոզուած ըլլան երկու կուսակցութիւններն ալ : Այդ ատեանը պէտք է որ մի առ մի քննէ յաւելուածին բոլոր իրողութիւնները , գրաւոր վկայութիւններ պահանջէ Թիբեաքեանի, Վահրամ պէյ Տատեանի պէս անձերէ՝ որոնց կը վերագրուին Յաւելուածին մէջ որոշ կարծիքներ , եւ որոնք պարտաւոր են յայտնել թէ ի՞նչ կը մտածեն իրենց վերագրուած այդ կարծիքներուն նկատմամբ : Այդ ատեանին վրճիւր ամենքը պարտաւոր պէտք է ըլլան ընդունելու իբրեւ վերջնականը , եւ այդպէսով միայն պիտի փարատի այդ անտանելի միջաւանը որ մեր ազգային գործունէութեան մթնոլորտին մէջ ամենէն վնասաբեր երեւոյթներն մէկը եղած է :

Դրօշակեան կուսակցութիւնը , օգնելով որ այս ատեանը կազմուի , «հայրենասիրական գործ» մը կատարած պիտի ըլլայ : Իր մերժումով՝ ճիշդ հակառակը : Դրօշակեան կուսակցութիւնը երկսայրաբանութեան մը առջեւ կը գտնուի . եթէ համոզուած է իր վճռին ճշդութեանը , պէտք է այժմէն վստահ ըլլայ թէ կազմուելիք Ատեանը իրաւունք պիտի տայ իր վրճոսին քանի որ Ատեանը պիտի բաղկանայ պարկեշտ եւ անկողմնակալ Հայերէ , եւ այս պարտաւորութիւն , պէտք է որ խանդավառութեամբ ընդունի պատուոյ ատեանին կազմութիւնը : Եթէ չընդունի , պիտի ապացուցած ըլլայ՝ ա . թէ վստահ չէ իր վճռին ճշդութեանը , կամ՝ բ . թէ չի հաւատար որ ամբողջ հայ ազգին մէջ 4 կամ 6 Հայ կրնան դտնուիլ որ բացարձակապէս պարկեշտ , անկողմնակալ եւ արդարադատ ըլլան :

Ա . 2 .

Յ . Գ . «Մարտ»ի վերջին թուոյն մէջ , կը տեսնեմ Պ . Պ . Յակոբեանի եւ Իսքէնտերի մէկ նամակը , որով պէտքը կը զգացնեն պատուոյ ատեանի մը եւ անոր վաղընդփոյթ կազմութիւնը կը պահանջեն՝ ազգային ընդհանուր բարոյականին համար իբրեւ անհրաժեշտ կարիքի մը դոհացումը : Իրոք . Յակոբեան եւ Պ . Իսքէնտէր հանրաձայնօթ են իրենց բազմամեայ անձնուէր , անչաճախնդի գործունէութեամբը , եւ շատ դոհեմ որ այս պարտաւորութիւն մէջ իրենց հեղինակաւոր ու ազնիւ ձայնը լսելի կ'ընեն , ցոյց տալով չարիքին միակ դարմանը որ կարելի է եւ փափաքելի :

«ՔԻՐՈՒՍԹԱՆ» ԼՍԳԻՐԸ

— 0 —

Անուրանալի ճշմարտութիւն մըն է որ մեր դատի արդիւնաւոր պաշտպանութեանը համար ինչքան որ պարտաւոր ենք հետեւիլ եւրոպական քաղաքականութեան ընթացքին , այնքան ալ՝ եւ աւելին , պարտաւոր ենք ի նկատի ունենալ մեր դրացիներու արամազրութիւնները , եւ ինչ նշանակութիւն որ ունին մեզ համար եւրոպայի համակրական արտայտութիւններու խրատուսանքները՝ անոնց չափ նշանակալից ու կարեւոր են եւ դրական օգուտ ունին մեր դրացիներու ձայնակցութիւնները : «Քիւրուսթան» լրագիրը այժմ արձագանք կը հանդիսանայ մեր ամենամօտիկ դրացու եւ բնակիցի՝ Քիւրուսթանի ձայնին : Երկրորդ սարին է որ կը հըրատարակուի այս թերթը՝ անօրէն-խմբագրութեամբ Պէտրիան պէկի որդի Ապաիւրրանման պէկի , կիսամեայ հրատարակութեամբ , քրդերէն լիզուով եւ մասամբ ալ՝ Երեսասարդ թուրքերու խնդրանքով , թուրքերէն լիզուով , նախ Գահիբէի , յետոյ Ժնեւիլի եւ վերջերս կրկին Գահիբէի մէջ :

«Քիւրուսթան»ը քաղաքակրթութեան այժմեան հսկայաքայլ յառաջխաղացութեան մէջ , յետամնացի յատուկ փութկոտութեամբ ու եւսանդովը իր փոքրիկ ծաւային մէջ ջանացած է ընդգրկել կեանքի ու ժամանակի բոլոր անհրաժեշտ պայմաններն ու հարցերը՝ անշուշտ իր կարողութեան ու միջոցներու չափովը :

«Քիւրուսթան»ի անօրէնը ըմբռնած ըլլալով որ տգէտ եւ ստորակ հասարակութեան մը վիճակին արեւտական բարեփոխումը կախուած է սոսկ այդ հասարակութեան կրթութիւն ըստանալէն , իր թերթին մէջ առաջին տեղը տուած է կրթութեան ջատագովութեանը : Եւ իրաւ «Քիւրուսթան»ի գրեթէ իւրաքանչիւր համարի խմբագրականը քարոզ մըն է կրթութեան կարեւորութեանը եւ անհրաժեշտութեանը մասին եւ ցնցող հրաւեր մը քիւրս հասարակութեան հոգեով անոր փարեւու եւ փութով անոր տիրանալու : «Քիւրուսթան»ը իր այս վարդապետութեան համար կը գործածէ իր ռամիկ ընթերցողին հասկանալի լեզու մը : Ըմբռնել տալու համար անոնց իր դադափարներու ճշմարտութիւնը , փաստեր , օրինակներ առաջ կը բերէ բնութիւնէն , դրացի ծանօթ ժողովուրդներէն , եւ նոյն իսկ «Անուրան»էն : Կ'ընդունի եւ կը ջանայ ընդունիլ տալ իր ժողովուրդին , որ քիւրս իր այժմեան աւազակ ողբի ամօթալի ու տխուր համբաւը կը պարտի սոսկ իր ազիտութեանը : Մեծ յոյս եւ հաւատ ունի ու կը ներշնչէ թէ քիւրսն ալ ընդունակ է եւ կրնայ ապագային՝ իբրեւ արեւակաւ ցեղէ ժողովուրդ մը իրեն յարուկ պատաւոր դիրք մը ունենալ մարդկութեան մէջ՝ եթէ ջանայ շուտով թօթափել իր միտքը պարփակող տգիտութեան մատախուղը : Եւ «Քիւր-

տիսթան» փաստերով կ'ապացուցանէ որ քիւրտի տգիտութեան միակ պատճառը թուրք կառավարութիւնն է եւ թէ քաղաքական ինչ ինչ կ'նճոտ ինչիւրեք տու լուծմանը համար թուրքին աւելի ձեռնտու է քիւրտի տգիտութիւնը : Հրաւեր կը կարգայ քիւրտերուն ուշքի գալ եւ իրենց մէջ կրթութիւն տարածելու արդար պահանջն ընել կառավարութեան, ու եթէ կառավարութիւնը հակառակ այդ նպատակով ժողովրդէն հաւաքած աւերքին, շարունակէ իր անտարբերութիւնը, ինչ որ հաւանական է, կը յորդորէ իրենց սեփական ջանքերուն զիմել, ինչպէս ըրած են թուրքի միւս հպատակները : Եւ «Քիւրտիսթան»ը առաջինը չը լինի քիւրտ հասարակութեան մէջ այս պահանջը ներկայացնող :

Չնայելով որ «Քիւրտիսթան»ը քիւրտ պահանջութեան հիմը կուզայ գնել, զեռ եւս ժողովրդական գրականութեան այնքան կարեւոր բաժին մը չունի : քրդական բազմազան գաւառաբարձներէն կը գործածէ Պարուարին կամ Թիարինը միայն, զոր մշակելու նպատակով կ'աղճատէ յաճախ արարական եւ թրքական բռներով : Քիւրտ ժողովուրդի գրական բազմութիւն բանաւոր արասայտութիւններէն կը պարունակէ «Չին ու Մամէ» ստանաւոր տաճար միայն, որ շարունակելի է զեռ :

Ունի պատմական բաժին մըն ալ, որ սակայն գիտական ամէն արժանիքէ զուրկ է զգալի քար : հոն անստոյգ եւ անվաւեր ակնարկով մը քիւրտը սասանեան աւազանին մէջ մկրտակէ յետոյ, դարերուն վրայէն հսկայ թռիչով մը Պէտիրիան պէկի հաւուն վրայ կը ցատքէ եւ Պէտիրիան պէկի վրայ կանգ կ'առնէ :

Այսպէս թէ եւ զեռ «Քիւրտիսթան»ը գիտական բանասիրական արժանիք մը չունի, սակայն քաղաքական տեսակէտով մեծ տեղ մը եւ զեր մը ունի իր համախոհներուն մէջ եւ անոր բռնած ուղին իր հասարակութեան համար շատ օգտակար ու բարեբար է, եւ մեղ համար խիստ շահեկան : Պարզ եւ մակին կերպով կը պարզէ քիւրտերուն, թուրք կառավարութեան արդի անկարգ կազմակերպութիւնը, իր բոլոր զեղծումներովը, եւ այս առթիւ եւրոպական կառավարութեանց ոտնձգութիւնները թրքական Ասիոյ մէջ : Քաղաքական իրերուն ընթացքը կը նախատեսէ եւ համոզուած հաւատարմով մը կ'ընդունի որ թուրք կառավարութիւնը իր այժմեան խախուտ եւ անգոր վիճակով ճակատագրական անդարմանելի գահավիժման մը ենթարկուած է այլեւս : Յաջորդ լուծի մը տակ — այսինքն ուսական լուծին, — իր հասարակութեան տոհմային գոյութիւնը ապահովցնելու նպատակով կ'աշխատի իր բոլոր ուժովը այժմէն անոր կարեւոր զիրք մը գրաւել տալ : Եւրոպական քաղաքականութեանց մէջէն աւանդին հակում մը ցոյց կուտայ Անգլիական քաղաքականութեան եւ այս այն ատիճան որ անգլո-թրքականութեան պատերազմին համար, հարիւրաւոր քիւրտ կամաւորներու պատրաս-

տականութիւնը կը յայտնէ Անգլիական կառավարութեան, առաջարկութիւն մը որու կատարումը Բարձրագոյն Դուռը խափանած է :

Սակայն «Քիւրտիսթան»ը եւրոպական քաղաքականութեանց մէջ իր ընտրութիւնը ընելով հանգերձ, իր սպագայ բարօրութեան յոյսը անոնցմէ ոչ մէկուն վրայ կը դնէ, այլ միայն քիւրտ հասարակութեան ուրոյն ջանքերուն եւ քիւրտին դիացի Հայուն նիւակակցութեանը վրայ : Ուստի ամէն ճիգ ի գործ կը դնէ քիւրտի եւ Հայու մէջ թուրքի մինչեւ հիմակ սերմանած ատելութիւնը արմատախիլ ընելու եւ զանոնք «քնակակցի բարեկամական եւ բարակակցի շահակցական կապերով միմեանց շաղկապելու» : Այս առթիւ «Քիւրտիսթան»ի կարգացած քարոզներն ու հրաւերները բազմաթիւ են եւ իրենց պարզութեան մէջ շատ ուշագրաւ : Առ այժմ կը բաւականանամ հոս թարգմանութիւնը զնելով «Քիւրտիսթան»ի սնօրէնին եւ կամ հետեւեալ բազմաբովանդակ նամակին որ կը կրէ ձեզիբեցի Մուլա Սալէհի ստորագրութիւնը, եւ որ կ'ապացուցանէ թէ «Քիւրտիսթան»ի ցանած սերմերը արդէն սկսած են պլուտող տալ :

(«Քիւրտիսթան», Ա. Տարի, թիւ 14)
Տէր իմ (Միւր է մըն),

«Այս լրագիրը որու հրատարակութիւնը ձեռնարկած էք, տասնեւհինգ օրն անգամ մը միայն լոյս տեսնելով՝ բաւական չէ : Մեր երկրի մէջ դժուարաւ մեր ձեռքը կ'անցնի՝ կը կարգանք : Դուք Պէտիրիան պէկի զաւակներդ մեր քիւրտերու՝ տէրերն էք : Չեղ նման տէրերէն մենք միշտ բարիք կը սպասենք : Կը մաղթենք որ ձեր այս գործը ձեր հօր բարեփոխութեան շարունակութիւնը ըլլայ, եւ յոյս ունինք որ ձեր բարեգործութիւնը Աստուծոյ եւ Մարգարէին ընդունելի կ'ըլլայ : Դուք ձեր լրագրովը յաւիտեանս կ'անմահացնէք ձեր անունը :

Գիտութեան կարեւորութեան մասին կը գրէք : Գիտութեան օգուտը արդարեւ անուբանալի է : գիտութիւնը այնպիսի լոյս մըն է, որով կոյրերն իսկ իրենց համար տեսանելիքներ կ'ունենան : Բայց ի՞նչ ընենք որ այսօր զարգացած անձինք զեռ չկան մեր մէջ : Աստուած թշնամու աչքերը կուրցնէ : Ապտիւլ Համիտն ըսեալ հիմակ այլեւս գիտենք թէ ինչ որ քիւրտին կրնայ լաւ, բարի ըլլալ՝ զայն չ'ուզեր : Խայտառակ եւ անապիւր անձեր է հաւաքած իր շուրջը, իր խորհրդականները ամբողջն ալ սրիկաներ ու բոջաներ են, անոր համար մեր վիճակն ալ այսպէս երթալով կը վատթարանայ : Քիւրտով զբաղիլը ապա ուրեմն Պէտիրիան պէկի որդեոցը կը մնայ : Սակայն ներեցէք նկատելու որ դուք ալ ուշ ճանչցած էք ձեր պարտականութիւնը, ապա թէ ոչ ինչո՞ւ քան տարի առաջ չպիտի հրատարակուէր այս լրագիրը :

Մեր վրայ եկած պաշտօնեաները զեռ բռնութիւն կը բանեցնեն եւ մեր գոյքը կը յա-


փշտակեն • սակայն կը յուսանք Աստուծոյ որ այս վիճակը այլևս երկար չպիտի տևէ եւ այն յոյսը ունինք որ Քիւրտիին ալ բարօրութեան եւ երջանկութեան ընդհանրութիւն հասած է :

«Ձեր շրագրի նկատմամբ ուշագրաւ կէտ մը կայ , այն ալ այս է որ ձեռքս ունեցած բոլոր համարները կարգալով կը տեսնեմ որ դուք միշտ միմիայն ինչ բան որ լաւ է բարի է այն կը գրէք , ապա ինչո՞ւ անոր ազատ մուտքը մեր երկիրն մէջ արգիլուած է . . . ուրեմն Սուլթանն Համիտը կը հրաժարի , խոյս կուտայ բարի բաներէն : Ասկից զատ՝ կը լսենք որ ամէն տեղ զպրօններ կը բացուին ու ժողովուրդներ կը կրթութիւն , միջոցաւ մեր երկիրը տակաւին կըրթութեան նշոյլն անգամ տեսած չէ : Պարզ է ապա որ թագաւորը չի ցանկար որ Քիւրտը կրթութիւն , ընդհակառակն ուրախ կ'ըլլայ որ մենք միշտ այսպէս ուրիշ ժողովուրդներէն ստոր մնանք : Ամբողջ քիւրտերը Հայերու դէմ կը հանէ անոնց վրայ յարձակել կուտայ : Մենք հիմակ այլևս կը հասկնանք որ Հայը կը նեղուի (եւ իր տանջանքէն կը հեծկլտայ) , եւ այժմ թագաւորի նպատակն ալ կը հասկնանք : Ան կուզէ որ մենք միշտ Հայերու հետ կուտամ մնանք : Բայց թող այլևս ուշքի գայ եւ հաւատացած լինի (թագաւորը) , որ մենք այսուհետեւ մեր պատուոյ վրայ երդուած՝ մեր տիրոջ (ձեր) պաշտ պանութեամբ եւ հրահանգով ըստ մեր կարի մեր ձեռքէն եկած մարդկութեանը (բարեկամութիւն) պիտի ընենք անոնց (Հայերուն) : Մենք կ'ըմբռնենք որ մեր ամբողջ չարեաց պատճառը «Պալատի» պառակտիչ եւ նեղ հոգիներն են : Աւաղելս կուգայ սա բանին որ Պոլսոյ մէջ այսօր այսքան հազարաւոր քիւրտեր կան , եւ անոնցմէ մէկը օր մը մահուան հարուածով մը այն նեղ մէջտեղէն չէ անհետացուցած : Ապշեցուցիչ բան մըն է որ թագաւոր մը բոշայի մը ձեռք խաղալիկ դարձած է : Այս նամակը վերջինը չպիտի ըլլայ • յոյս ունիմ որ այսուհետեւ առիթ կ'ունենամ Քիւրտիութեանէն ձեզ տեղեկութիւններ հաղորդել , սակայն վստահ չեմ թէ այս նամակն իսկ ձեր ձեռքը պիտի հասնի կը յուսամ թէ չնորհ կ'ընէք պատասխանել ինձ :»

Այսուհետեւ յաճախ տեղեկութիւն պիտի տանք «Անահիտի» մէջ «Քիւրտիութեան» պարտականութեան մասին :

ՀՈՇՏԱԿ

Բարեկ



ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՇՐԱԺԱՐԱԿՆԸ

— 0 0 —

Օրմանեան պատրիարքը դարձեալ հրաժարական տուաւ մարտ ամսու սկիզբները : Պոլսէն մեզի կը հաղորդեն թէ պատճառաբանեալ հրաժարական մը տուած է պալատին , եւ ասի զայրացուցած է Սուլթանը : Հրաժարականին պարունակութիւնը հաղորդուած է եւրոպական մամուլին , եւ «Թան» , ինչպէս եւ ուրիշ լրագիրները , հրատարակեցին ընդարձակ հեռագիրներ որոնց մէջ մանրամասնօրէն կը բացատրուէին այն պատճառները որոնց համար Օրմանեան որոշած է հրաժարիլ : Օրմանեան կը պահանջէ , ոչ միայն Սաի կաթողիկոսական ընտրութեան օրինաւոր ու վաղընդօրոյթ կատարումը , այլ եւ գաւառներուն մէջ Հայոց համար երթեւեկութեան , ինչպէս եւ օտար երկիրներէ հայրենիք վերադարձի ազատութիւն , գինուորական տուրքերու մէկ քանի տարուան զիջուած պարտքին ջնջում , եւն : Պալատը ջանացած է որ Օրմանեան հրաժարականը ետ առնէ՝ բայց Օրմանեան անդրդուելի կը մնայ իր որոշման մէջ : Անցեալին սխալները դարմանելու ձգտում մըն է այս արդեօք՝ Օրմանեանի մէջ , կը մաղթենք որ այդպէս ըլլայ : Տատեան փաշան , որ «չար ոգին» եղած էր Օրմանեանին եւ անոր գործած սխալներուն բուն թելադրիչն ու հեղինակը , նորէն իր հնարքները սկսած է թափել՝ հրաժարականը ետ առնել տալու համար : «Թան»էն կ'իմանանք թէ Հնչակեան կուսակցութիւնը , զայրացած Տատեանի այս ընթացքէն , պատնական նամակ մը զրկած է անոր :

«Ահաւասիկ պատճէնը , կը գրէ «Թան» իր ապրիլ 5ի թուով , նամակի մը զոր Հընչակեան Քոմիթէին Պոլսոյ գործադիր մասնաձեւը զրկած է Հայոց Քաղաքական ժողովոյ նախագահ Տատեան Արթիւր փաշային , եւ օրինակ մըն ալ Հայոց պատրիարք Օրմանեանին :

«Օրմանեան արքայիսկոպոսը նորէն իր հրաժարականը տուաւ Հայոց Պատրիարքութեան , եւ Ձեր Վսեմութիւնը նորէն կ'սկսի իր զեքը խաղալ զայն ստիպելու համար որ հրաժարականը ետ առնէ :

«Երբեք մեր ազգային Սահմանադրութիւնն ու մեր եկեղեցւոյն օրէնքները այնքան ոտնակոխ եղած չէին , երբեք հայ ազգը այնքան հալածուած , տառապած ու վայրագօրէն չարչարուած չէր որքան Օրմանեան սրբազանի պատրիարքութեան եւ Ձեր Վսեմութեան վարչակազմութեան օրով :

«Հետեւաբար Հնչակեան յեղափոխական ջոմիթէն իրեն պարտք կը համարի ներկայիս Ձեր Վսեմութեան ազգաբարել թէ վճռողաբար որոշած է Օրմանեան սրբազանը հեռացնել պատրիարքութենէ եւ Ձեր Վսեմութիւնը քաղաքական ժողովոյ ատենապետութենէ , եւ թէ՛

հակառակ պարագային՝ մահուան պատիժը պիտի գործադրուի Ձեր Վսեմութեան եւ Օրմանեան Սրբազանին դէմ :

«Բոմբիթէն միանգամ ընդ միշտ պարաք կը համարի Ձեր Վսեմութեան ազգարարել որ եթէ այս նամակը կառավարութեան յանձնուի եւ եթէ մեր խեղճ ազգին դէմ հալածանքը, չարչարանքը եւ խառութիւնները վերսկսին, Ձեր Վսեմութիւնը պտտասխանատու պիտի բռնենք ատոնց, եւ մահուան պատիժը պիտի գործադրուի :»

Օրմանեանը մօտէն ճանչցողներ Պոլսէն մեզի կը հաղորդեն թէ Օրմանեան իր ընդունած այս նամակը ոչ մէկու չէ յանձնած, հնազանդելով Հնչակեան կուսակցութեան պատուէրին : Տատեան փաշան, ընդհակառակն, փութացած է կառավարութեան յանձնել այդ նամակը, եւ — ճղճիմ բայց նշանակելի մանրամասնութիւն, — անմիջապէս ընդունած է Սուլթանէն իր եւ իր տղուն չլճարուած ամսականները ամենը մէկէն :

Le Journal de Genève, իր ապրիլ 7ի թուով Պոլսէն ուղղուած թղթակցութիւն մը կը հըրատարակէ, որուն մէջ թղթակիցը, անխմաստ գտնելէ յետոյ Օրմանեանի զրկուած սպանաւ պիբը, շատ հասկանալի կը նկատէ Տատեանին ուղղուած սպանաւիքը :

«Ոչինչ աւելի անիմաստ է, կը գրէ, քան այսպիսի նամակ մը զրկել Օրմանեան Սրբազանի պէս պատրիարքի մը որուն անձնութիւնը դէպ ի իր հովուած հօտը իր պատրիարք ընտրուելէն ի վեր քանի քանի անգամ յայտնուած է ամենէն տաղնապալից պարագաներուն մէջ եւ որ ուրիշ նպատակ չունի բայց եթէ հաշտեցնել իրեն յանձնուած շահերը օսմանեան կառավարութեան շահերուն հետ, զժուարի՛ն գործ, զոր կատարած է եղական թաքթով մը (!) : Իայց նմանօրինակ նամակ մը զրկուած է, շատ իրաւացի կերպով, Արթին փաշա Տատեանին, Արտաքին գործոց նախարարութեան պետական փոխ-քարտուղար եւ Հայոց քաղաքական ժողովոյ ատենապետ, զոր իր ազգակիցները կը նկատեն, եւ բոլորովին չեն սրխալիլը, իբրեւ մասնից մը, որ իր անձնական շահերը միայն նկատողութեան կ'առնէ եւ որուն ստրկական հաճոյակատարութիւնը հանրածանօթ է :»

Այս ծանրակշիռ եւ Տատեանի համար շատ վտանգաւոր տողերը Le Journal de Genèveի պէս լուրջ լրագրի մը մէջ, շատ շահեկան են, եւ շահեկան՝ անով մանաւանդ որ թղթակիցը ուղղակի Օրմանեանէն ներչնչուած ըլլալու հաւանականութիւններ կան : Օրմանեան կը սկսի ուրեմն վրէժը լուծել իր «չար ոգի»էն, այն անձէն որուն խորհուրդները վինքը բարոյս պէս սպաննեցին ազգին առջեւ : Ըսողներ ալ կան թէ Օրմանեան այս բոլոր ընթացքը կը բռնէ իր կտորած ժողովրդականութիւնը վերաբին ձեռք ձգելու եւ Ստոյ կաթողիկոս ընտրուելու համար : Խնդիր է գիտնալ թէ ազգը պիտի ուղէ՞ փորձեալը կրկին փորձել :

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ ՄԸ

— 0 0 —

Ա. Զօպանեան խնդրեց Ligue des droits de l'homme et du citoyen էն որ իր հովսնաւորութիւնը չնորհէ գրական եւ երաժշտական ցերեկոյթի մը որ պիտի տեղի ունենայ յունիսթի շարաթ օրը, ի նպատակ Հայաստանի հազարաւոր որբերուն : Զօպանեան այս գաղափարը յղացած էր երկու տարի առաջ, եւ Լահէի ղեսպանախորհուրդին ատեն, ներկայացուցած էր զայն՝ Փրանքօ-հայկական ընկերութեան, բայց այդ միջոցին Յրանսա Տրէյֆիւսի խնդրոյն ամենէն տաղնապալից փուլին մէջ գտնուելով՝ Պ. Լաւրիս խորհուրդ տուած էր այդ գաղափարին իրագործուիլ յետաձգել : Այժմ, Ligue de droits de l'homme սիրով հաւանած է իր հովանաւորութիւնը չնորհել այս հայկական ցերեկոյթին : Պ. Բոռէլ հաճած է Վոսվիլի թատրոնը ձրաբար տրամադրութեան տակը դնել այս ցերեկոյթին, եւ անձնապէս աջակցել անոր կազմակերպութեանը : Այս ցերեկոյթով Զօպանեան նպատակ ունի ոչ միայն քիչ մը նիւթական օգնութիւն հասցնել մեր որբերուն, այլ նաեւ այս առթիւ Հայոց բանաստեղծութեան եւ երաժշտութեան վրայ գաղափար մը տալ ֆրանսական հասարակութեան : Բարիքի ամենէն նշանաւոր արուեստագէտները պիտի մասնակցին այս ցերեկոյթին : Մեր յառաջիկայ թուով պիտի հրատարակենք մանրամասնութիւնները :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— 0 —

— Բէւ-Լաչէզի գերեզմանատան մէջ վերջերս տոթիթ ունեցանք տեսնելու այն սիրուն գերեզմանաքարը զոր տիկին Թիւյսիւզեան դնել տուած է իր ամուսնին մարմնոյն վրայ եւ որ հայերէն ու Փրանսերէն տառերով կը կրէ հանգուցեալին անունը : գերեզմանաքարը զարդարուած է ծաղիկներով, որոնք միշտ կը նորոգուին այրիին խնամքներովը : — Ինչ որ պարզ կին մը կ'ընէ իր ամուսնոյն յիշատակին համար, ցաւալի է մտածել որ ամբողջ Բարիքի հայ գաղթականութիւնը դեռ չէ ըրած Գրիգոր Օտեանին համար, որուն գերեզմանաքարը դեռ ո եւ է արձանագրութիւն չի կրեր, եւ խոտերու մէջ անխնամ մոռցուած մնացած է : Փոխանակ հրատարակելու հին նամակի յաճախ անիմաստ կտորուանքներ որոնք այդ ազնիւ գրագէտ-ազգասէրը ծիծաղելի կը դարձնեն, Պ. Չերազ շատ աւելի լուրջ բան մը ըրած կ'ըլլար, — եւ պարտականութիւն մը կատարած, — եթէ այս անխուսափելի դիտողութիւնը գոնէ անգամ մը ներկայացուցած ըլլար մինչեւ հիմա :

— Մաթիաս Տիւվալ իր այս տարուան դաս-
ընթացքը աւարտեց ջղային գրութեան մա-
սին կատարուած վերջին գիւտերու ուսումնա-
սիրութեան նուիրուած դասախօսութեամբ մը,
որուն մէջ երկարօրէն յիշեց Երուանդ Մանու-
էլեանի աշխատութիւնները :

— Անցեալ հոկտեմբերին, Մանուէլեան բա-
րիզի Բժշկական Համալսարանին ներկայա-
ցուցած էր ջղային գրութեան վրայ անտիպ
աշխատութիւն մը, համալսարանը այս փետ-
րուարին «Լուսէս»-ի տիպոգր շնորհեց իրեն :

— Պ. Գրիգոր Բրոֆ-Քալֆայեան հրատարա-
կած է Զօպանեանի «Օրօր» Մայր Հայաստա-
նին» բանաստեղծութեան վրայ իր յօրինած ե-
ղանակը՝ տեղափոխութիւն մը, որուն գինն է Է Ֆր.
Գինել ուղողները պէտք է գիմեն հեղինակին՝
Mr. G. Proff-Kalfeian, 51 Boulevard St. Michel.
Պ. Բրոֆ-Քալֆայեան Վէնսան տ'Էնտիի պաշա-
պանութեամբ՝ մտած է Սքոլա Քանթոուոմ» եւ
բաժնատկան դպրոցը, եւ նուազապարտութեան
դասերու կը հետեւի : Գը հրաւիրենք մեր երա-
ժըշտասէրները որ քաջալերեն այդ պարտը՝
գնելով իր այս հրատարակութիւնը, որուն ար-
դիւնքը իրեն պիտի օգնէ իր ուսումնասիրու-
թիւնները շարունակել կարենալու :

— Մանչէսթրէն մեզի կը հաղորդեն թէ այդ
քաղաքին հայ տիկիններէն խուժք մը միացած
է Ակումբ մը կազմելու համար, այդ ակումբը
ուսնեցած է արդէն մէկ քանի գրական եւ երաժ-
շտական հաւաքումներ : Այս սիրուն նորութիւնը
կ'արձանագրենք հաճոյքով :

— Մարտիլիայէն մեզի կը գրեն թէ տեղուոյն
Հայոց «Ընթերցասիրաց ընկերութիւնը» վե-
րակազմուած է ու վերջերս նոր սրահ մը վար-
ձած է իբրեւ ընթերցարան-ժողովավայր, ուր
այսուհետեւ կանոնաւոր հաւաքումներ տեղի
պիտի ունենան : Ընկերութեան ընդհանուր
ժողովին նախագահ ընտրուած է Պ. Վահան Թէ-
քեան :

— Էտիար Շահինի ցուցադրութիւնը ամենա-
մեծ յաջողութիւն գտած է Լոնտոնի մէջ : 20—
30 անգլիական թերթեր ջերմ գովեստներով
խօսած են հայ արուեստագէտին կենդանի եւ
ինքնատիպ ապրանքին վրայ :

Վերջին պահուն, Բարիզի «Լը ժուռնալ»
թերթին մէջ, Ֆրանսայի ամենէն խորատես
ու խստապահանջ գեղարուեստական քննադա-
տէն, Կիւսթավ Ժեֆուուայէն, հետեւեալ տո-
ղերը կը գտնենք այս տարուան Սալոնին մէջ
ցուցադրուած Շահինի փորագրութեանց մա-
սին. «Ինքնատիպ փորագրութեանց մէջէն», Պ.
Շահինիները, բուանթ-սէշներ եւ օ-ֆորթներ,
բոլորովին ուրոյն տեղ մը կը բռնեն, գծուած-
քին որոշակամութեամբը, ձեւին ամփոփ-
մամբն ու ձերմակներու եւ սեւերու ճիշդ բա-
ժանմամբը : Արուեստագէտը ոչ միայն պղինձը
փորելու քաջավարժ է, այլ եւ տեսնել գիտ-
ցած է, եւ ցոյց տալու կարողութիւնը ունի :
Դէմքերն ու տեսարանները խուզարկել գիտէ,

եւ մեր հայեցողութեանը կ'ընծայէ այն նուրճ
եւ ուշագրաւ պատկերները զոր կրցեր է իրա-
կանութենէն արտահանել, «Բարձով կինը»,
«Պառաւը», «Շաթօ-Ռուժը», «Շրմինօն», եւն : »

— «Revue des Revues», իր մարտ 1-ի թուոյն
մէջ կը վերսկսի օտար հանդէսներու վերլուծ-
ման շարքին մէջ, «հայ հանդէսներու» յատկա-
յընել բաժին մը, զոր այնտեղ ստեղծած էր
ողբացեալ «Տիգրան Երկաթը» :

Երիտասարդ եւ տաղանդաւոր հայ գրագէտ մըն
է որ կը շարունակէ «Երկաթին սկսած գործը :
Առաջին հատուածը նուիրուած էր «Անահիտ»-ի,
«Նոր կեանք»-ի եւ Պոլսոյ «Մասիս»-ին :


— Հունգարիոյ Սամուզլվար քաղաքը հրա-
տարկուող «Արմէնիա» հունգարերէն թերթը
իւր վերջին թուոյն մէջ կը պարունակէ հուն-
գարերէն թարգմանութիւնը Ա. Չ. Ի «Երկնքին
ճամբան» հեքեաթին :

— «Մշակէն» կ'իմանանք թէ տիկին Թա-
զուհի Բերբերեան, Բարիզի հայ ուսանողու-
թեան համակրելի անդամներէն մին, պիտի
մասնակցի 1900-ի տիեզերական ցուցահանդէսի
«Կնոջական հաստատութեան համաժողովին»
«Տաճկահայ կնոջ ընկերական կացութեան»
մասին ուսումնասիրութեամբ մը :

— «L'Arménie»-ի վերջին թուոյն մէջ կը կար-
դանք որ Պ. Չերազ ալ պիտի մասնակցի ժողո-
վրդական աւանդութեանց Համաժողովին :
Որպէս զի երկու հայ մասնակցողներ միեւնոյն
բանը չկրկնեն, պարաք կը համարինք այժմէն
յայտնել թէ Զօպանեան այդ համաժողովին
հատար իրեն մասնաւորապէս նիւթ ընտրած է
Հայոց «ժողովրդական երգերն ու հեքեաթները» :

ՆՈՐ ԹԵՐԹԵՐ . — Վառնայի մէջ մարտ 13-ին
սկսաւ հրատարակուիլ երկշաբաթաթերթ մը՝
գրական, գիտական եւ ազգային, «Շաւիղ»
անունով, տնօրէնութեամբ մեր բարեկամնե-
րէն Տր. Յ. Ս. Փափագեանի : Առաջին թիւը կը
պարունակէ յօդուածներ Ե. Սրմաքէշիանեանի,
Տր. Յ. Ս. Փափագեանի, Գամբր-Արշալէրի, Տիգ-
րան Աճէմեանի, Ազախի : Տարեկան բաժանոր-
դագիրն է, 10 Ֆր. Պուլկարիոյ եւ 12 օտար եր-
կիրներու համար, հասցէ՝ Pensionnat Armé-
nien, Varna.

— Մանչէսթրի մէջ, կրօնական երկշաբա-
թաթերթ մը սկսած է հրատարակուիլ, «Հայաս-
տանեայց եկեղեցի», խմբագրութեամբ Հ. Թորոս
քն. Ջուղայեցիի : Առաջին թուոյն մէջ Գրիստոսի
եւ Արգար թագաւորին թղթակցութեան մասին
բաներ մը տեսանք : Հաւանական է որ յառա-
ջիկայ թուով Արարատի վրայ կանգ առած
«Նոյայ տապանին» մէկ հասակոտորին լուսա-
նկարը տեսնենք :



7


Պ. ՉԵՐԱԶ ԵՒ ՀԱՆՈՐԹ



«L'Arménie» ի վերջին թուոյն նախօրո՞ւ-
ծին մէջ կը տեսնենք Պ, Հանոթօյի անունը
համակրանքով յիշուած, այդ զգուշի Ֆրանսա-
ցիին մէկ յօդուածին առթիւ («Բայամ») որ
այդ նախկին նախարարին արեւելեան քաղա-
քականութեանը անդիտակից դատապարտու-
թիւնն է եւ ուրիշ ոչինչ: Ինչ ալ ըլլայ. ան-
հասկանալի եւ անհերքելի կը գտնենք որ
Հայ մը, եւ «հայրենասիրական լրագիր հրա-
տարակող Հայ մը», ո եւ է տեսակէտով, ո եւ է
առիթի մէջ, համակրանք յայտնէ այն ան-
սիրտ եւ անբարոյական Ֆրանսացիին, որ
Սուլթան Համիտին մեղսակիցը եղաւ հայկա-
կան ջարդերուն մէջ, եւ որուն անունը բոլոր
ազնիւ Ֆրանսացիները նողկանքով կ'արտա-
սանեն:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ



Առաւել քան երբեք մրրկալից է քաղաքա-
կան հորիզոնը: Անգլիա իր թրանսփառան
պատերազմին հսկայական գծուարութեանց ու
վասնգնորուն մէջ խորասուզուած է, եւ զեռ
յայտնի չէ թէ ո՞րքան ասան պիտի դնէ այդ
գծուարութեանց լիովին յաղթելու համար. եւ
որովհետեւ Պօէրները անվհաս են՝ հակառակ
մէկ քանի մեծ պարտութիւններու, եւ զեռ
ուժի ու հաւատքի խոշոր պաշար մը կը պա-
ռեն անեղծ, նոյն իսկ յայտնի չէ թէ ի՞նչ
պիտի ըլլայ վերջնական լուծումը անգլո-թը-
րանսփառան խնդրոյն: Անգլիա պիտի յաջողի՞
ջնջել թրանսփառի եւ Օրանի անկախութիւ-
նը, միջամտութիւն մը բնաւ տեղի պիտի չու-
նենա՞յ: Միացեալ Նահանգաց մէջ ի նպաստ
Պօէրներու միջամտութեան բաղձանքը շատ
գօրացած է. Միացեալ Նահանգաց նախա-
գահութեան ընտրելիները իրենց ծրա-
գրին մէջ կը գնեն ամբողջական միջամտու-
թիւնը ինպաստ Պօէրներուն: Անգլիոյ այս
կացութենէն օգտուելով, Ռուսիա ամէն կող-
մէն իր տիրապետութիւնը տարածելու ջանքեր
կը բազմապատկէ. Պարսկաստանի փոխաւու-
թիւն մը ընկելով եւ անոր ելեւմուտքին վե-
րատեչութիւնը իր ձեռքն առնելով, Պարսկաս-
տանը արդէն ռուսական նահանգ մը դարձուց.
Երկարատեւ բանակցութիւններէ յետոյ, Սուլ-
թանը ստիպեց ընդունիլ որ Մեծ Հայաստանի
մէջէն երկարող երկաթուղիի գծին արտօնու-
թիւնը տարամերժօրէն ռուսական ընկերու-
թեան մը շնորհուի, վերջին հեռագիր մը կը
ձանուցանէ թէ համաձայնութիւնը այժմ կա-
տարեալ է ռուս կառավարութեան եւ սուլթա-

նին միջեւ. ուրեմն Մեծ Հայաստանի Ռուսիոյ
կողմէն խաղաղական գրաւումը կատարուած ի-
րողութիւն մըն է արդէն: Պուրկարիա բոլորու-
վին Ռուսիոյ զիւրիւն ինկած է, եւ կ'ըսուի թէ
ռուս-պուրկար զինուորական գաղտնի դաշնակ-
ցութիւն մը կ'սքուած է վերջերս. Ռուսիա
կ'ուզէ Պուրկարի նաւահանգիստը գրաւել. եւ
պուրկար թերթերը կը մտածեն թէ փոխանակ
սպասելու որ Ռուսիա բռնի զայն գրաւէ, լաւա-
գոյն է որ Պուրկարիա կամաւորապէս զայն թո-
ղու Ռուսիոյ որպէսզի փոխարինութիւններ կա-
րենայ ընդունիլ ատով. Պուրկարիոյ պատերազ-
մական նախարարը այս օրերս Ս. Բեթրապուրի
գնաց: Ռուսիա կ'ուզէ Տարտանելի բերանը կըղ-
զի մը, Լեմնոսը կամ Միաիլլին, գրաւել. ռու-
սական զօրագունները կը խտանան Կովկասի
մէջ: Թերեւս հետու չըլլայ այն վայրկեանը
ուր Օսմանիան պետութեան բաղդը վերջնա-
պէս պիտի լուծուի: Ամենակարեւոր դէպքերու
պատահելուն սպասելու իրաւունք ունինք:

ՊԱՏՈՒՆՅԱՆ ԵՐԵՒԱՆՑՔ ՄԸ



Մայիս 12ի շաբաթ իրիկ լեր, Բափե Վոյքեռի
մեջ տեղի պիտի ունենայ ի պատիւ Մանուէլեա-
նի եւ Էսխար Շահիսի նաշիւրոյք մը, ուր մեր
երկու սաղանդաւոր հայրենակիցներուն մեքիթ-
ները պիտի հաւաքուին տեղում այն հոշակապ
յացողութիւնները գոր անոնի ունեցան, մին՝ գի-
տաբան, միւսը՝ գեղարուեստի մեջ: Մեկ կը
փափայեիմք որ նաշիւն յետոյ Բարիզի հայ գաղ-
թականութեան եւ հայ ռուսանորութեան արեւ
անոնի որ գիտեւ զնահասէր հայ սաղանդիկն այս
երկու փառաւոր ներկայացուցիչները, գայիկ ի-
րեկց հանակրակը յայտնէր անոնց: Իսկ այն բոլոր
ճակօթ կաւ անձակօթ բարեկամները որ հեռուէն
կ'ուզեւ մասնակցիլ այս հանդիսաւորութեան.
Կարող եւ իրեկց նախկը կաւ հեռուցիրը յիկեղ
«Անահիտ» հասցիկն: Մանուէլեան եւ Շահիկ
երոպակաւ հեղինակութեանց կողմէ գսան ար-
տաւոյնր զնահասոււ մը՝ իրեկց առաջիւ փոր-
ձեւեկ իսկ, անոնի մեր գեղիկն մտաւորական ու
գեղեցիագիտական կարողութեանց վրայ եւրոպաց-
ւոց տրիկն անեկարար գաղափար մը. մեր պար-
տականութիւնն է գիրեկի հրապարակաւ շնորհա-
ւորեղ ու իրեկց մեր երախտագիտութիւնը յայտնէր
այն բարոյական անգիկն ծառայութեանը համար
գոր մասնագիկն մեր գեղիկն: Այս երեկոյքը պիտի
ըլլայ ուրեմն տեսիլ մը հանդիս ի պատիւ Հայ
Մսիկն:

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԲՍՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

«Անահիտ» ընդունած է՝

Ա. Յ. (Տամիթ) 5 Փր., «Արամ Արամեանի յիշատակին» իր բարեկամներէն մին (Ֆրեսո) 25 Փր., 3արու-
թիւն Հանէսեանի ձեռքով ժողովուած (Դասիրէ) 115
դասեկան, այսինքն 29 Փր. 80 սն. (Յ. Հ. 20 դաս. Յ.
Խ. 15 դաս., Պ. Պ. 15 դաս., Պ. Պալ. 15 դաս., Մ. Չ. 10
դաս., Վ. Ղ. 10 դաս., Ղ. Կ. 10 դաս. Վ. Թ. 10 դաս., Յ.
Տ. 10 դաս.):

Մ. Մ. (Բարիզ) 5 Փր., Նանսիէն, Տր. Յ. Ա. ի ձեռքով, 17 Փր.
(Mme Deny, 1 Փր., Դ. 3 Փր., Զ. 1 Փր. 50, Բ. 3 Փր.,
Մ. 3 Փր., Ս. 2 Փր. 50, Տր. Յ. Ա. 3 Փր.):

Պ. Իսքէնտէր նուիրած է իր կողմէն 50 Փր., և ընդունած
է՝ Տիգրան Մ. Է. (Սոճաք) 5 Փր., Տր. Պողոս Բօլջևանի
7 Փր.:

«Ligue des droits de l'homme» ը ընդունած է, 100 Փր.
«Մանրէլիէի ուսանողութիւններէն»՝ Պ. Մոռաւա, Ligueին
ընդհանուր քարտուղարը, այդ գումարը զրկած է Պ.
Իսքէնտէրին:

Ընդամենը հաւաքուած է ուրեմն, մինչեւ այժմ 29½
Փր.:

Մեզի Պոլսէն կը հաղորդեն թէ՝ «Հայկական Միու-
թիւն» ը իր ուղղակի ընդունած նուիրատուութիւննե-
րէն կազմուած գումարը կրցած է արդէն հասցը-
նել Պոլսոյ բանտին մէկ քանի շատ հիւանդ վիճակի
մէջ գտնուող բանտարկեալներու:

Մեր հանդանակութիւնը կը շարունակուի:

Դիտել կուտանք, առանց ու եւ խորհրդածութեան
նեղութիւնը յանձն առնելու, թէ Բարիզի հայ դաշխ
կանութիւնը և հայ ուսանողութիւնը, դրեթէ ամբող-
ջութեամբ անտարբեր ծնացին՝ այս հանդանակութեան
հանդէպ...

Բարեկամե՛հ զուգարիպութեամբ մը, ֆրանսական
«Revue des Revues» հանդէսը իր Ապրիլ 1 թիւոյն մէջ
հրատարակած է ընդարձակ յօդուած մը հայ բանտար-
կեալներու քաշած չարչարանքներուն վրայ՝ հայկական
խնդրոյն ծագումէն մինչեւ այսօր, մասնաւորապէս 95-
97 թ տազնապի միջոցին՝ կը յանձնարարենք մեր ըն-
թերցողներուն կարգաւ այդ յօդուածը, զոր հաղորդե-
ր են երկու Հայեր որոնք կը ստորագրեն * * * և, եւ որ
սարուեցնող մանրամասնութիւններ կը պարունակէ թըր
քական բանտերու ու ժիմին վրայ: Թերեւս այդ ընթեր-
ցումը ոմանց համար դրդիչ մը ըլլայ՝ օգնութիւն մը
հասցնելու այս պահուստ բանտի մէջ գտնուող Հայերուն,
որոնք եթէ հայկական տաղնապի միջոցին տիրող բան-
տական դրութեան ենթարկուած չեն, ունին սակայն
կացութիւն մը որ այլ ապէս դառն ու ցաւազին է:

«Revue des Revues» ի յօդուածը կոչուած է մեծ յու-
զում յառաջ բերելու, ոչ միայն իր քառանկողին
պարունակութեամբը, այլ և իր ձօնովն ու իրեն ընկե-
րացող ծանօթութեամբը: Ահաւասիկ այդ ձօնը՝ «Ա. Պ.
Էմիլ Լուպէ, Նախագահ ֆրանսական Հանրապետութեան,

Նիշանը լմթիազով պատուանշանուած, և իր հայրենի-
քին գերագոյն սկզբունքները, Ազատութիւն, Հաւա-
սարութիւն, Եղբայրութիւն, Երկրին մէջ ու երկրէն դուրս
յարգել ու սիրել տալու պաշտօն ունեցող:» Եւ ահա
ծանօթութիւնը, զոր խմբագրութիւնը աւելցուցած է:

«Նախ եւ առաջ այս նոր «Չարչարանքներու պարտե-
զ»ին արհաւիրքներէն զարհուրած, կարծեցինք թէ
այս յօդուածին երկու հայ հեղինակները իրենց ցաւին
ազդեցութեան տակ ցնորատեսութիւններու զո՛հ են ե-
ղած՝ փափաքելով արդար ըլլալ, նոյն իսկ անոր նը-
կատմամբ զոր մեծ կլլատութիւնը «Թագապի Մարդասպան»
մականունանց, խնդրեցինք մեր ողբացեալ աշխատակից
և բարեկամ «Տիգրան Երկաթ»էն որ տեղւոյն վրայ
ստուգէ Սուլթանին վերագրուած այս բազմութիւ ոճիր-
ներուն վաւերականութիւնը: «Տիգրան Երկաթ» պահ մը
ընդհատեց աշխատութիւնը զոր մեր «Հանդէս»ին համար
պատրաստելու վրայ էր «Տաճկաստանի ապագայ»ին մա-
սին (տես «Revue des Revues» 15 յուլ. եւ 10 օգոս.
1899) և հայ բանտարկեալներու մարտիրոսագրութիւնը
մօտէն ճանչնալու զբաղեցաւ: Այն տեղեկութեանց քով
զոր մեզի հաղորդեց, այս մանրամասնութիւնները զոր
կը հրատարակենք այսօր՝ դրեթէ մեզմ ու մարդասիրա-
կան կը թուին: Վախալով որ չափազանցելու մեղադր-
րանքը չընեն մեզի, կը բաւականանանք մեր հասարա-
կութեան աչքին առջեւ գնելով այս ըստը ոճիրները
զոր թուրք կառավարութիւնը արձակ համարձակ կը
դարձէ, և զոր Պ. Գինսթան, մեր արդի գեսպանը, իրա-
ւունք չունէր անդիտանալու: Դատ ցաւալի է որ Պ.
Գինսթան Էնտոշինի «անշահախնդիր նախկին կառավա-
րիչ» իր համբաւին փափաքել կը թուի «սրտետ» դի-
ւանագետի դարձնելու աւելցնել: Մնչու շատ այս ողբալի
«սրտետեսութիւն» է որ իրեն թելադրած է ֆրանսական
կառավարութեան պետին պատիւը վստահելու զաղափարը
զայն մղելով ընդունելու պատուանշան մը զոր վիթխո-
րիս թագուհին մերժած էր:

Եւ, ցաւազին անարգա՛նք՝ ֆրանսայի արժանապատու-
թեանը եւ ժողովուրդներու խղճին, Պ. Լուպէ, որ սա-
կայն բարի մարդն է գերազանցապէս, կը նուստանայ՝
մինչեւ բարի վարուց մրցանակ մը ընդունելու աստի-
ճան տիեզերքի մեծագոյն ոճրագործին ձեռքէն, այն
վեհապետին ձեռքէն զոր նոյն իսկ մեր դեսպանը (Պ. Գալ-
պոն) ամբաստանեց իբրեւ ստախօս և մարդասպան: Այլ
ևս չեն բաւականանար առաջնակարգ գահիճ մը գահի
վրայ հանդուրժելով: Հանրապետութեան մը նախագահը
կը ստորնանայ՝ անոր պատուանշանը կրելու չափ:

«Մեր դիւանագետութեան այս ընթացքը հաւանակա-
նաբար իր արդիւնքը պիտի ունենայ: Ան պիտի անուա-
րակոյս յաջողի վերջնապէս քանդելու ֆրանսայի ու-
նեցած բարի համբաւն ու վարկը՝ Արեւելքի մէջ, որոնք
արդէն Պ. Հանսթոյի եւ Ֆելիքս Գուսի օրով հզօրապէս
խախտած էին:»



Le Gérant: GEORGES WALINE

Paris. — Imp. V° ALBOUY, 75, avenue d'Italie.

Լոյս տեսաւ
ԱՋԻԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԻԾԻ
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ ԳԻՐԿԸ
56 երես 16 պատկերներով եւ երկու փայտեղով
Երկու գրքի բաժանորդագինն է՝ 10 ֆրանք, մի գրքինը 5 ֆրանք
Հասցէն՝ M. E. Lalayantz Séminaire Nersissian TIFLIS (RUSSIE)

RESTAURANT
DE
CONSTANTINOPLÉ

ԺԱՅԱԿԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ

3, Place de la Sorbonne, 3

Ouverture 7 Avril 1900

Բացում 1900 ապրիլ 7ին

Cuisine Française et Orientale
PENSION 60 FR.

Déjeuner 1,25 et diner 1,50
un hors-d'œuvre, un plat de viande,
un plat de légume, un dessert ou fromage,
un demi-setier ou un demi-litre de lait
pain à discrétion

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՒ ՅՐԱՆՍԱԿԱՆ

ԱՄէն տեսակ կերակուրներ

ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆԻԱՐԳԱԽ

ՈՐՈՇ ԳՆՈՎ ՃԱՇԵՐ

(Յորեկը՝ 1,25 . Երեկունը 1,50)

ԲԱՆՍԻՈՆ , ԱՄՍԱԿԱՆ 60 ՖՐ.

SPÉCIALITÉ

Anouchabaur, Caimak, Ekmek-cadaif, Taouk-geuksi, ets.

ԶՈՒԼԱՐԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

Կը ձուլէ , եւրոպական տառերէ զատ , մասնաւորաբար հայերէն ,

տաճկերէն եւ եբրայեցերէն տառեր :

M. Agop Dzerounian, Sophia (Bulgarie)

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 3 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ

ՎԱՌՆԱ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱԻՐԷԺ

ԳԱՀԻՐԷ

ՆԻԻ-ԵՈՐԲ .

ԲՐՈՎԻՏԷՆԱ (Ամերիկա)

ԻՍԹ-ՈՒՅԻՆՆԱ (Մաս . , Ամերիկա)

ՆԻՍՏՐՆԱ (Մաս . , Ամերիկա)

Պարոն Ազեքսանդր Թարխանեանց

» Տր. Յ. Ս. Փափազեան

» Արիս Լազար

» Տր. Կ . Փաշեան

» Աշոտ Սեդրաք

» Պ. Կատարեան

» Նազարէթ Թաթեոսեան

» Մանուկ Գալստեան

» Երուանդ Յակոբեան